

Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ՈՒՐԱԹ
10 ԳՐԱՏԱՐԱԿԻՉ 2014Թ. №25 (333)

**Նյութադաշտություն
հեղափոխականի,
գորակների, հայրենասերի
համար համարել են մեկ
մեր աշխարհի ամենամեծ
ողջություններից:**
ԳԱՐԵԳԻՆ ՆՏՐԵՅ



ԱԼԵԲՍԵՅ ՎԱՍՍԱԿ. «Հայաստանը մեր երկրորդ հայրենիքն է, եւ մենք միասին ենք հավերժ»

Պետական սահման
«Այունյաց երկիրը» իր գործունեության
փառք է ազգային փոփոխության ընթացքում
մշտապես համագործակցել է Մեղրու
սահմանապահ ջոկատի հետ, լուսաբանել
այդ գործառնախ առօրյան, որի գլխավոր
նպատակը հանրապետության հարավային
սահմանի անվտանգության ապահովումն
է: Եվ, բարեբախտաբար, այդ գործառնախ

գլխավորել ու գլխավորում են մարդիկ,
ովքեր իրենց ծառայողական պարտակա-
նությունները պարտասխանաբար
կատարելուց զատ նաև համագործակցել
են տեղական իշխանությունների ու լրատ-
վամիջոցների հետ, ապրել տեղի բնակիչնե-
րի հոգսերով ու մտահոգություններով:
Գնդապետ Անատոլի Շարիֆի ծառայու-
թյան այլ վայր տեղափոխվելուց հետո Մեղ-

րու սահմանապահ ջոկատի հրամանատարի
պաշտոնակատարն է ջոկատի շտաբի պետ,
գնդապետ Ալեքսեյ Յուրեվիչ Վասսակը, ով
տարբեր պաշտոններում ծառայել է Ռուսաս-
տանի Դաշնությունում: Արիության շքանշանի
ասպետ է, պարգևատրվել է «Պետական սահ-
մանի գերազանց պահպանության համար»
մեդալով:
Ջոկատի հրամանատարի պաշտոնակա-
տարի հետ մեր գրույցը հայ-իրանական պե-
տական սահմանի օպերատիվ իրավիճակի,
ինչպես եւ սահմանապահներին առնչվող մի
քանի հարցերի մասին է:
- Պարոն գնդապետ, գրույցը սկսե՞նք
սահմանապահներին առնչվող ու առաջին
հայացքից սովորական, բայց բոլորիս հե-
տաքրքրող մի հարցով. ինչպիսի՞ն է օպերա-
տիվ իրավիճակն Իրան-Հայաստան սահմա-
նում:
- Պետական սահմանում օպերատիվ
իրավիճակը կայուն է, սահմանապահներն
ամենայն պատասխանատվությամբ կատա-
րում են իրենց պարտականությունները: Այս-
պես ձեւակերպեմ. եթե որեւէ մեկը փորձի
ՇԱՐՈՒՆԱՎՈՒԹՅՈՒՆ ԷՅ 3

Ավագ դպրոցի տվածն ավելին չէ, քան միջնակարգինը

Հանրակրթություն
Նոր ուսումնական տարին
Ազարակի միջնակարգ
դպրոցը (տնօրեն՝
Էռնա Բարխուդարյան)
դիմավորեց որոշակիորեն
վերանորոգված
դասասենյակներով, նորաձ
գրադարանով եւ, իհարկե,
առօրյա խնդիրներով:

Համառոտ ակնարկ
Էռնա Բարխուդարյանը ծնվել է 1981թ.
Մեղրիում: Ավարտել է Երեւանի մանկավար-
ժական համալսարանի մանկավարժության եւ
հոգեբանության բաժինը, այնուհետեւ՝ Գորի-
սի պետական համալսարանի պատմության
ֆակուլտետը: 2004 թվականից աշխատում է
Ազարակի միջնակարգ դպրոցում, եղել է մաս-
նագիտացված կրթական աջակցությունների
ՇԱՐՈՒՆԱՎՈՒԹՅՈՒՆ ԷՅ 4



Դիմեք օմբուդսմենին մարզում

Իրավունք
2012 թվականից հանրապետությու-
նում բացված 33 մարզու իրավունքների
պաշտպանի աշխատակազմի վեց մար-
զային գրասենյակից երեքը 2014-ի սկզբից
վերաբացվել է. կրկին գործում է Նաե
Սյունիքի փարածքային գրասենյակը: Կա-
ռույցը զբաղվում է մարզի բնակչության
եւ պետական փոքրեր առյուծակների միջեւ
առաջացած հարցերի կարգավորմամբ:
Գրասենյակը գործում է Կապանում, բայց
սպասարկում է ողջ մարզի բնակչությանը,
անհրաժեշտության դեպքում՝ արագ
արձագանքումներով լինում մարզի այլ
բնակավայրերում: Այստեղ քաղաքացիա-
կան հարցերով եւ քրեական հարցերով
մեկական իրավաբան է աշխատում:

33 մարզու իրավունքների պաշտպանի
աշխատակազմի մասնագետ, Սյունիքի տա-
րածաշրջային գրասենյակի քաղաքացիական
հարցերով իրավաբան Օկսանա Դավթյանը,
ով բացման օրվանից աշխատել է այստեղ,
նկատում է, որ ժամանակի ընթացքում զգա-
լի տեղաշարժ կա մարզում իրենց կառույցին
դիմողների թվաքանակում. «Իհարկե, մարդ-
կանց մեջ մի այսպիսի հոգեբանական պահ
կա. չնայած մարզում գրասենյակ կա, շատե-
րը կարծում են, որ եթե դիմեն ոչ թե մեզ, այլ
միանգամից Երեւան, իրենց խնդիրն ավելի
արագ ու լավ կլուծվի: Բացատրում ենք, որ
միեւնոյն է, եթե դիմումատուն Սյունիքից է,
նրա բողոքը կրկին մեզ է մակագրվելու»:
Շեշտելով, որ մարզու իրավունքնե-
րի պաշտպանին դիմելն անվճար է, տիկին
Դավթյանը պարզաբանում է. 33 յուրաքան-
չյուր քաղաքացի գրավոր կամ բանավոր (նաե
հեռախոսազանգով) կարող է դիմել ՄԻՊ-ին,
եթե իր իրավունքները խախտել են պետական
կամ տեղական ինքնակառավարման մարմին-
ները կամ դրանց պաշտոնատար անձը: Ուրի-
շի իրավունքների պաշտպանության համար
ՄԻՊ-ին կարող են դիմել նաեւ անմիջապես
ներկայացուցիչները կամ օրինական ներկա-
յացուցիչները (ծնողներ, որդեգրողներ, հո-
գաբարձուներ, խնամակալներ), ինչպես նաեւ
խնամակալության եւ հոգաբարձության մար-
մինները: Մեղավորներ ու անմեղներ որոշելու
լիազորություն պաշտպանը չունի, մասնավոր
ընկերությունների կամ անձանց գործողու-
թյունների դեմ կամ մասնավոր կազմակեր-
պության դեմ, ինչպես նաեւ իրավախախտում
չպարունակող, անամուս բողոքները չեն
քննարկվում: Եթե կան բողոքը պարզաբանող
կամ խնդրի լուծմանը նպաստող փաստաթղ-
թեր, քաղաքացին դրանք եւս տրամադրում է
գրասենյակին:
«Հաճախ ենք ունենում դեպքեր, երբ քա-
ղաքացին բողոքում է քաղաքացու դեմ, որոնք
քննարկելու իրավասություն չունենք: Եթե
նման բողոքը բանավոր է, հարցը լուծվում
է խորհրդատվությամբ, որը, անկախ հար-
ցի բնույթից, պարտադիր տրամադրում ենք
դիմողներին: Եթե վիճող երկու կողմն էլ մաս-
նավոր անձինք են, հավասարապես կարող
են ակնկալել պաշտպանի աջակցությունը,
սակայն, երբ վիճում են պետական պաշտո-
նյան ու քաղաքացին, այդ դեպքում միայն
քաղաքացին կարող է ակնկալել պաշտպանի
աջակցությունը»:
Պաշտպանը չի քննարկում դատարանի
վարույթում գտնվող գործերը կամ այն բո-
ղոքները, որոնք ենթակա են լուծման միայն
դատական կարգով (օրինակ՝ անձի մեղքը
կամ անմեղությունը որոշելը, սեփականու-
թյան իրավունքով գույքի տիրապետման
ճանաչումը, գումարային պահանջների վե-
ՇԱՐՈՒՆԱՎՈՒԹՅՈՒՆ ԷՅ 3

Միջազգային շուկայում մեծանում է Շամբի ձեռնարկությունների արտադրանքի պահանջարկը

Տնտեսություն

Չորս տարի է՝ Շամբի ձեռնարկությունները դանդաղ բայց վստահ քայլերով իրենց տեղն են գտնում ոչ միայն հայաստանյան շուկայում, այլև՝ արտասահմանյան: «Այունյաց երկիր» թերթը պարբերաբար անդրադառնում է Տափուսի հանրապետության («Արսեն և Ներսես» ՍՊԸ) և Շամբի պահածոների («Շամբ բիզնես» ՍՊԸ) գործարաններին և ամեն անգամ հաճելիորեն արձանագրում դրանց ձեռքբերումները: Այս պահի դրությամբ կարելի է ասել, որ գործարանները հասել են զարգացման այն մակարդակին, որ միջազգային շուկայում իրենց արտադրանքի պահանջարկն աստիճանաբար մեծանում է:



Ձեռնարկությունները գործում են 2010 թվականից: Հասկանալի է, որ դրա համար հարկավոր էին մեծ միջոցներ, և դիմեցին վարկերի օգնությամբ: Բնական է՝ մեծ շուկա մտնելու համար բավականին երկար ճանապարհ պետք է անցնել, և եթե ասենք, որ միանգամից հնարավոր է հաջողության հասնել, չափազանցություն կլինի:

Անցյալ տարվանից հատկապես Տատնի հանքային ջրերի գործարանի «Դարբաս» լիմիտեդը ու շշալված ջրերն արտահանվում են ԱՄՆ: Այն պահին, երբ այցելեցինք գործարան, փաթեթավորվում էր ջրերի ու լիմիտեդների հենց այն խմբաքանակը, որ պիտի ուղարկվեր ԱՄՆ: ««Դարբաս» լիմիտեդի 4 տեսակ է շշալված ջրեր ենթ ուղարկում, ապրանքն այստեղից տանում են գործարանային գներով, փոխադրումը կատարվում է պատվիրատուի կողմից: Մոտ 20 օրվա ընթացքում այն արդեն լինում է տեղում, պիտանելիության ժամկետը 6 ամսից 1 տարի է, այնպես որ այս

հարցում խնդիր չունենք», – նշում է «Ներսես և Արսեն» ՍՊԸ տնօրեն Ներսես Ստեփանյանը:

Հայտնի ճշմարտություն է, որ Հայաստանը հիմնականում ներկրող երկիր է, և մեր ազգի համար պատիվ է, երբ հայկական արտադրատեսակն իր տեղն է գտնում միջազգային շուկայում: Բացի տեղական լիցենզիայից՝ գործարանները ստացել են նաև միջազգային լիցենզիա, որի համաձայն՝ նրանց արտադրանքը համապատասխանում է եվրոպական չափանիշներին և կարող է արտահանվել: Շուկան ընդլայնվել է, և այժմ լիմիտեդներն ու շշալված ջրերն արտահանում են Ռուսաստան, Բելառուս, Ուկրաինա, Բելգիա, ԱՄՆ, Պարսկաստան: Հեշտ

չէ միջազգային շուկա դուրս գալը, քանի որ արտադրանքը պիտի համապատասխանի միջազգային չափանիշներին, հատկապես պիտակին գրված չափորոշիչները պիտի համապատասխանեն տվյալ երկրներում անցկացվող լաբորատոր ստուգումներին:

«Այս պահին չենք հասցնում որոշ պատվերներ կատարել, բայց պետք է նշեմ, որ հայաստանյան պատվերներն առաջնային պլանում են», – նշեց տնօրենը: Ամսական միջին հաշվով մոտ 300 տոննա լիմիտեդ է ջուր են արտադրում, որից միայն 40 տոննա՝ Հայաստանի համար: 2013թ. օգոստոսի 1-ի դրությամբ ուղարկել են 1000 տոննա լիմիտեդ և ջուր, իսկ այս տարի՝ նույն ժամանակահատ-

վածում՝ 1260 տոննա: «Մայրաքաղաք ուղարկելու հիմնական խնդիրն այն է, որ պատվիրատուները շատ հաճախ ստվերային գործունեություն են ծավալում և խուսափում են ապրանքագիր ներկայացնելուց: Մինչդեռ Այունիքում հարմարվել են մեր աշխատելաժամին և գիտեն, որ մենք ոչ մի չիչ առանց ապրանքագրի չենք տալիս: Մեկ անգամ էլ են ասել՝ ես նույնիսկ մեկ չիչ ջուր, առանց մուտքագրելու, մեր տուն չեմ տանում», – նշեց տնօրենը:

Փոխադրման ընթացքում, իհարկե, ունենում են դժվարություններ, մասնավորապես այս տարի Վերին Լարսի ճանապարհի՝ որոշ ժամանակով փակ լինելը որոշակի խնդիրներ ՇՈՐՈՒՄԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՏ 13

Լուրեր

Վստ Այունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունից ստացած տեղեկությունների՝ 2014թ. մարզում դպրոցին հրաժեշտ է տվել 1315 շրջանավարտ (2013-ին՝ 1445 շրջանավարտ), նրանցից 775-ը՝ մարզային ենթակայության դպրոցներում: 2013-14 ուսումնական տարում մարզն ունեցել է 14 մեդալակիր, իսկ ընդունելության քննություն հանձնած 690 դիմորդից 580-ը ընդունվել է հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ: 2014-15 ուսումնական տարում առաջին դասարան է հաճախել 1555 աշակերտ. 2013-14 ուսումնական տարվա համեմատ նրանց քիվն աճել է 46-ով: Այս տարի մարզում փակված, նոր բացված կամ կարգավիճակը փոխած դպրոց չկա: Այունիքում 2014-ին գործում է մինչև 10 աշակերտ ունեցող 14 դպրոց՝ Վարդավազի, Տավրուսի, Ն.Հանդի, Ճակատեմի, Աղվանի, Բարձրավանի, Սոֆլուի, Մուգքի, Բնունիսի, Լժեմի, Տորունիքի, Արեւիսի, Բալաքի, Տաշունի:

Հոկտեմբերի 6-ին Կապանի քաղաքապետարանում տեղի ունեցավ համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհրդի հերթական նիստ, որին մասնակցում էին նաև տարբեր ուսումնական հաստատությունների ուսանողներ: Ամփոփվեցին մախորդ նիստի ժամանակ հայտարարված «Ես սիրում եմ Կապանը, որովհետե...» և «Կապանն իմ աչքերով» խորագրով մրցույթի արդյունքները: Առավելագույն ձայն հավաքած լուսանկարներն ու գրությունները կներկայացվեն Կապանի նվիրված տեսահոլովակում:

Հոկտեմբերի 2-ին Կապանի քաղաքապետարանի դահլիճում ՀՀ-ների, ՏԻՄ-երի և հետաքրքրված այլ կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպեցին Հայաստանում եվրոպական միության պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Հոա Բին Աժեմյանը, կառույցի այլ աշխատակիցներ: Պարոն Աժեմյանը նշեց, որ չնայած Հայաստանը պատրաստվում է միանալ Եվրասիական տնտեսական միությանը, Եվրամիությունը շարունակում է համագործակցությունը ՀՀ-ի հետ. տարբեր ծրագրերի ֆինանսավորման համար ԵՄ-ը Հայաստանում 50 մլն եվրո ներդրում է կատարում, իսկ այս պահին ընթացքի մեջ է 150 ծրագիր տարբեր ոլորտներում՝ ՓՄԶ բնագավառ, արդարադատություն, քաղաքացիական հասարակություն՝ ՀՀ-ների զարգացում: Քանի որ ներկայացված հայտերի 2/3-ը չի քննարկվում հիմնական տեխնիկական սխալ ներկայացված ծրագրերի պատճառով, հանդիպման երկրորդ բաժինը ներառում էր հարցուպատասխան մասնակցների հետ ու փորձագետի կողմից սեմինար-խորհրդատվություն ինչպես ճիշտ ծրագիր ներկայացնել: Պատվիրակության աշխատակից Մոնիկա Պապյանը, նշելով, որ Այունիքից դիմողներն ու շահողները քիչ են, խորհուրդ տվեց արդյունավետության համար մեծակ չդիմել, ստեղծել մի քանի կառույցների դաշինքներ: Մեկ ծրագրի բյուջեն կարող է լինել 50 000-200 000 եվրոյի շրջանակում, որում հայտատուի 5-10 տոկոս համաներդրումը պարտադիր է: Պատվիրակության անդամները հանդիպեցին նաև Այունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի և քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի հետ՝ ներկայացնելով մարզում ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերը:

Կապանի N2 ավագ դպրոցի նորակառույց շենքը շահագործման հանձնվեց

Նորանոս

Կապանի N2 ավագ դպրոցի նորակառույց շենքը հոկտեմբերի 6-ին իր դռները բացեց աշակերտների առջև: Հիշեցնենք, որ 2011թ. հուլիսի 17-ին ամրացման աշխատանքի ընթացքում շենքը փլուզվել էր, բարեբախտաբար փուժածներ չկային: Դպրոցի 2-նարարական աշխատանքները սկսվել են 2011թ. նոյեմբերից, պատվիրաբուն՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկն է, իսկ աշխատանքները կատարել է «Սիսիանի նոր բակ նորոգչին» ԲԲԸ-ն: Նախապես հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունը մինչ դպրոցի փլուզումը պիտի կատարեր հիմնանորոգման աշխատանքներ: Բայց, ինչպես ասում են, շաբաթն



ուրբաթից շուր եկավ, և շենքի փլուզումից հետո «Քվե» ՍՊԸ-ի նոր նախագիծը մրցույթում հաղ-

թող ճանաչվեց, ըստ որի՝ սկսվեցին շինարարական աշխատանքները:

Հին դպրոցի ապամոնտաժման, դպրոցի կառուցման ու ամրացման աշխատանքների համար ծախսվել է 724 մլն դրամ գումար, իսկ մարզադահլիճի ամրացման և հիմնանորոգման համար՝ 144 մլն դրամ: Նշենք, որ ՀՀ կառավարության որոշմամբ հիմնանորոգման աշխատանքներից առաջ պետք է պարտադիր կատարվեն ամրացման աշխատանքներ: «Ներկայումս չենք ամբողջովին պատրաստ է շահագործման, և դասապրոցեն ընթանում է միանգամայն հարմարավետ պայմաններում: Նախկին ենթակայանի շենքն ապամոնտաժվել է, սպասում ենք նախագծին՝ նոր ճանապարհ կառուցելու համար», – նշեց շինարարական կազմակերպության տնօրեն Սամսոն Մաթեոսյանը: Դպրոցի գույքը ձեռք է բերվել ՀՀ սոցնեղորումների հիմնադրամի միջոցներով, դասարաններն ապահովված են համապատասխան գույքով: Դպրոցում տեղադրվել են տեսախցիկներ, որոնց միջոցով վերահսկվում է անցուղարձը: Տնօրենի կարծիքով՝ դպրոցի նորակառույց շենքի պաշտոնական բացում անպայման կլինի: ԱՐՄԻՆԵ ՀԱՌՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԼԵՔՍԵՅ ՎԱՍՍԱՎ.

«Հայաստանը մեր երկրորդ հայրենիքն է, եւ մենք միասին ենք հավերժ»



ՍԿԻՉԲԸ ԷՁ 1

անցնել սահմանը, մեզ անկասկած հայտնի կլինի, եւ մենք կկանգնենք սահմանախախտի ճանապարհին: Իսկ այս պահի դրությամբ կասեմ, որ ամեն ինչ հանգիստ է: Ինչ վերաբերում է տեղի բնակչությանը, ապա նրա հետ նույնպես համագործակցում ենք եւ մշտապես զգում մարդկանց աջակցությունը:

Այստեղ եկել են վեց ամիս առաջ, հասցրել են հանդիպել տեղական իշխանությունների ներկայացուցիչների հետ՝ Մեղրի, Ազարակ, Շվանիձոր, Նյուվադի համայնքներում, բոլորի հետ գործնական զրույցներ ենք ունեցել, փոխադարձ հետաքրքրություններ կայացնող հարցեր քննարկել:

– **Գիտե՞մք, որ Ձեր գործասքը, ծառայության բերումով, համազորակցում է Մեղրու մաքսակետի հետ: Միաժամանակ՝ հանրապետական մամուլում երբեմն կարծիքներ են շրջանառվում, որ Հայաստան թմրամիջոց թափանցող ճանապարհներից մեկն Իրան-Հայաստան պետական սահմանն է: Ինչպե՞ս եք վերաբերվում նման խոսակցություններին, ինչպե՞ս եք գնահատում մաքսակետի հետ համագործակցությունը, եւ ինչպիսի՞ն է իրավիճակը հայ-իրանական սահմանում՝ մեզ մտահոգող հարցի առումով:**

– Մաքսային ծառայության հետ արդյունավետ համագործակցության հիմքը վաղուց է դրված, դրա արդյունքները նկատելի են: Եվ չէի ասի, որ թմրամիջոցի տեղափոխման այդպիսի խոշոր «խողովակ» է գործում պետական սահմանի այս հատվածում, որովհետեւ Իրանից եկող մեքենաները մանրազնի ստուգվում են, մենք նույնպես ընդգրկվում ենք մաքսային գննության պրոցեսում: Թաքցված ապրանքներ հայտնաբերելիս դրանք հանձնվում են մաքսային ծառայությանը, եւ այդ ծառայության աշխատակիցները շարունակում են դրանց հետագա ճակատագրով զբաղվել: Հարկ եղած դեպքում գործը հանձնվում է ոստիկանությանը: Այնպես որ սերտ հարաբերություններ ունենք եւ մաքսային ծառայության, եւ ոստիկանության, եւ անձնագրերի ու վիզաների վարչության հետ, ու այդ համագործակցության ոլորտում միմյանց աջակցում ենք մի խնդիր չի ծագել:

– **Որքանով տեղյակ ենք, Մեղրու մաքսակետում արդիական սարքավորումներ են վերջին տարիներին տեղադրվել, որոնք հնարավորություն են ընձեռում ավելի մանրակրկիտ գննություն կատարել, հուսալի դարձնել պետական սահմանի հսկողությունը:**

– Այդ սարքավորումների աշխատանքի

սկզբունքն այն է, որ սինթետիկ նյութը տարբերում է բնականից, նաեւ երեւակում է մեքենայի ողջ բեռը, եւ եթե որեւէ բան թաքցված է, հայտնաբերում է, հատկապես, երբ խոսքը վերաբերում է թմրամիջոցներին:

– **Այնուամենայնիվ, կուզենայի՞ք, որ Մեղրու սահմանապահ ջոկատի այս տարվա գործունեությունը ներկայացնե՞ք թվերով ու փաստերով:**

– 2014թ. ջոկատի սահմանապահների կողմից բացահայտվել է մաքսամեմբրության 20 դեպք, ընդհանուր գումարը՝ երկու միլիոն 608 հազար 800 ռուբլի: Բացահայտվել է նաեւ սահմանով թմրամիջոցների անցկացման ութ փորձ՝ 0.146կգ ընդհանուր քաշով, 69 միավոր սառը զենքի, թունավոր նյութերի փոխադրման հինգ դեպք՝ 0.22կգ քաշով, պայթուցիկ նյութերի փոխադրման մեկ դեպք՝ 0.15կգ ընդհանուր քաշով: Այդ ամենը բռնագրավվել է: Պետական սահմանի ռեժիմը խախտել է հինգ մարդ:

– **Կա մի խնդիր, որ մեր նախորդ հարցազրույցներում եւս չշոյափել ենք. խոսքը գործնառի կադրերի մասին է: Թափուր տեղերը լրացնում եք տեղացի բնակիչներին, թե՛ ԱՊՊ երկրների քաղաքացիներին:**

– Մեր ջոկատը Ռուսաստանի Դաշնության ենթադասության ներքո գտնվող գործնառի է, ծառայողները Ռուսաստանի քաղաքացիներ են, իսկ տեղացի կադրերը ծառայում են պայմանագրային հիմունքով: Այդ մասին Ռուսաստանի Դաշնությունը եւ Հայաստանի Հանրապետությունը համապատասխան պայմանագիր են ստորագրել, ասել է թե՛ պետական սահմանի պահպանությունը կազմակերպելու, այդ թվում Հայաստան-Իրան սահմանի մեր տեղանալը պահպանելու համար ծառայության են զորակոչվում միայն Հայաստանի եւ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիները: Ինչ վերաբերում է ԱՊՊ այլ երկրների քաղաքացիներին, այդպիսիք մեր սահմանապահ ջոկատում չկան: Այս պահին մեզ մոտ գորակոչը ժամանակավորապես դադարեցված է, խնդիրն առաջիկայում կլուծվի երկու երկրների կառավարությունների մակարդակով: Եվ միայն դրանից հետո կսկսենք մարդկանց ընդունել ծառայության: Այդ, կադրերի պակաս սահմանապահ ջոկատում կա: Ասեմ նաեւ, որ շատերն են ցանկանում մեր գործնառում ծառայել, բայց սահմանապահ ջոկատում ծառայելու համար պահանջվում են որոշակի որակներ, ամեն ցանկացող է, որ կարող է ծառայության անցնել մեր գործնառում: Մեղրու քաղաքացիներն ինձ ասաց՝ եթե ջոկատում տեղացի կադրերի ներգրավման հնարավորությունը մեծանա, իրենք կողջունեն, քանզի դրանով նաեւ երիտասարդության մի մասի զբաղ-

վածության խնդիրը կլուծվի: Ի դեպ, ավելի ցանկալի է, որ տեղացի բնակիչն ընդունենք ծառայության, դա մեծ առավելություն ունի, քանի որ տեղացին ապահովված է բնակարանով:

– **Այնքան է, որ Մեղրու սահմանապահ ջոկատը մարզում ու հատկապես Մեղրու շրջանում նաեւ սոցիալական կարեւոր խնդիր է լուծում՝ բնակչության զբաղվածության խնդիրը, ինչի մասին Դուք նույնպես նշեցիք:**

– Հավանաբար այստեղ ծառայող ՀՀ քաղաքացիների 90 տոկոսը Սյունիքի մարզից է: Կարծում եմ՝ սրանով ամեն ինչ ասված է: Բացի դրանից սերտ է համագործակցությունը տեղացի բնակչության հետ: Պիտի հայտնեն, որ մեզանում, այսպես ասած, լիազորների ինստիտուտ է հիմնվում, այդ կամավորներն աշխատելու են Մեղրու, Ազարակի, Շվանիձորի համայնքային վարչական շենքերում, անձնագրերի հարցն այսուհետ ավելի ոյուրին է լուծվելու, նաեւ բնակչությունն օպերատիվ վիճակի մասին անհրաժեշտ տեղեկություն է ստանալու:

– **Իսկ կրիտիկական իրավիճակներ հաճախ են լինում պետական սահմանում:**

– Կրիտիկական պահե՞ր... (ծիծաղում է), այս պահին մեզ արջերն են անհանգստացնում, ինձեներական կառույցներն են ջարդում, այստեղից թափանցում Իրանի տարածք, այնտեղի մեղվափեթակներից օգտվում, նորից հետ գալիս:

– **Ինչպիսի՞ն է սահմանապահ ջոկատի՝ ռազմական տեխնիկայով հագեցվածությունը եւ մարտական պատրաստվածությունը:**

– Մարտական պատրաստվածությունը եւ տեխնիկական հագեցվածությունը բարձր մակարդակի վրա են: Ինչ վերաբերում է զենքի ու տեխնիկային... Մեր ունեցածը մեզ բավարարում է: Մեզ անհրաժեշտ չեն ո՛չ տանկեր, ո՛չ զրահամեքենաներ, ո՛չ էլ ժամանակակից ճնմականետեր: Սահմանապահների մարտունակությունը բարձր է, եւ ով այստեղ ծառայում է, լավ գիտի իր գործը: Դա է կարեւորը:

– **Կարծե՞ք ձձոգվում է սահմանապահ ջոկատի նոր հրամանատարի նշանակումը:**

– Ինչպես լրագրողներն են ասում՝ առանց մեկնաբանության:

– **Սահմանապահներին դժվար է պատկերացնել առանց հավատարիմ «ընկերոջ»՝ վարժեցված շներին:**

– Իրոք որ սահմանապահ ու շունը միշտ միասին են: Դա ունիկալ կենդանի է, որի հոտառությունն օգնում է սահմանապահին իր ծառայողական պարտականությունները կատարելիս: Նա եւ վերին, եւ ներքին հոտառություն ունի: Այնտեղ, որտեղ մարդը ոչինչ չի հայտնաբերում, շունը շարունակում է փնտրտուքը: Շներ կան, որոնք հետքերով են որոնումներ կատարում, շներ կան, որոնք «վերին» հոտառությունն է գործ տեսնում: Յուրաքանչյուր դեպքում, երբ շունը լավ վարժեցված է, իր «գործը» մինչեւ վերջ հասցնում է: Սահմանապահ ջոկատը կինելոգի (շուն վարժեցնող) հաստիք ունի, այդ մասնագետը մայրաքաղաք է գնում՝ ազգային անվտանգության ծառայություն վերապատրաստման: Շուտով մեզ կմիանա մի սպա, ով այդ մասնագիտությամբ հիմնարար կրթություն ունի: Նրա այստեղ գալով՝ մեր գործը կթեթևանա, որովհետեւ շներին անընդհատ պիտի վարժեցնել ու վարժեցնել:

– **Ի՞նչ կապեցա՞նք սավափին:**

– Կարեւոր հարցեր տվեցիք, այն ամենը, ինչ որ անհրաժեշտ էր եւ առնչվում է սահմանի պահպանությանը: Միայն կուզենայի ավելացնել, որ առաջիկա վեց-յոթ ամսում նախատեսում ենք մեծ շուրջով նշել Մեծ հայրենականում խորհրդային ժողովուրդների տարած հաղթանակի 70-ամյակը, մեր սահմանապահ ջոկատի հիմնադրման 60-ամյակը: Եվ մի տխուր տարեկից կա. լրանում է Հայոց մեծ եղեռնի 100-ամյակը: Մենք էլ ենք ցանկանում Ցեղասպանության զոհերի հիշատակը ոգեկոչել՝ գործնասիրտաբարձում հուշակոթող կանգնեցնելով: Հայաստանը մեր երկրորդ հայրենիքն է, եւ մենք միասին ենք հավերժ, այստեղ մեր գին՝ ծառայողներն ամուսնանում են, ընտանիք կազմում, երեխաներ ունենում...

**Զրույցը՝
ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵՆՅԱՆԻ**

Դիմեք օմբուդսմենին մարզում

Իրավունք

ՍԿԻՉԲԸ ԷՁ 1

րաբերյալ վեճերը, անձին անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելը եւ այլն), նաեւ այն բողոքները, որոնք ներկայացվել են ավելի ուշ, քան խախտումը թույլ տալուց հետո տրված մեկ տարվա ժամանակահատվածը:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը հորդորում է քաղաքացիներին՝ եթե իրենց իրավունքը խախտել է մասնավոր անձ, ապա կախված խախտման բնույթից, պետք է դիմել կամ ոստիկանություն, կամ դատարան, կամ այդ իրավունքը վերականգնելու լիազորություն ունեցող համապատասխան վերադաս մարմնին: Եթե պետական մարմինները չկատարեն իրենց պարտականությունը եւ չբավարարեն քաղաքացու օրինական պահանջը, այդ դեպքում արդեն՝ ՄԻՊ-ին: Ընդ որում՝ պաշտպանն արդեն գործ կունենա ոչ թե քաղաքացու իրավունքը խախտած մասնավոր անձի, այլ այն պետական մարմնի հետ, որը պարտավոր էր, բայց չի կատարել դիմողի օրինական պահանջը:

Բողոք-դիմումն ընդունելուց հետո գրասենյակը ուսումնասիրում է այն եւ տաքը աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուին տեղեկացնում դիմումը մերժելու կամ դրա քննարկումը շարունակելու որոշման մասին: Եթե բողոքը ենթակա է քննարկման այլ մարմնի կողմից, պաշտպանը դիմումատուի գրավոր համաձայնությամբ այն 14 աշխատանքային օրվա ընթացքում փոխանցում է իրավասու մարմնին:

Գրասենյակում իր աշխատանքային գործունեության ընթացքում նկատելով, որ ՄԻՊ ինստիտուտի հանդեպ մարդկանց վստահությունն ավելանում է, Օ.Դավթյանը նշում է, որ հենց մեր գրույցի պահին իր վարույթում մարզից մոտ 20 գործ կա: Եթե գրասենյակի բացման սկզբում ավելի շատ դիմում էր ավագ սերունդը, հիմա բողոքողների մեջ տարբեր տարիքի ու խավի մարդիկ են. «**Դրական ավարտ ունեցած բավականին շատ գործեր ունենք (կապված, օրինակ, քաղաքապետարանի, զինկոմիսարիատի, պոլիսիստի, եւ մարդկանց իրավունքների վերականգնումը նպաստում է այս ինստիտուտի հանդեպ վստահության մեծացմանը):** Իսկ դիմումների մեջ գերակշռում են քաղաքացիական գործերը:

Նշենք, որ քաղաքացու բողոքի վերաբերյալ քննարկման արդյունքները, քննարկման ավարտից հետո, տասնօրյա ժամկետում ուղարկվում են այն մարմնին կամ պաշտոնատար անձին, որի որոշումը կամ գործողությունները (ամգործությունը) բողոքարկվում են: Վերջինս իր դիրքորոշումն ու պարզաբանումները պետք է ՄԻՊ-ին ուղարկի ուսումնասիրության արդյունքները ստանալուց հետո՝ տասնհինգ օրվա ընթացքում, եթե պաշտպանը այլ ժամկետ չի սահմանում:

Սյունիքի մարզային գրասենյակի աշխատակիցը պատմում է, որ դիմում են տարաբնույթ հարցերով, բայց մի միտում էլ է նկատում. «**Դիմելուց մեկ-երկու օր հետո քաղաքացին կարող է խնդրել իր դիմումին ընթացք չտալ, քանի որ խնդիրը լուծվել է, ու ես միշտ հարցնում եմ դիմումատուին՝ համապատասխան կառույցում զգուշացրե՞լ եք, որ դիմելու եք ՄԻՊ-ին, բնականաբար՝ այո... Կարեւոր չէ, թե ինչպես է խնդիրը լուծվում, կարելու է՞ր քաղաքացին գոհ լինի:»** Մեր գրույցակցի պատմելով, համախել է պատահում, որ մարդիկ դիմում են այնպիսի հարցերով, որոնք սույն կառույցին չեն վերաբերում, լինում են նաեւ զավեշտալի դեպքեր, երբ մարդկանց թվում է, թե այստեղ իրենք բոլոր խնդիրներին կարող են լուծում տալ:

Իսկ թե միջինը ամսական ինչքան մարդ է Սյունիքից դիմում գրասենյակ, մեր գրույցակիցը չի կարող ասել, քանի որ նման առանձնացված վիճակագրություն մարզերի կտրվածքով չկա, իսկ իրենք աշխատում են հատուկ համակարգչային ծրագրով՝ ցանցային տարբերակով, եւ կոնկրետ Սյունիքի գրասենյակի վարույթում քննվում են նաեւ մայրաքաղաքից եւ այլ մարզերից ստացված դիմումները:

Վերջում հիշեցնենք, որ ՀՀ ՄԻՊ աշխատակազմի մարզային վեց գրասենյակը գործում էին 2012-ի ապրիլից՝ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանում երկու ընտրական փուլերին» ծրագրի շրջանակում: 2013-ի դեկտեմբերից մարզերում ՄԻՊ գրասենյակները ժամանակավորապես դադարեցրել էին իրենց գործունեությունը՝ պայմանավորված ծրագրի ավարտով. սկսվելու էր կառավարության ֆինանսական աջակցությունը: 2014-ին պետական բյուջեով կառավարությունը հատկացրել է գումար, եւ հանրապետության երեք մարզում՝ Շիրակում, Գեղարքունիքում եւ Սյունիքում, վերաբացվել են ՄԻՊ-ի գրասենյակները: **ԱՐԽՆԵ ԱՎԱԳՅԱՆ**

Ավագ դպրոցի փակման ավելին չէ, քան միջնակարգինը

ՍԿԻՐԸ ԷՅ 1

(ՄԿԱ) գծով փոխտնօրեն, 2012թ. հունիսի ընտրվել է «Ազգային միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն:

Ազգային առաջին դպրոցը բացվել է 1954թ. (տնօրեն՝ Արշավիր Մելքոնյան): Դպրոցը սկզբում տեղավորված էր հրապարակի երկհարկանի շենքի (հետո՝ երաժշտական դպրոց) աջ մուտքի առաջին հարկում: Կրթօջախի առաջին ուսուցիչներն էին Երմոնյա Մարությանը, Օլյա Սահակյանը, Սոնյա Դավթյանը, Արամայիս Սարգսյանը: Առաջին այս դպրոցը հետագայում դարձավ ռուսական միջնակարգ, այնուհետև՝ Ազգային N 2 միջնակարգ դպրոց: 1968-ին բացվեց Ազգային մյուս՝ N1 հայկական դպրոցը, որն էլ Ազգային ներկայիս միջնակարգ դպրոցն է: Այն կարճ ժամանակում կահավորվեց եւ դարձավ հանրապետության լավագույն դպրոցներից մեկը: Երկու շարժանի ծննդյան տարեդարձի առթիվ դպրոցը կոչվեց բանաստեղծի անունով:



րանորոգված դասասենյակներով, որ կատարվել է «Ազգային ՊՄԿ» ՓԲԸ արհմիության (Ուսուցիչների Սամվել Միքայելյան), ինչպես նաև դասարանական ծնողական խորհուրդների աջակցությամբ: Դեռևս պիտի վերանորոգվեն երկրորդ հարկի միջանցքները, դպրոցի շքամուտքը, առաջին հարկն ամբողջովին, որ ժամանակի հարց է: Ծնողական խորհուրդները որոշեցին աջակցել դասասենյակների կահավորմանը: Դպրոցին մեծ աջակցություն է ցուցաբերում Ազգային քաղաքապետ Մխիթար Զաքարյանը:

Գրադարանը՝ ժամանակակից կահավորմամբ եւ վերանորոգված պատերով, իսկապես այք է շրջում եւ հաճելի միջավայր ստեղծում ընթերցողի համար: Այն նորոգվել է մեկ տարվա ընթացքում «Լեռնահայաստան» հիմնադրամի, համայնքապետարանի միջոցներով: Բացի դպրոցական գրադարան լինելուց՝ նաև քաղաքային գրադարան է եւ ունի մոտ 11 հազար կտոր գիրք: «Վերանորոգված գրադարանը գրավում է աշակերտներին եւ նպաստում, որ ավելի հաճախակի այցելեն գրադարան եւ կարդան: Շուտով այստեղ համակարգիչներ կտեղադրվեն: 20 օրվա ընթացքում ունեցել ենք 107 ընթերցող, որ անհատապես երեւոյթ է մեր դպրոցի համար», - նշեց գրադարանավարուհի Վերգինե Սուրբաջյանը:

Ամեն տարի աշակերտները մեկնում են հեռավոր էքսկուրսիաներ: Աշակերտների համար բոլոր նպաստավոր պայմանները կան՝ գիտելիքներ ձեռք բերելու, հմտությունները զարգացնելու համար: Բացի առարկայական դասերից՝ աշակերտները մասնակցում են նաև հանրապետական տարբեր ինտելեկտուալ խաղերի: Մեր այցի պահին 10-11-րդ դասարանի աշակերտները պատրաստվում էին «Հայ ասպետ» ինտելեկտուալ խաղի կիսաեզրափակիչ փուլին, իսկ 2015-16 ուստարում «Արմենիա» հեռուստատեսությամբ կազմակերպվելիք «Ամենախելացին» ինտելեկտուալ խաղին մասնակցելու հայտ են ներկայացրել: «Տարբեր ինտելեկտուալ խաղերի մասնակցելը նպաստում է աշակերտների աշխարհայացքի ձեւավորմանը, լրացուցիչ գիտելիքներով հարստացմանը: Կան գրքեր, որոնք աշակերտները երեւի թե իրենց կյանքի ընթացքում չկարդան, բայց խաղերին մասնակցելն այդ գործերին ծանոթանալու առիթ է դառնում», - նշեց դպրոցի տնօրեն:

ը: Ավելացնենք նաև, որ գերազանց խաղ ցուցադրելու համար «Հայ ասպետ» խաղ-մրցույթի մասնակիցները որպես խրախուսում 10 օրով մեկնել էին Գիլիզան:

Բարեբախտաբար, կարողացան խնդիրներ չունեն, մասնագետները համապատասխանում են իրենց պաշտոնին, իսկ կենսաթոշակի անցնող ուսուցիչներին աստիճանաբար փոխարինում են երիտասարդ կադրերը: Հաստիքացուցակում փոփոխություններ են կատարվել հիմնականում սպասարկող անձնակազմում, մասնավորապես՝ վարչատնտեսական գծով փոխտնօրենն ազատվել է աշխատանքից՝ ներգրավվելով ուսումնաժամանակ անձնակազմի մեջ որպես տնտեսավար, կրճատվեցին նաև այգեպանի եւ բանվորի հաստիքները:

Այն, որ խոսում էին ուսուցիչ աշխատավարձը 9 տոկոսով բարձրացնելու մասին, մնաց օդում. մեր տարածաշրջանում ուսուցիչ աշխատավարձի բարձրացում չի նախատեսվում: Տնօրենն ասաց, որ պատճառաբանել են, թե Ազգային դպրոցը՝ որպես սահմանամերձ, արդեն իսկ 20 տոկոսով ավելի է վարձատրվում: Իսկ եթե հաշվի առնենք պահումները, պապ այստեղ աշխատավարձի բարձր լինելու մասին խոսք լինել չի կարող:

ԿԳԽ-ի կողմից երաշխավորված թեմատիկ եւ կիսամյակային գրավոր աշխատանքների տեսերից օգտվելը տնօրենը բացատրեց այն պարզ հանգամանքով, որ թեմատիկ գրավոր աշխատանքները ծրագրով շատ են նախատեսվել, իսկ ուսուցիչն ի վիճակի չէ այդքան կազմել եւ պատճենահանել: Դպրոցը չի կարող ապահովել պատճենահանման ծախսերը: Այդ տեսերից օգտվելու հիմնական պատճառը գուտ ֆինանսական է:

Իսկ հարցին, թե արդյոք այդ տեսերը միօրինակ չեն, եւ շատ հաճախ էլ աշակերտները նախապես ծանոթ են լինում տեքստին, տնօրենը պատասխանեց, որ, ճիշտ է, դրանից խուսափելը դժվար է, բայց ուսուցիչն ունի բազում հնարավորություններ՝ երեխաների գիտելիքները ստուգելու, լրացուցիչ աշխատանքներ կատարելու համար: Բացի դրանից՝ ծրագրով նախատեսվող միջոցառումներն ակամայից ուսուցիչն մղում են ստեղծագործական աշխատանքի:

Վերջերս մամուլում այդքան չարժեքավոր դրամահավաքության մասին հարցին տնօրենը միանգա-

մից տվեց բացասական պատասխան. «Մեր դպրոցում անհարկի դրամահավաքություն չի լինում, եթե դասարանում գումար է հավաքվում՝ որեւէ աշխատանք կատարելու համար, ապա միայն ծնողների կամքով ու ցանկությամբ. մենք առանձին դասարանական ֆոնդեր չունենք»:

Ավագ դպրոցների հիմնումն այնքան էլ միանշանակ չընդունվեց հանրության կողմից եւ, ինչպես տարիներն են ցույց տալիս, այնքան էլ չի արդարացնում: Մասնավորապես շարունակվում է տիրապետող լինել կրկնուսուցիչ մոտ հաճախելը, լրացուցիչ գումարներ ծախսելը, ինչպես նաև շատ հաճախ ուսուցիչները դպրոցում ըստ պատշաճի չեն դասավանդում՝ պատճառաբանելով, որ պարապմունքի ընթացքում աշակերտները դա կսովորեն: «Գիտի մախ եւ առաջ ծնողների ու աշակերտների մեջ կոտրել այն կարծրատիպը, որ կրկնուսուցիչ մոտ հաճախելը պարտադիր է: Վերջապես դպրոցն էլ պիտի այնպիսի գիտելիքներ տա, որով հնարավոր կլինի բուհ ընդունվել: Մյուս կողմից էլ ավագ դպրոցը դեռ բազում խնդիրներ ունի լուծելու, որ, կարծում են, ժամանակի հարց է: Բացի դրանից՝ պիտի արհեստագործական ուսումնարանները շատանան, որպեսզի աշակերտն աննպաստակ, ինչ-որ տեղ նաև ստիպված չգնա ավագ դպրոց՝ կոպիտ ասած, իր ժամանակը վատնելու համար: Այս ամենով հանդերձ՝ պիտի նշեն, որ մենք ունեցել ենք աշակերտներ, ովքեր առանց լրացուցիչ պարապմունքի բուն են ընդունվել, կարծում են, խնդիրը նաև հոգեբանական կողմից պիտի դիտարկվի: Մեր արձանագրած հաջողությունները հիմք են տալիս ասելու, որ ավագ դպրոցի սոված գիտելիքն առավել չէ միջնակարգ դպրոցում ստացած գիտելիքից»:

Վերջերս հանրապետությունում, հատկապես մայրաքաղաքում, նորաձեւ են համարվում մասնավոր դպրոցները, որտեղ հաճախելը դպրոցի տնօրենը համարեց պարզապես մոդային տուրք տալու հերթական առիթ, ինչպես նաև հասարակության մեջ շեղարկություն մղելի խորացնելու դրեստիկում:

Մանկավարժության եւ հոգեբանության մեջ վիճահարույց հարցերից են, թե որն է երեխայի ձեւավորման վրա թողնում ավելի մեծ ազդեցություն՝ ժառանգականությունը, միջավայրը, ընտանիքը, թե՞ դպրոցը: Այս առումով դպրոցը կանգնում է գլխավոր խնդրի առաջ: Երբեմն հասարակության արատավոր երեւոյթներն ավելի ազդեցիկ են լինում, քան դպրոցի ու ընտանիքի դաստիարակությունը, եթե հաշվի առնենք նաև այն, որ շատ հաճախ իրականությունը բավականին վառ գույներով է ներկայացնում, ասենք օրինակ, «օրենքով գողի» կյանքը, որ ակամայից կարող է «խորթաբեր» լինել երեխայի համար: ՄԿԱ-ի գծով փոխտնօրեն Լաիա Ուսուցիչն ունի բազում հնարավորություններ՝ երեխաների գիտելիքները մշտապես փոփոխելու ու վերահսկողության տակ են»:

Դպրոցները, ի տարբերություն միջին մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների, որոնք ստանում են միայն չափորոշիչներ, պատրաստի պետական առարկայական ծրագրերով են առաջընդհանրվում: Երբեմն ուսուցիչների համար ծրագրերի հետ կապված խնդիրներ են առաջանում, որոնց

լուծման համար դիտարկումներ եւ առաջարկներ են ներկայացնում, բայց թե դրանք որքանով են ընդունվում համապատասխան մարմիններում, տնօրենը դժվարանում է պատասխանել:

Ուսուցչի խնդիրները

Եվ հասարակության հետ, եւ դպրոցում այսօր ուսուցիչն ունի բազում խնդիրներ: Լաիա՝ բավականին ծանրաբեռնված են ուսումնական ծրագրերը: Ուսուցիչն աշխատում է շատ, վաստակում՝ քիչ: «Ուսուցչի աշխատանքը թե՛ բարոյապետ, թե՛ նյութապետ պիտի ամենաբարձր վարձատրվող լինի», - նշում է տնօրենը: Առաջնային խնդիրը, որին բախվում է ուսուցիչը, աշակերտների թիվն է: Դասարանները հիմնականում 30 եւ ավելի աշակերտներից են կազմված, որ լրացուցիչ խոչընդոտներ է ստեղծում ուսուցչի համար ոչ միայն արմուկի տեսակետից, այլև նյութը մատուցելու համար ժամանակը զրեթե չի հերիքում: Երկրորդ խնդիրն ավագ դասարանների հետ է կապված: Աշակերտները, ունենալով կրկնուսուցիչ ուղղվածություն, շատ առարկաներ չեն սովորում, եւ ուսուցիչը պիտի ստիպված դա հանդուրժի: Այս ուստարվա խնդիրներից էին նաև ավագ դասարաններում որոշ առարկաների ծրագրերը, որոնք ուղարկվել են հունամիտար, իսկ դասագրքերը՝ ընդհանուր եւ բնագիտամաթեմատիկական հոսքի համար: Ուսուցիչները ստիպված խտացրել են նյութը, որը լրացուցիչ դժվարություն է ստեղծում թե՛ ուսուցչի, թե՛ աշակերտի համար:

Չենք բացառում այն հանգամանքը, որ ուսուցիչները շատ հաճախ հետ են մնում եւ ինքնակրթությամբ գրեթե չեն զբաղվում, բայց դրան էլ արդարացում կա. կրթական համակարգը շատ է ծանրաբեռնում ուսուցչին՝ տեսերի ստուգում, պլանի կազմում, զանազան միջոցառումների կազմակերպում, ինչպես նաև անցյալ ուստարուց դպրոց մուտք գործած dasaran.am: Ուսուցիչը, բացի դասամատյանում զննատականներ ընթացակետից, տնային համաձայնարությունը մշտելուց, մյուս գործառնությամբ պիտի կատարի նաև կայքում: Այս ամենով հանդերձ՝ կարող ենք արձանագրել, որ ուսուցիչը երբեմն չի հասցնում թարմացնել իր գիտելիքները եւ ավելի կատարելաբար ավելի հաճախ ժամանակ չունենալու պատճառով:

Առաջիկա ծրագրերը

Այս տարի կառավարության որոշմամբ մարզի բոլոր դպրոցներն իրականացնում են «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիր: Ազգային միջնակարգ դպրոցում սեպտեմբեր ամսվա դրությամբ դեռևս չէր իրականացվում, քանի որ ծաշարանը պիտի հարմարեցվի աշակերտներին տաք սնունդ տալու պայմաններին: Նշենք, որ 1-4-րդ դասարաններում ունեն 240 աշակերտ, իսկ 15 դասարանաց դասամիջոցում դժվար է տեղավորվել: Չոր սնունդ՝ իյուր եւ թխվածքաբլիթ, տալիս են, իսկ տաք սնունդի հարցը լուծման փուլում է:

«Ուսուցիչներին եւ աշակերտներին շնորհավորելով նոր ուսումնական տարվա կապակցությամբ՝ մաղթում են նրանց հաջողություն, համբերություն ու ներողամտություն: Ցանկանում են, որ ուսուցիչը փոխընթացում մոտենա իր աշխատանքին, իսկ աշակերտը հարգանքով ու ակնածանքով վերաբերվի ուսուցչին ու նրա կատարած վեճ աշխատանքին: Կարծում են՝ հայ ուսուցիչն իսկապես արժանի է բարձր գնահատականի», - գրույցը եզրափակեց Էմա Բարխուդարյանը:

ԱՐԲԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Դպրոցի խնդիրները եւ դրանց լուծման ուղիները

Նոր ուսումնական տարին դպրոցը դիմավորեց հաճելի անակնկալներով՝ վերանորոգված գրադարանով, երկրորդ հարկի վե-

Օջախ

Հատված Չորի Բալայանի համանուն գրքից

Անեն բան անցնում է
իմ սրբի միջով,
ես անտարբեր չեմ կարող կանգնել
աշխարհի ստաջ...
Ավ.Իսահակյան

...Մեղրիի շրջանային հիվանդանոցի գլխավոր բժիշկ Լենիկ Պողոսյանը, որն անսահման սիրահարված է, ինչպես ինքն է ասում, իր կիրճին, Մեղրին անվանում է Սովետական Հայաստանի դարպաս: Գուցե դա վիճելի է, սակայն ինձ թվում է, որ վիճելի է միայն առաջին հայացքից միայն: Ի դեպ, այդ մասին խոսելիս Պողոսյանը հենց այնպես չի անդում: Նա ապացուցում է: Եվ ամենայն կրքոտությամբ է ապացուցում: Իսկապես, երբ ուշադիր նայում ես քարտեզին, համոզվում ես, որ մեղրեցի բժիշկն իրավացի է: Ամբողջ շրջանի երկայնով անցնում է սովետական պետական սահմանը՝ ընդգծվելով առասպելական Արաքսով: Մյուս երկու կողմից անցնում են միջհանրապետական սահմանները: Ամբողջ Հայաստանում ուրիշ այդպիսի շրջան չկա: Իսկական դարպաս է: Ով գիտե, գուցե պարահական չէր, որ էլեկտրոնային հաշվիչ մեքենան հենց այդպես էլ որոշեց՝ Սովետական Հայաստանում ճանապարհորդությունը սկսել Մեղրիից: Հարազար փանը ճանապարհորդելը: Իսկ չէ որ փուն մտնում են դռնից, դարպասից: Այնպես որ բժիշկ Պողոսյանը իրավացի է: Մեղրին այսօրվա Հայաստանի դարպասն է: Բայց երեւի շարերը չգիտեն, որ օսմանական ռեցիդիվիստները՝ թալեթներն ու էնվերնների ժառանգները, մեր քարտեզին նայելիս անեծքներ են փռում Մեղրիի հասցեին: Ժամանակակից նեոֆաշիզմի այդ պնակալեզները սովետական Մեղրիի շրջանը անվանում են «նզովյալ սեպ», որ խրվել է իրենց աչքը:

Մեղրիում, ավելի ճիշտ Մեղրիի շրջանում, կամ էլ տեղացի բժշկի արտահայտությամբ՝ Կիրճում, հեքիաթային համեմտություն է: Գնաց համեմտություն է: Ես կասեի թանձր: Եվ... բազմաշերտ: Ու դա բնավ էլ զարմանալի չէ: Արաքսի ափից բարձրանալով դեպի լեռները, դեպի Լիճք ու Տաշտուն գյուղերը, բառացիորեն կարելի է շոշափել, նույնիսկ ձեռք տալով զգալ, թե ինչպես է փոխվում օդը: Փոխվում է ամեն մի կիլոմետրից հետո: Շերտ առ շերտ: Դժվար թե այստեղ գտնես մի փոքրիկ հարթ տարածություն, որտեղ օդի անփոփոխ շերտ լինի: Շրջանում այդպիսի տեղ չկա: Լեռներ են, լանջեր, ժայռեր: 1958 թվականին կոմերիտմիության շրջկոմի այն ժամանակվա առաջին քարտուղար Յուրի Առաքելյանը հենց կոմերիտական պլենումից տղամեղրին դուրս բերեց փողոց՝ կենսագործելու իրենց որոշումը: Իսկ պլենումը որոշել էր կառուցել ֆուտբոլի դաշտ: Երկար վիճեցին: Վիճում էին, թե որտեղ կառուցեն: Ամբողջ շրջանում մեկ հեկտար տարածությամբ հարթ տեղ չկար: Իսկ հայտնի բան է, որ լեռան լանջին ֆուտբոլ չես խաղա: Այդպիսի հարթ տեղ չգտան եւ որոշեցին ստեղծել: Գյուղի սահմաններում, Մեղրի գետի ափին սկսեցին ստադիոն կառուցել: Հող էին բերում, խիճ, ավազ եւ լցնում էին ձորը, փոքրիկ կիրճը: Հինգ տարի հող էին բերում: Պատահի՞նք մի սերունդը, չճաշակելով ֆուտբոլ խաղալու բերկրանքը, փոխարինվում էր մյուս սերունդով, իսկ դաշ-



տը դեռ չկար: Միայն վեցերորդ տարում ստեղծվեց մեկ հեկտար տարածությամբ հրապարակ, որտեղ կարելի էր առավոտից մինչև երեկո վազվզել գնդակի ետևից: Ես տեսա, ինչպես արդեն իրիկնային աղջամուղջում մանուկները ֆուտբոլ էին խաղում այդ դաշտում: Կանգնեցրի նրանցից մեկին: Հարցրի, գիտե՞ս արդյոք, թե ով է երբ է կառուցել այս ֆուտբոլի դաշտը: Մանչուկը պատասխանեց. «Մի՞թե դաշտը կառուցում են: Սա հո տուն կամ դպրոց չէ»: Ես հասկանում էի պատանի ֆուտբոլիստին: Թերեւս, դժվար է պատկերացնել, որ կարելի է կառուցել, ստեղծել, գոյացնել հարթ հողակտոր:

Այժմ, շատ տարիներ անց, կոմերիտմիության շրջկոմի նախկին քարտուղարը, այսօր կուսակցության շրջկոմի առաջին քարտուղարը, որոշել է կառուցել մի նոր հրապարակ: Այս անգամ ոչ սպորտային ոտքով շարունակել ճանապարհը սորուն լանջն է վեր: Լեռը արհեստական է: Այն ստեղծել է մարդու ձեռքը: Ինքնաթիռի մեքենաներով այստեղ են բերել բացօթյա մշակման հանքաքարի մնացորդները:

Գլխի էի ընկել, որ այս արհեստական լեռը ապագա օդանավակայանի հիմքն է, գլխի ընկա նաեւ, որ եթե տարիներ առաջ բյուրավոր ինքնաթիռները պղնձահանքի այս մնացորդները թափելիս օգտակարը գուցակցեին հաճելիի հետ, ապա այսօր մենք արդեն կունենայինք օդանավակայան Մեղրիում, իսկ հիմա նորանոր բյուր ինքնաթիռներ պիտի աշխատեն լեռներում, որպեսզի վերից վար լցնեն վիթսարի կիրճը: Միայն այսպես կարելի է լեռնագագաթների առեւի գրկում ստեղծել մեկուկես կիլոմետր երկարությամբ հարթ հրապարակ, որտեղ վայրէջք կկատարեն ինքնաթիռները: Եվ այնժամ Մեղրիից դեպի երեւան ձգվող երկար ճանապարհը կհաղթահարվի կես ժամում: Դա երազանք չէ: Ավելի ճիշտ՝ երազանք է, բայց այնպիսի երազանք, որին կարելի է նայել, կարելի է ձեռք տալ: Մնում է միայն ավստալ, որ տարիներ շարունակ ինքնաթիռ մեքենաներն իրենց ծանր բեռը ավազն ու խիճը, զուր տեղն են թափել: Մենք հաճախ ենք անցյալում թույլ տված մեր անգործնականությունը արդարացնում բավական կասկածելի ձեւակերպումով. «Ուշ լինի, նուշ լինի»: Ինչո՞ւ ուշ: Մեղրիում վաղուց պետք է սկսած լինեին օդանավակայանի կառուցումը. Միշտ էլ դա դժվար է եղել, ինչպես որ դժվար է եւ հիմա: Բայց այժմ երազանքն, այսպես ասած, իրականացնում է: Ո՞ւմ է պետք այն երազանքը, որ մնում է լոկ երազանք:

Ճանապարհ: Այժմ արդեն, մեկնարկից հետո, արշավի ողջ էությունը կապված կլինի ճանապարհի հետ: Մենք չենք ընտրում ճանապարհը, ինչպես որ եղանակ չենք ընտրում: Բոլոր ճանապարհները մերն են: Եվ լավ, ե՛ւ վատ: Մեղրիում լավ ճանապարհներ քիչ կան: Կարելի է ասել, որ շրջանում փաստորեն չկան ճանապարհներ, բացի նրանից, որը շրջկենտրոնը կապում է արտաքին աշխարհի հետ: Միշտ այդպես է եղել: Հնուց ի վեր: Լեռներում, խաչածեւովոլ եւ իրար հատող լեռնագագաթների միջեւ ու կիրճերում դժվար էր, երբեմն էլ անհնար, ճանապարհ կառուցել: Եվ, կարելի է ասել, չէին կառուցում: Երբեմն միայն առանձին, հիրավի ժողովրդական հերոսներն էին նեղլիկ արահետներ բացում բարձր լեռների լանջերին ծվարած գյուղերի միջեւ: Հայտնի է, որ ինքնուրույն ուժը երբեմն ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ էՑ 6

Չորի Բալայան. ճանապարհորդություն Այունիքում

Չորի Բալայան. Ճանկորություն Այունիում

Օջախ

Հատված Չորի Բալայանի համանուն գրքից

ՍԿԻՁԲՆԷՏ

մեզանից գործող է լինում: Ասում են, թե այդ ուժը հաղթահարում են միայն պոետները: Սակայն կյանքը ցույց է տվել, որ համարակալության նախկին ղեկավարներից քչերն են օժտված եղել պոետի անվեհերությամբ: Երբ այդ ղեկավարներից մեկը այցելել է այս շրջանը (հազվադեպ բան), բարձր լեռնային Լիճք գյուղի բնակիչները հարցրել են նրան. «Մենք ե՞րբ ավտոբուս կունենանք: Ախր հնարավոր չէ շրջկենտրոն գնալ»: Նախկին ղեկավարը մի այնպիսի պատասխան է տվել, որ մարդիկ մինչև հիմա էլ չեն մոռանում: Ոչ միայն իրենք չեն մոռանում, այլև իրենց զավակներին էլ են հաղորդում: Նախկին ղեկավարը ի պատասխան քմծծաղ է տվել ու ասել. «Ոչինչ, ձեր պապերն առանց ավտոբուսի էլ են յուրա գնացել»:

Տաշտուն գյուղում նույն ղեկավարին հարց են տվել, թե ե՞րբ պիտի ճանապարհ կառուցեն: Գյուղը քարոքանք է լինում առանց ճանապարհի: «Իր սրամտությամբ» հավաքած ղեկավարը պատասխանում է. «Ձեր պապերը չէին բողոքում ճանապարհից»:

Այդ ժամանակից ի վեր երկու անգամ կրճատվել է հազարամյա պատմություն ունեցող այդ երկու գյուղերի բնակչության թիվը: Մարդիկ կարող են հաշտվել անհարմարությունների հետ, նույնիսկ զրկանքների հետ միայն այն դեպքում, երբ հույս կա, որ վաղ թե ուշ դրանք կվերացվեն: Եվ երկու գյուղերի բնակչության կրճատումը դադարեց, հենց որ մարդիկ հույս ունեցան: Այդ հույսը ցայտուն արտահայտված է բազմաթիվ կուսակցական փաստաթղթերում և Մեղրիի շրջանի ժողովներում: Կարգապահ գարգացման վերաբերյալ համարակալության միջոցների խորհրդի հատուկ որոշման մեջ: Պետական որոշումներն իսկույն ետք սկսեցին կենսագործվել: Վերջին տարիների ընթացքում Մեղրիի շրջանը վեր է ածվել մի վիթխարի շինարարական: Լիճքի եւ Տաշտունի բնակիչները մեկը մյուսի ետեւից հեռուստացույց են գնում: Պարզ բան է, որ այժմ ոչ ոքի չեն զարմացնի հեռուստացույցով: Բայց երբ աչքովը տեսնում են ամպերի տակ կանգնած հեռուստատեսային աշտարակը, անկարելի է չզարմանալ: Չարմանում են, թե այս ճանապարհագրորկ լեռներում ինչպես են կարողացել բազմառոնմանը կառուցել կանգնեցնել գաղիկ լեռնայանջին: Իրականացնում է նաև մեղրեցիների գլխավոր երազանքը՝ կառուցվում է Մեղրի-Քաջարան ճանապարհը, որն անցնում է Լիճք եւ Տաշտուն գյուղերի միջով:

Արշավախումբը քայլում էր նոր կառուցվող ճանապարհով: Գիշեր ու ցերեկ հռնդում են բուլղոգները: Անընդհատ հարկ է լինում թեքվել դեպի մերձակա կածանները, որ շինարարները բացել են այս ու այնտեղ կատարվող պայթյուններից ապահով լինելու համար: Ծինարարների ճանապարհն անընդհատ փակում են վիթխարի ժայռերը: Բայց ուրիշ ելք չկա, քան հող սփռեցնել դրանք ու թափել կիրճը, որտեղ կարկաչուն է վճիտ Մեղրագետը:

Ճանապարհը կառուցվում է: Հույսը վերածվելով իրականության կենսահաստատ ուժ է հաղորդում մարդկանց: Մարդիկ սկսում են վերանորոգել լքված տները: Մարդիկ, որ դեռ երեկ լքել էին իրենց անհեռանկար գյուղը, վերադառնում են հայրենի օջախները: Հույսը կյանք է:

* * *

Ամեն անգամ այս կամ այն բնակավայրն այցելելիս ստիպված էինք լինում ճանապարհ ընկնել կամ Մեղրիից, կամ Մեղրիի միջով: Մի անգամ ճանապարհին իմ ուշադրությունը գրավեցին խաղողի այգում աշխատող մարդիկ: Բոլորը տա-

րիքավոր մարդիկ էին: Ծանոթացա նրանց հետ: Բոլորն էլ՝ շրջանի նախկին պատասխանատու աշխատողներ: Բոլորն էլ՝ անհատական թոշակառուներ:

Թոշակառուները, ամբողջ բրիգադով, առավոտ ծեփն գնում են աշխատանքի եւ դուրս չեն գալիս խաղողի այգուց, մինչև որ չեն վերջացնում իրենց ծրագրածը: Ոչ ոք, իհարկե, նրանց չի շտապեցնում: Եվ հիմա, հավաքվելով շրջանի ղեկավարության շուրջը, իրար ընդհատելով խոսում են հուզող հարցերի մասին: Նրանցից մեկը ցույց է տալիս հարեւան սարալանջը, որտեղ ոչխարների հոտը արածում է խաղողի վազերի մեջ: Ամեն մեկը իր կարծիքն է հայտնում: Եվ բոլորի ասածն այն է, որ մենք չենք ուզում տեսնել բացահայտ սրբապղծությունը: Այլ կերպ չես ասի: Խոսքը վերաբերում է աշխատանքը ծաղրելուն:

Չյունը նոր-նոր հավվել է: Մարդիկ կարգի են բերում խաղողի այգիները: Ամեն վազի վրա, ինչպես ասում են, պետք է աղոթք կարդա: Եվ հանկարծ, մի երկու շաբաթ հետո, երբ հայտնվում են քմուշ բողբոջները, ոչխարների հոտը բաց են թողնում խաղողի այգիների մեջ: Ոչխարները, մորեխի պես, մերկ ծուղեր են թողնում իրենցից հետո: Ոչխարները ուտում են ոչ միայն խաղողի որթատունկերը: Նրանք բառացիորեն խժռում են դեղձի, թզի, ծիրանի մատղաշ տնկիները:

Ոչ ոք չի վիճում, որ ոչխարները շատ են անիրաժեշտ մեջ: Կարելի է նույնիսկ ասել, որ առանց նրանց անհնար է: Ամեն մի դարձյալան գիտե, որ ոչխարը բուրդ է եւ միս: Բայց ահա թե ինչ է ստացվում Մեղրիի շրջանում, ավելի ճիշտ՝ բուն Մեղրիում: Զգիտեն մի հարցն ինչպես է, բայց այստեղ բուրդ այնքան են ստանում, որքան այժմից կար: Ոչխարների ամբողջ բուրդը մնում է խաղողի փշփշուտ վազերի վրա: Կարելի է շրջել այգում եւ վազերից բուրդ հավաքել, ինչպես բամբակն են հավաքում: Դուրս է գալիս, որ եւ միրգն ենք կորցնում, եւ բուրդը: Եվ ոչ ոք չի ուզում այդ հարցը լուծել: Ոչխարները հարկավոր են: Բայց թե հարկավոր են այնտեղ, որտեղ նրանց պահելու հնարավորություն ունենք: Մեղրիում այդպիսի հնարավորություն չկա: ժայռոտ լեռներ եւ ուրիշ ոչինչ: Եթե որեւէ տեղ կանաչ ծիրեր են երևում, նշանակում է, դա մարդու ձեռքի գործն է: Մարդը հավաքել է քարերը, հող է բերել, ջուր է անցկացրել: Որտեղ որ կանաչ ծիլ է երևում, այնտեղ մրգատու ծառեր են: Միայն մրգատու: Ոչխարները ուտելու բան չունեն: Խոտի ծիլ անգամ չկա: Եվ զարմանք, երբ նրանք բաց են թողնում արածելու, այդ հեզ ու անմեղ կենդանիները դառնում են իրենց ճանապարհին ամեն ինչ կործանող մորեխ:

Տանկանում ենք մենք դա, թե չէ՝ բայց պրոբլեմը պետք է լուծել: Իրավացի են մեղրեցի պատկանելի հնարանկները, հարգարժան թոշակառուները, այստեղ խոսքը իսկապես վերաբերում է սրբապղծությանը: Անիրաժեշտ է Մեղրիից դուրս տանել երեք-չորս հազար գլուխ ոչխար: Տանել այնտեղ, ուր ոչխար պահելու տարրական հնարավորություններ կան: Նախքան այդ պրոբլեմի լուծմանը ձեռնամուխ լինելը կարելի է սեփականացնել անսել ուրացույց: Այն պարունակում է մոտ չորս հազար հիմնավոր հուշարձանների նկարագրություն: Արշավի ավարտից հետո, կարծում են, հնարավորություն կունենանք առանձին գիրք գրելու մեր հանրապետության հիշարժան վայրերի մասին: Իսկ այժմ կցանկանայի կանգ առնել դրանցից մի քանիսի վրա:

* * *

Պրոֆեսոր Վլադիմիր Գրիգորյանը եւ նրա տղան Մարկ Գրիգորյանը, կազմել են Հայաստանի հիշարժան վայրերի եւ կուլտուրայի հուշարժանների յուրօրինակ ուղեցույց: Այն պարունակում է մոտ չորս հազար հիմնավոր հուշարժանների նկարագրություն: Արշավի ավարտից հետո, կարծում են, հնարավորություն կունենանք առանձին գիրք գրելու մեր հանրապետության հիշարժան վայրերի մասին: Իսկ այժմ կցանկանայի կանգ առնել դրանցից մի քանիսի վրա:

Մեղրիի վանքից պահպանված կառույցների վրա որոշակիորեն երևում է գավառական շինարարական կուլտուրայի ոճական գծերի կնիքը: Այստեղ դժվար է հայտնաբերել պաթետիկ ոգեշնչման եւ հանդիսավոր-ցուցարարական նշաններ, որոնք բնորոշ են սովորաբար մայրաքաղաքային կառույցների եւ հարուստ վան-

քերի անասնաբույներին: Մեղրիի վանքում ամեն ինչ պարզ է, լակոնիկ, նպատակահարմար:

Մեղրիում եւ նրա շրջակայքում, բացի մի շարք եկեղեցական համալիրներից, կարելի է տեսնել հնագույն բնակավայրերի ավերակներ, որտեղ պահպանվել են հայկական գերեզմանոցներ, մանր ձեւերի ճարտարապետության իսկական կոթողներ:

Եկեղեցիների ու վանքերի ավերակներ ենք տեսնում Շվանծիրում եւ Ազարակում, Կարճեւանում եւ Վաիրավարում, Վարդանի ձորում, որը այդ անունը կրում է ի պատիվ Վարդան Մամիկոնյանի: Ըստ ավանդության՝ Վարդան Մամիկոնյանն այստեղ է հավաքել իր զորքի մի մասը:

Հուշարժաններով երբեմնի հարուստ Կալեր եւ Վանք գյուղերն այսօր գոյություն չունեն: Անհետացել են աշխարհագրական քարտեզից, քանզի անհետացել են երկրի երեսից: Գոյություն են ունեցել հազարամյակներ, իսկ այժմ չկան: Այստեղ պահպանվել են այսպես կոչված մեգալիթյան մշակույթի մնացորդներ, որոնց ակունքները հասնում են դարերի խորքը, մինչև նեոլիթ՝ նոր քարե դար: Իսկ իրենք՝ բնակավայրերը, չեն պահպանվել: Երկու-երեք տասնամյակ առաջ դեռես կային քարտեզի վրա: Իսկ այսօր չկան: Հենց երկու-երեք տասնամյակ առաջ, հաշվի չառնելով լեռնային շրջանի յուրահատկությունները, ձեռնամուխ եղան այսպես կոչված կուլտմետությունների խոշորացմանը եւ այնքան «խոշորացրին», որ հազարամյակներ գոյություն ունեցող բնակավայրերը դադարեցին գոյություն ունենալ:

Մինչև վերջին ժամանակներս նույնպիսի ճակատագիր էր սպասում Լիճք ու Տաշտուն գյուղերին: Այսօր, բարեբախտաբար, վիճակը բարելավվում է:

* * *

Լեռնային բարձրադիր Լիճք գյուղում, որ հենց ի վեր հայտնի է իր այսպես ասած կրթական ցենտրով, բնակչության մարդահամարը վարվում է անհիշելի դարերից: Սակայն պահպանվել են միայն 1873 թվականի տվյալները: Այն ժամանակ գյուղն ուներ չորս հարյուր բառասունչորս բնակիչ: Արեւմտյան Հայաստանում կազմակերպված ցեղապանությունից հետո, գաղթի հետեւանքով Լիճքի բնակչությունը հասավ մոտ հազար մարդու:

Այնուհետև կրճատվեց: Եվ 1950 թվականին բնակչության թիվը կազմում էր ութ հարյուր տասներկու մարդ: Մոտավորապես նույն պատկերն էր նաև հարեւան Տաշտուն գյուղում, որը Լիճքից փոքր-ինչ վերեւ է գտնվում:

Այսօր երեք հարյուր երեք մարդ է ապրում Լիճքում, Տաշտունում երկու հարյուր երեսունվեց: Գյուղերում կան լքված տներ: Անտեր տներ: Այդ տներում քամին է սուրուն: Եվ անտեր կատուններն են ապաստան գտել:

Բարեբախտաբար, ես արդեն տեսել եմ, թե ինչպես են ապակի զցում մի ժամանակ լքված տների պատուհաններից: Արդեն մանկան ծծաղ է լսվում այդ տներում: Ոչ միայն դարձարեք էլ բնակիչների արտահոսքը, այլև սկսել են վերադառնալ նրանք, ովքեր մի ժամանակ հեռացել էին գյուղից: Մարդկանց հոգում հույս է ծնվել: Նաև հավատ ու հանոգվածություն, որ իրենց գյուղն էլ կզարգանա, ինչպես զարգանում է ամբողջ հանրապետությունը, մեր ողջ երկիրը: Լոկ խոսքեր չեն սրանք:

Ես երկար գրուցեցի Լիճքի եւ Տաշտունի սովխոզների դիրկարողների Գարեգին Ստեփանյանի եւ Լորիս Պողոսյանի հետ, կուսկոմիտեի քարտուղար Հովհաննես Սարգսյանի, գյուղատվտի նախագահ Վարու Համբարձումյանի հետ: Խոսում էինք ոչ թե անցյալի ու ներկայի մասին, ինչը ընդունված է սովորաբար, այլ վաղվ մասին, գալիքի մասին, որ սկիզբ է առել արդեն այսօր: Խոսում էինք այն մասին, որ կուսակցության եւ կառավարության ղեկավարների գալուց հետո շրջանում անմիջապես սկսեցին ճանապարհի շինարարությունը, որին այս վայրերի բնակիչները սպասում էին, գուցե, հազարամյակներ: Եվ այժմ կառուցում են ոչ թե արահետ կամ ժամանակավոր ճանապարհ, այլ ժամանակակից, ասֆալտապատ ճանապարհ:

Շրջանի եւ հատկապես Մեղրիի բնակիչները վաղուց աշխատում են լուծել բնակավայրերին ջուր մատակարարելու պրոբլեմը: Խմելու ջուրը չի բավակա-նացնում: Եվ այժմ արդեն թափով առաջ է գնում ջրատարի շինարարությունը: Մարդկանց ոգեւորեց այն հանգամանքը, որ մամուլում շրջանի հետագա զարգացման վերաբերյալ կուսակցական- կառավարական փաստաթղթերի հրապարակումից անմիջապես հետո սկսեցին իրականացվել այդ միջոցառումները: Մարդիկ լցվեցին հավատով: Եվ այդ հավատը նրանց կապեց հայրենի հողի հետ: Ամեն օր նրանք տեսնում էին, թե Ղափանը Մեղրիից բաժանող լեռնազագաթի վերելում ինչպես է հայտնվում հոնդացող ուղղաթիռը՝ փորից կախված վիթխարի պանելային սալը: Այդ սալը ջրմուղ կայանի շինարության համար է: Սովխոզների ղեկավարները հպարտությամբ են խոսում այն մասին, որ հիմա իրենք բաց ճակատով են մարդկանց տանում աշխատանքի: Այժմ մարդիկ հավատում են նրանց: Եվ այդ հավատը ավելացրել է նրանց պատասխանատվությունը հայրենի հողի հանդեպ:

* * *

Գյուղերում հաճախ կարելի է լսել, որ երիտասարդները բանակ կամ ուսման մեկնելուց հետո մեծ մասամբ այլևս չեն ուզում գյուղ վերադառնալ: Իբր նրանք, դուրս գալով «խավար» գյուղից, իրենց աչքով տեսնում են քաղաքի «հրապարակները» եւ այլևս չեն ուզում են դառնալ այնտեղ, ուր ոչ թատրոն կա, ոչ ասֆալտ, ոչ օդանավակայան, ոչ էլ խոշոր ձեռնարկություն:

Բնակչության հոսքը ինքնին ժամանակակից անեմաբարդ պրոբլեմներից մեկն է, եւ, ինչպես հայտնի է, սոցիոլոգները, տնտեսագետները եւ ուրիշ այլ մասնագետներ լրջորեն զբաղվում են այդ հարցով: Ի դեպ, նրանք, ինչպես երևում է վերջին տարիների հրապարակումներից, պնդում են, որ աշխարհի տարբեր անկյուններում արդեն նկատվում է հակառակ պրոցեսը. քաղաքի բնակչությունը ետ է գնում գյուղ, դեպի բնություն: Չկամենալով խորանալ այս բազմաբարդ պրոբլեմի մեջ, կուզենայի կանգ առնել, ըստ իս, մի կարեւոր հանգամանքի վրա: Կարծում են, գյուղի բարեկարգումից բացի, գյուղական կենցաղի մեջ ժամանակակից ուրբանիզացիայի տարբեր մտցնելուց բացի անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել այն մարդկանց հոգեբանական տրամադրվածությանը, ովքեր ցամկանում են հեռանալ քաղաքից կամ էլ որոշել են հիմնովին հաստատվել գյուղում: Այս տեսանկյունից Մեղրին հարուստ է հրաշալի օրինակներով, երբ նրա զավակները, ճաշակելով «եվրոպայի հրապարակները», անգայման վերադառնում էին հայրենի օջախ: Եվ վերադառնում էին ոչ թե գառմայա ծերունիների դարձած, ցանկանալով անգայման թաղվել հարազատ հողում, այլ վերադառնում էին որպես կրթված մարդիկ:

Ահա մի ճակատագիր, որի մասին ինձ պատմեց այս շրջանի իսկական տարեգիր, ուսուցչուհի Լիլիկ Պողոսյանը:

Անցյալ դարի յոթանասնական թվականներից մեղրեցի Ղեւոնդ Մեծլունյանի առաջին ուսուցիչները եղել են մասնավոր մարդիկ: Այնուհետև ուսումը շարունակել է Ղարաբաղի մշակութային կենտրոններից մեկի՝ Շուշիի ռեալական ուսումնարանում: Ապա մեկնել է Մոսկվա եւ ընդունվել Լազարյան ճեմարան: Ճեմարանն ավարտելուց հետո նրան ուղարկել են Բեռլին, որտեղ 1880-1890 թվականներին լսել է Ֆրիդրիխ Էնգելսի դասախոսությունները:

Երբ տարիներ հետո Բեռլինի համալսարանն ընդունվեց ապագա անվանի գիտնական Կարո Մելիք-Օհանջանյանը, շատ զարմացավ, իմանալով, որ Գերմանիայի մայրաքաղաքում լավ են հիշում տաղանդավոր հայ ուսանող Ղեւոնդ Մեծլունյանին: Իսկ Ղեւոնդ Մեծլունյանը այդ ժամանակ արդեն գտնվում էր Մեղրիում: Նա իրաժարել էր բեռլինյան եւ մոսկովյան պրոֆեսորների բավական հեռանկարային առաջարկություններից, որոշե-լով, որ իր տեղը հայրենիքում է: Եվ երկար տարիներ նա գյուղական ուսուցիչ էր Մեղրիում: Մեղրեցիների շատ

Եւթրոնդներ են կրթություն ստացել հրաշալի քաղաքացի, համեստ ուսուցիչ Ղեւոնդ Մեծունյանի մոտ:

* * *

Արշավախումբը երրորդ օրն է ճանապարհորդում է Մեղրիի շրջանում: Կամա թե ակամա հիշում են փոթորկալից ծովերում իմ երկարատեւ նավարկությունները փոքրիկ նավակներով կամ անծայրածիր տունդրայում շնասահակներով ուղեւորություններ, երբ գլխավորն այն էր, որ ճանապարհի նշված հատվածն անցնելիքն որոշակի ժամանակամիջոցում: Այժմ ամեն ինչ այլ է: Այժմ, ուզում ես թե չէ, ստիպված ես լինում անընդհատ ետ դառնալ արդեն անցած ճանապարհով: Էլեկտրոնային մեքենայի հաշվարկած լավագույն երթուղին ընդամենը լավագույնն է: Այն իդեալական չէ: Բարձրանալով լեռները, ոչխարապահների մոտ, գիտես, որ նույն կածանով էլ պիտի ետ դառնաս: Միայն մի բան է այստեղ զարմացում եւ նույնիսկ ուրախացում: Ագարակում, օրինակ, մենք տեսանք նոր ծաղկած ծառեր, իսկ լեռներում, ուր հովիվների հյուրն էինք, մինչեւ գոտկատեղ խրվում էինք ծյան մեջ, երկու աշխարհ, երկու կլիմա՝ երկու ժամվա հեռավորության դեպքում:

Հովիվների մոտից վերադառնալիս կանգ առանք Տաշտուն գյուղում, որտեղ վերջերս կառուցվել է հողակապ կուլտուրայի տուն: Այդպիսի շենքին կարող է նախանձել ցանկացած քաղաք: Կուլտուրայի տան դահլիճներից մեկում ամբողջ պատը գրավել է լուսանկարների վահանակը: Ամբողջ պատը: Լուսանկարները փակցված են իրար կողք: Նրանք շատ-շատ են: Ռազմանականից չվերադարձած տաշտունցիները: Այդ անվերջանալի շարքը բացում են Առաքելյան հինգ եղբայրները, որոնք զոհվել են ռազմի դաշտում: Հինգերեւ եւ հերթի մահով: Ահա նրանց անունները: Սուրեն, Գուրգեն, Մուշեղ, Հովսեփ, Մկրտիչ:

Հայկական այս փոքրիկ շրջանից մոտ երկու հազար մարդ մարտնչել են Մեծ հայրենական ռազմադաշտերում: Նրանց գրեթե կեսը տուն չի վերադարձել: Այժմ շրջանի ղեկավարությունը խրախուսել է կոմերտմոնիթորան նախաձեռնությունը՝ ծառուղի ստեղծել ժողովրդի զոհված զավակների հիշատակին: Երիտասարդները ամեն մի զինվորի հիշատակին ծառ կտնկեն, եւ այսպիսով կստեղծվի սրբազան պուրակ:

Արշավախումբը վաղը ըստ գրաֆիկի արդեն պետք է լինի հարեւան Ղափանի շրջանում: Գրաֆիկը խստորեն պահպանելու ենք: Սակայն, որքան էլ որ զնահատուն ենք հաշվիչ կենտրոնի աշխատակիցների ջանքերը, այնուամենայնիվ ժամանակ առ ժամանակ ստիպված պիտի լինենք նրանց առաջարկած ճանապարհից շեղվել:

Այսօր հնարավոր չէ Մեղրիից Ղափան գնալ ավտոմեքենայով: Շրջաններն իրարից բաժանող լեռնանցքը ծածկված է ձյունով եւ գործնականում հնարավոր չէ գտնել արահետը, որտեղով ամառը մի կերպ անցնում էին ավտոմեքենաները: Տաշտունից արդեն մի քանի կիլոմետր հեռանալուց հետո, այնտեղ, ուր գտնվում են սովխոգի ոչխարների փարսիները, ճանապարհի հազիվ նշմարելի ժապավենը ասես մտնելով ձյան ծածկույթի տակ, կտրվում է: Եվ հրաժեշտ տալով շրջանին, ես կրկին երախտագիտությամբ հիշեցի նրանց մասին, ովքեր կառուցում են երկու շրջաններն իրար հետ կապող, հիրավի Մեղրին փրկող ճանապարհ-երակը: Ես տեսա այն մարդկանց, որոնք ժպտալեն ու անբող հպարտությամբ էին արտասանում «կառուցում ենք» բառը: Դա նշանակում է, ոչ թե պարզապես երազում են եւ խոսում, այլ իսկապես կառուցում են փրկարար, կյանքի ճանապարհ: Այդ մարդիկ հիշում են, թե ինչպես եկվոր հյուրերը տարիներ շարունակ այս ու վախ քաշելով, ձեռքերը թափահարելով, Մեղրին համեմատում էին Շվեյցարիայի հետ, բայց ոչ ոք կառուցման հարցով չէր մտախոգվում: Եվ միայն վերջերս մարդիկ հանկարծ զգացին, որ իրենց դեմքին ժպիտ է հայտնվում ամենից առաջ այն բանի գիտակցումից, որ ղեկավարների խոսքն ու գործը իրար բռնում են: Նրանք համոզված են նաեւ, որ Մեղրիի ճանապարհաշինարարների



Հավատ դեպի կյանքը

Չ գտախոսություն

ՄԵՐՈԻ ԽԱՆՉԱԴՅԱՆ

Շանր հիվանդ է ջահել, գեղեցիկ, փոքրաբ, բարի-բարի մի կին: Նրա համար պարտանք են կարում, որոշում գեղեցմանի րեղը: Սարափելի է...

Բայց, ով հրաշք, կինն ապրում է եւ աշխարհ բերում իր անդրանիկին՝ տղա: Զորի Բալայանն իր նոր «Օջախ» գիրքն ավարտելով այս դեպքով, հեքիաթ չի պատմում գիրքը գարնանալի ու «ընթերցելի» դարձնելու համար, ոչ: Նա հենց երեկ եղած իրողություն է պատմում: Ի՞նչ է ուզում ասել արդեն լայն ճանաչման արժանացած մեր հեղինակը: Եզրափակիչ տրամաբանությունը պարզ է՝ 63 տարի առաջ մեռնում էր Հայաստանը: Եվ գիշանգոյներ էին կուտակվել նրա գլխավերելում թուրք փաշա, քուրդ ցեղապետ, գերմանացի բարոն, ֆրանսիացի դիվանագետ, անգլիացի նավթագործ, իրենց կտուցները հաճույքով բաւում, սրում էին ծեր Արարատի ժայռերին իրենց ձեռքով սպանված Հայաստանը հոշոտելու:

Բայց Հայաստանն ապրեց, հայ ժողովուրդն ապրեց իր Արեւելյան բնաշխարհում:

Այս գիրքը նորություն է մեզանում՝ իր ոճով, ոգով, գեղարվեստական ուժով եւ, որ կարեւորն է, ճշմարտության հզորությամբ:

Որտեղ ապրեցնելու եւություն կա, այնտեղ ճշմարտությունը դառնում է անխոցելի: Անխոցելիորեն ճշմարիտ է Ձորի Բալայանի «Օջախը»: Գրել է ազնվագույն հավատարմության պատվանդանից: Եվ սքանչելի է ասում՝ «Աշխարհը պատկանում է միայն ազնիվ մարդկանց»:

Գրքում մենք հանդիպում ենք կարծես մեր տեսածին, կարծես մեր ներաշխարհում իմաստավորածին: Հենց այդպիսին է «Օջախը»: Վառ օջախ, շեն օջախ, պալան, պալան ծուխը վրան, հացի բույրով օջախ: Եվ ահա մի նոր անփոփոխ. «Իմ ժողովուրդը տեսավ իր աստեղային ժամը»:

Գրքի էջերը դառնում են շոշափելի, ընկալելի, սիրելի: Քո առաջ քո հայրենիքն է՝ առողջ շնչող, վստահ քայլող դեպի վաղվա օրը:

- Անհնարին է Արաքսի փովով գնալ դեպի Մեղրի ու չմտնել հայոց իռչանավոր Ազուլիս քաղաքավանի ավերակները: Հետո, երբ մտնում ես Մեղրու նորաստեղծ Ագարակ քաղաքը, երկու պատկերը դառնում են ցցուն՝ ավերված Ազուլիսը եւ բոլորովին ամայի տեղ կառուցված նոր Ագարակը: Ավերվածի վերաշինման, կենդանացման շատ պատկերներ կարող ես տեսնել շատ էջերի մեջ: Ձորին ճիշտ է, երբ ասում է՝ «Հիշելով մեր անցյալը, մենք շատ չպիտի կրկնենք մեր դժբախտության մասին»:

Այսպես՝ Մեղրու շրջանը, նաեւ Ամասիայի, Դուկասայանի շրջանները ընդհանուր եւ հզոր զարգացումից կարծես դուրս են մնացել: Ի՞նչ անել: «Շրջանում փաստորեն չկան ճանապարհներ»: Սա ախտորոշումը: Անհապաղ պետք է ժամանակակից ճանապարհներ ստեղծել շրջանում (այս դեպքում՝ Մեղրիում): Սա արդեն պետական մեծ ձեռնարկման պաշտպանելն է գրողի կողմից:

Այլ օրինակ: Ոչխար պահելը մեր շատ շրջաններում տնտեսապես (եւ այլ առումներով) ոչ միայն շահութաբեր չէ, այլեւ՝ վնասակար: Եվ ահա պատկերը. «Այսինչ շրջանում այնքան բուրդ են ստանում, որքան այծից կաթ»: Սա ցավալի է, ցավն է՝ ճանապարհը շինվեց, իսկ «բրդի ցավը» դեռ կա:

Մեր շատ գյուղերի բնակչությունը նվազում է աղետալի

չափերով: Ինչո՞ւ: Նախ՝ որոշ գյուղեր լղարում են, որովհետեւ ջուր չունեն թե խմելու, թե ոռոգելու: Գորող սրտանց, բարեկամաբար, սրտացավ գրուցում է անհամար մարդկանց հետ: Այդ անհամարների 90 տոկոսը ջահելներ են, կոմերտակառուցողներ, մարդիկ, որոնց պորտն այդ գյուղերում են կապել: Եվ նրանք ցույց են տալիս ջրի ակունքը, դա բերելու ուղին: Ոչ միայն ցույց են տալիս, այլեւ իրենք՝ այդ երիտասարդ մարդիկ, շատ տեղեր իրենց քրտինքով են անում դա:

Որպեսզի երիտասարդությունը չհեռանա գյուղից, պետք է գյուղում ստեղծել գործարանային օջախներ՝ ամառ-ձմեռ աշխատանքով ապահովել մարդկանց, այն էլ բավականին շոշափելի աշխատավարձով: Շինուհայր գյուղի բնակչությունն աճում է, որովհետեւ այնտեղ գործարան են ստեղծել, մարդիկ գործ ունեն: Մարտունուն բնակչությունը աճում է: Այնտեղ եւս աշխատանքի լիովին ծանրաբեռնվածություն է ստեղծված:

Մեր քարն ավելի առատ է, քան հողը: - «Հայի համար քարը սուրբ է, - գրում է Բալայանը: - Ոչ մայն այն պատճառով, որ քարն իր հայրենիքն է, այլ որովհետեւ նա քարն ավելի շատ է տեսել, քան արեւը»: Ուրեմն, կամուրջ, տուն, խաչքար լինելուց առաջ մեր քարը պետք է հող դառնա, հաց դառնա: Նման պատկեր՝ քարը հող չինելը, Ձորին տեսել է Աշտարակում եւ այլ տեղեր ու հիացել:

Հրագրանի Մեղրածոր գյուղում 30 տարի առաջ մոտ 1000 մարդ էր ապրում, երեսուն տարի հետո՝ 2500: Գերագույն է: Ինչի՞ շնորհիվ: Ասեն՝ աշխատանքն այստեղ լավ է կազմակերպված, մարդիկ լավ են վաստակում: Եթե 30 տարի առաջ այս գյուղի մեկ կովի կաթնատվությունը եղել է 600 կիլոգրամ, այժմ դարձել է 2600: Ահա սա իսկական գործ է:

Իջեւանը քաղաք դարձավ գորգագործական կոմբինատի շնորհիվ: Կանոն զարգացավ արդյունաբերական զանազան ճյուղեր ստանալով: Ապարանի Վարդենիս գյուղի ծերունին տրտմունք է, որ երիտասարդները հեռանում են գյուղից, որովհետեւ «գյուղում զբաղմունք չունեն»: Ուրախանում է, որ Ծեմական ու Շաղկաշեն գյուղերից հեռացած մարդիկ վերադառնում են գյուղ:

Մենք եւս հեղինակի հետ կիսում ենք մեր բնության՝ օդի, ջրի, հողի աղտոտման, թունավորման բողոքը, բաներ, որ կատարվել են երեսնական բվականներին եւ դեռ հետո էլ, տնտեսությունը հաճախ ոչ ճիշտ, երբեմն սխալ վարելու հետեւանքով: Գոհ ենք, որ վերջին տարիներին սկսել են անցյալի սխալներն ուղղել: Խոսելով, ասենք, Հրագրանի փոշեծխերի մասին, այնտեղ 60-ական թվականներին տեղադրված գործարանի մասին, հեղինակն ասում է. «Եվ կգա այն ժամը, երբ գործարանը հրաժարական կտա»: Մենք հավատում ենք դրան: Հավատում ենք, որ Ալավերդու օդի թունավորումը եւս վերջ կունենա, կկտրվի նաեւ Կիրովականի «ախաբեկիչ աղվեսի պոչը»:

Միտւրյանի շրջանի շատ գյուղերի բնակիչները ավելանում են: Այդտեղ մեկ հեկտարից 546 ցենտներ շաքարի ճակնդեղ են ստանում, որ մեծ ցուցանիշ է, այն էլ 2020 հեկտարից: Թալիքի մեռյալ հողերը կենդանացել են: Այստեղ էլ ջրի հոգս կա: Եվ ահա կառուցվում է Ախուրյանի քրամբարը: Այս քուրը կհագեցնի հողի ծարավը, նաեւ հողեր կտնոգի Հոկտեմբերյանի շրջանում: Բայց այստեղ էլ (Հոկտեմբերյանում) մեծ հոգս կա՝ «ջրերի ներծծման» (հարածների կլանում), ջրի կորուստը «կազմում է մոտ հիսուն տոկոս»:

Այսպես՝ շերտ-շերտ մեր մեծ կյանքի ծալքերն են բացվում մեր առջեւ: Եվ, ի վերջո, կրկին հպարտանում ենք քո հանրապետությանը, քո հարազատ ժողովրդի սխրանքով: Հեղինակը անխնայ է այստեղ-այնտեղ բռնկված բյուրոկրատիզմի եւ այլ մերժելի երեւույթների դեմ:

Այսպես, ուրեմն, կարողավ Ձորի Բալայանի «Օջախ» նոր գիրքը, հավատում ես եւ հեղինակին, եւ այն բանին, որ մոխիրներից վերծնված մեր այդ հզոր օջախը հավիտեանական է, ողջ հայ ժողովրդի ապագա շենության ու փրկության գրավականն ու պատվանդանը: Ապա հանդիպում ես այդ աշխարհաշեն գործերն արած մարդկանց, անթիվ անհամար մարդկանց, մեր մարդկանց՝ գորավարի թե գիտնականի, հողագործի թե թունել կառուցողի, բժշկի, հովվի, գորղի, կուսակցական-պետական աշխատողների, անհամար երիտասարդների եւ հպարտությանը ես լցվում քո այդ հարազատների հետ մեկ անգամ էլ շփվելով: Եվ այս մարդիկ ունեն իրենց գեղարվեստական ներշնչող ուժը՝ գրողի հոգեբանական քուրայով անցկացված, թրծված կերպարներ դարձած:

Ես սկզբում օրինակ բերի մահից փրկված ջահել, գեղեցիկ, տնարար կնոջը: Այս օրինակը խիստ բնորոշ է մեր Հայաստանի Հանրապետության համար: Ամենածանր իրավիճակում էլ մեր ժողովուրդը հավատ է ունեցել իր ապագայի նկատմամբ, հավատ դեպի կյանքը: Այս գիրքն էլ այդպիսին է՝ հավատ դեպի կյանքը:

«ԱՎԱՆԳԱՐԴ»
25 նոյեմբերի 1981թ.

շուտով ընդառաջ կգան դափանցիները: Դժվար է ասել, թե նրանք որտեղ կհանդիպեն: Հայտնի է միայն մի բան: Անպայման կհանդիպեն եւ շուտով: Այնքան Մեղրիից Ղափան գնալու համար հարկ չի լինի մի ամբողջ գիշեր անցկացնել գնացքում: Դրա համար կպահանջվի մեկ ժամ: Իսկ այժմ գիշերը պետք է անցկացնեն

գնացքում: «Ձանգեզուր» խրոխտ անունը կրող Երևան-Ղափան գնացքը, կանգ առնելով գրեթե ամեն մի հեռագրասայան մոտ, դանդաղ սողում է Արաքսի երկայնքով, որը բաժանում է Սովետական Միության եւ Իրանի սահմանները: Հենց որ վարդագույն արշալույսը դանդաղորեն ներս թափանցեց վա-

զոնի լուսամուտներից, ես նստեցի սեղանի մոտ: Սկսեցի թերթել բլոկնոտիս գրառումները: Գլուխս պտտվեց: Մեկ շրջանը միայն մի գրքի նյութ է տվել: Նախօրյակին Մեղրիի շրջանի մասին նոթեր էի ուղարկել խմբագրություն: Եվ այնտեղ սոսկ փշրանքներ էին: Բլոկնոտումս անհամար գրառումներ ունեցի: ԵՑ 8

Ձորի Բալայան. ճանապարհորդություն Այունիքում

Չորի Բալայան. Ճանփորություն Այունիքում

Օջախ

Հատված Չորի Բալայանի համանուն գրքից

ՍԿԻՉԲՆԸ ԵՅ 7

Մեր կամ, նշումները, պայմանական նշաններ, որոնցից միայն են կարող են գլուխ հանել, ինչ-որ տղազրական նշաններ, որ հնարուն էի տեղնուտեղը: Ու ես գիտեմ, եթե դրանք հենց հիմա չվերծանեմ, հետո էլ ոչինչ չեմ հասկանա: Բացի այն տակավորություններից, որոնցից չեմ բաժանվի ողջ կյանքումս, կան նաեւ բլուկնոտի թերթիկներ, որտեղ ժողովված են մտքեր, գաղափարներ, արտահայտություններ, երկխոսություններ: Այստեղ են գրված իմ նոր ծանոթների անուն-ազգանունները: Հրաշալի բան է ճանապարհորդությունը: Բառն ինքն էլ մի տեսակ ասես կենդանի, ասես շարժման մեջ լինի: Ամեն օր, եթե չասենք ամեն պահ, գտնվել ճանապարհին, ես ամեն օր, եթե չասենք ամեն պահ, ծանոթանալ նոր մարդկանց, նոր ճակատագրերի հետ, որոնք ներկայացնում են մի ամբողջ աշխարհ, մի գարնանալի աշխարհ:

Իհարկե, որքան էլ կարելու է լինեն այդ տակավորությունները, անհնար է դրանք մտցնել ռեպորտաժների մեջ, որ ուղարկում էի խմբագրություն մի քանի ամիս շաբաթանակ, արշավի ողջ ընթացքում: Մի բան է ապագա գրքի համար նյութեր հավաքելը, ես բոլորովին այլ բան է շուտափույթ հրատարակումը լրագրում: Այժմ գրքի վրա աշխատելիս շատ ավելի կարելու են համարում ընթերցողի հետ խորհրդածել այն պրոբլեմների մասին, որոնց առնչվել են, շրջանի պատմության որոշ էջերի, սովետական իշխանության տարիների կրած վերափոխումների մասին: Սակայն «Վերածնունդ» արշավի աշխատանքներից բացի ես ունեի իմ, այսպես ասած, գերխնդիրը: Այն է՝ տեսնել ապագան, խոսել գալիքի մասին, որն այսօր է ծնունդ առնում:

Վագոնում նստած աչքի են անցկացնում հաստիկ բլուկնոտներս, գրառումներ են անում եւ չեմ կարողանում բաժանվել այն բերկրալի մտքից, որ իմ ձեռքում են պահում այսպիսի մի շրջափելի հուշ սքանչելի երկրի՝ Սեդրիի մասին: Եվ հանկարծ մտածում եմ, որ «ուղեկոսություն» մի խոսք անգամ չկա Ազարակի, նրա լեռնահանգի շրջանները, կարելի է վերածել ցիտրուսային այգու, որը լիովին կարող է ապահովել հանրապետությանը կենսարար C վիտամինով:

«Ուղեկոսություն» դուրս են մնացել նաեւ հիշարժան հանդիպումները Հանքավանում, Կուրխում եւ Գուղեմիսում: Շրջանի կրթականությունը մի լիքը թղթապանակ նյութեր հավաքեցին իրենց կազմակերպության պատմության մասին: Հատկապես շատ չարչարվեց կրթականությանը հեղինակներից մեկը՝ Միքայել Օհանյանը: Ափսոսացի, որ ռեպորտաժում ոչինչ չեմ ասել շրջանի հույակապ հիվանդանոցի մասին, որտեղ աշխատում են նվիրված փորձառու բժիշկներ:

Ես չհասցրեցի ընթերցողին պատմել թանկարժեք մետաղների նոր հանքավայրի մասին: Հեռու չէ այն օրը, երբ մեր երկրաբանների ջանքերի շնորհիվ այստեղ կծնվի մի նոր, ժամանակակից ավան, որը գուցե կանվանվի Ոսկեան:

Թերթիկով Սեդրիի վերաբերյալ բլուկնոտներս, ինքս էլ չեմ կարողանում հավատալ, որ երկրաբան լեռներում կորած այս փորձի շրջանը այդքան շատ բան է տալիս հայրենիքին. պղինձ եւ մոլիբդեն, բարձրորակ պանիր եւ պահածոներ, հրաշալի գինիներ ու միս: Շրջանը կառուցվում է, վերակառուցվում: Կառուցվում են ինձ հարկանի շենքեր: Մի այդպիսի շենք ար-

դեն պատրաստ է: Հեքիաթային տեսարան է, մուգ կապույտ լեռների ֆոնի վրա վեր է խոյացել վարդագույն բարձրահարկ շենքը:

Անհնարին է ամեն ինչի մասին գրել: Ինքս ինձ միփթարում եմ նրանով, որ մինչեւ կյանքիս վերջը կպահեմ այս բլուկնոտները, որոնք կլրացվեն յուրաքանչյուր շրջանում: Կպահեմ մոտս ինձ համար:

Գնացքը դանդաղ մոտենում է Ղափանին: Ուղեւորները իրար են նայում հավաքելով իրերը: Վագոնի փնթփնթան ուղեկողը հավաքում է ճմռված անկողինները: Ես բարակ ժապավենով կապում եմ «Սեդրիի» մակազրույթյամբ թղթապանակը եւ դնում ուղեպայուսակիս մեջ:

Նոր թղթապանակի վրա մեծ-մեծ տառերով գրում եմ «ՂԱՓԱՆ»:

Ինձ թվում էր, թե ամեն ինչ գիտեմ Ղափանի շրջանի մասին: Գիտեի, որ շրջանում ապրում է վաթսուհի հազար մարդ: Տարածքը հազար երկու հարյուր վաթսուհի բառակուսի կիլոմետր է: Վարչական շրջանը ստեղծվել է 1920-ական թվականներին: Բայց այս թվերի, այս տվյալների, ցուցանիշների մեջ չկա անկրկնելի, կենդանի Ղափանի ոգին:

Առաջին իսկ րոպեներից ինձ ապշեցրեց այն, ինչ սովորական է դարձել Ղափանցիների համար: Նոր, գարնանալիորեն գեղեցիկ տները, որ սանդղածե բարձրանում էին սարն ի վեր: Իհարկե, դարերի ընթացքում, հատկապես այն ժամանակներից սկսած, երբ մենք գրկվեցինք մեր հարթավայրային հողերից, միշտ էլ տներ ենք կառուցել սարավանդերին: Կառուցել ենք այնպես, որ հարեան տան կտուրը մյուս տան համար բավ է ծառայել: Բայց այն, ինչ արել են Ղափանցիները, ապշեցուցիչ է: Ղափանի կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար Ռ.Ա. Մինասյանը պատմում է, որ լեռնագրադղի ճարտարապետները չէին հավատում այդ մտահղացմանը, մինչեւ չտեսան իրենց աչքով: Վերելակավոր, ժամանակակից բազմահարկ տները բարձրանում են սարն ի վեր: Հարթ տեղում տուն կառուցելը, անշուշտ, ավելի հեշտ է: Բայց այդպիսի տեղ չկա: Լեռներ են: Այսպիսին է Հայաստանը, եւ, ինչպես ասում են, ոչինչ չես կարող անել:

Ղափանի կրթականությանը դեկավարները առաջին իսկ ժամից որոշեցին ցույց տալ ինձ իրենց քաղաքը: Եվ դա, կարելի է ասել, անում էին մեծ արվեստով: Սկսեցին նրանից, որ ցույց տվեցին Ղափանի կենտրոնում հրաշքով պահպանված հիմնավոր երկհարկանի շենքը: Քաղաքի հայրերը մինչեւ հիմա էլ մտածում են պահե՞նք դա որպես թանկարժանք մնում, թե քանդեն: Դա իսկապես դժվար հարց է: Մի քանի հազարամյակի պատմություն ունեցող Ղափանը իրականում կառուցվել է վերջին տասնիդըս-քսան տարում: Քաղաքը բոլորովին նոր է: Դժվար է հավատալ, որ ոչ միայն հանրապետությունում, այլև մեր ամբողջ երկրում կարող է լինել այնպիսի երաժշտական ուսումնարան, ինչպիսին կա Ղափանում: Նրա համերգային դահլիճում դրված է էլեկտրոնային երգեհոն: Երգեհոնը տեղադրել են չեխ մասնագետները, որոնք պնդում էին, որ մինչեւ հիմա ամբողջ աշխարհում երգեհոն ունեցել են երկու հարյուր հազարից ոչ պակաս բնակչություն ունեցող քաղաքները: Ղափանում ելույթ են ունեցել Անգլիայից, Ֆրանսիայից եւ այլ երկրներից եկած աշխարհահռչակ երգեհոնահարուներ:

Մաքուր եւ կոկիկ քաղաքը տեղավորված է Ողջի եւ Վաչագան լեռնային գետերի ափին, կառուցված է Ղափանցիների ձեռքով եւ այն նյութերից, որ արտադրվում են Ղափանում. լինեն դրանք երկաթբետոնե բլուկներ թե լուսատեխնիկական հարմարանքներ, կահույք կամ շենքերի երեսապատման սալիկներ:

Շրջանի երբեմնի միակողմանի զարգացումը, որ սկսել էին օտարազգի գործարարները նախահիկտեմբերյան շրջանում, սովետական իշխանության օրոք հիմնովին վերանայվեց: Եվ այսօր, խոսելով Ղափանի շրջանի, նրա հեռանկարների մասին, մենք նկատի ունենք բազմաճյուղ զարգացած մի տնտեսություն, որը թե՛ տնտեսական, թե՛ սոցիալա-

կան տեսակետից հիրավի վերափոխել է շրջանը:

Ղափանում արշավախմբի աշխատանքները սկսելուն պես հասկացա մի բան. Հայաստանի այս հեքիաթային անկյունի պատկառելիությունը, մոտեննուտալությունը իր ողջ եւրոպամբ, ապագայի իր ծրագրերով կարող է հիպոստացնել, ուշադրություն չեղել առօրյա հարցերից, որոնց մասին, թերեւս, պետք է գրել առաջին հերթին: Չնայած որ, պիտի անկեղծորեն խոստովանեմ, մնան մտավախությունը բարձրացնում է տրամադրությունս, ոգեւորում այն հպարտ գիտակցությամբ, որ իմ ժամանակակիցների աչքի առաջ ծաղկում է նախկին փոշոտ ու կեղտոտ ցարական գավառը, որն իր հարուստ ու շռայլ ընդերքից պղինձ ու մոլիբդեն էր տալիս օտարերկրյա մոնոպոլիստներին: Ե՛հիշտ է, այսօր էլ շրջանի գլխավոր խորհրդանիշը լեռնահանքային արդյունաբերությունն է: Ու, թերեւս, նրա հպարտությունը, ինչպես եղել է եւ դարեր առաջ, առասպելներում ու երգերում փառաբանված Քաջարանն է:

* * *

Շատ շատերն են գրել Քաջարանի մասին: Նրա մասին վեպ է գրել Սերո Խանգապյանը, եւ միութենական գրական մրցամակարձում նրան «Քաջարան» վեպը այսօր թարգմանված է շատ լեզուներով: Եվ որքան շատ էի կարդում նշանավոր պոեմա-մոլիբդենային կոմբինատի մասին, այնքան (որքան էլ դա առօրինակ է հնչում) քիչ էի պատկերացնում աշխատանքի պրոցեսն այդ ձեռնարկությունում: Այս պարագծով հասկանալի էր ինձ, ու ես զգում էի, որ պատճառ Քաջարանի ու նրա կառուցվածքի ելեմենտական բարդությունն է: Դեռ արշավի էլենույց առաջ ես շատերի հետ էի խոսել Քաջարանի եւ ընդհանրապես պղնձամոլիբդենային ձեռնարկությունների մասին, որոնցով օրինական կերպով հպարտանում է Հայաստանը: Պարզվեց, որ հպարտանում են շատերը, սակայն լեռնագործների աշխատանքի մասին ոչ մի պատկերացում չունեն: Ես հեռու եմ այն մտքից, թե կկարողանամ լույս սփռել այդ հարցի վրա, բայց ես այնպես պատիվ կհամարեի այդ աշխատանքի մեջ խորանալուց հետո նրա մասին պատմելը:

Ես եւ Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր ինժեներ Բորիս Սկրոչյանը կանգնած ենք հանքաբեր լեռան լանջին: Ամելի ճիշտ կլինի ասել՝ կանգնած ենք հատած կոնի վերին մակերեսին: Մարդը բառացիորեն արդեն կտրել է լեռան գագաթից երեք հարյուր մետր: Մենք հագիվազ ենք լսում իրար, շուրջը դիմադիպում են, հռնդում վիթխարի «Բեյլազներ», իրենց սապատների վրա կրելով քսանյութից-քառասուն տոննա հանքաքար: Գանձասարի հատված գագաթից լավ է երևում բազմահարկ համայնապատկերը, դրանք ուրիշ սարեր են, ուրիշ բլուրներ, որոնք վեր են ասվել վիթխարի աստիճանների, որտեղ տեղի է ունենում հանքանյութի բացօթյա մշակում: Այս ու այնտեղ խլուրդների պես գետնի մեջ են մտնում էքսկավատորները, որ մնանովում են դինոզավրների: Երկու-երեք հարված շերտիվով, եւ քառասուն տոննանոց «Բեյլազ» լցվում է հանքանյութով: Մեքենաները դանդաղ մոտենում են ձագարածե կոնիսին եւ թափում իրենց բեռը: Թե ինչ է կատարվում այնտեղ արդեն չի երևում: Այնուհետեւ պետք է երեւակայել միայն, որ վիթխարի բազմազույն քարեր, որոնց մեջ կան Սեդրիելեւի աղուսակի գրեթե բոլոր էլեմենտները, բայց ավելի շատ պղինձ ու մոլիբդեն, ինչ-որ ձեռով թափվում են ցած, ինչպես թափվում է ավազե ժամացույցի պարունակությունը: Եվ որպեսզի իմանամ, թե դա ինչպես է տեղի ունենում, գլխավոր ինժեների հետ շրջանում եմ լեռն մտնում հանքախորը, որտեղ դրոյումով քանակում են վագոնիկները: Երբ վագոնիկը մոտենում է ձագարածե հանքափորվածքին, սոսկ մի ակնթարթ բացվում է ձագարի բերանը, եւ վագոնիկն արդեն լիքն է: Մոտենում է հաջորդը: Երկու-երեք րոպեի ընթացքում տաք վագոնից բաղկացած գնացքը մեկնում է: Այստեղ ամեն ինչ մեքենայացված է եւ ավտոմատացված: Եվ շատ բան է արել ինքը՝ գլխավոր ինժեները, տեխնիկական գիտությունների թեկնա-

ծուռ, Հայկական ՍՍՀ վաստակավոր գյուտարարը եւ ճորարարը:

Ես նպատակ էի դրել հետեւել հանքանյութի ընթացքին, աշխատանքի բոլոր պրոցեսներին, աչքովս տեսնել, թե ամեն քարերից ինչպես են ստացվում պղնձի եւ մոլիբդենի կոնցենտրատները: Սակայն ստիպված էի այդ ճանապարհն ընդհատել հենց սկզբից: Բանն այն է, որ հանքանյութը մի լեռան լանջից օդով է փոխադրվում մյուս լեռան լանջը, որտեղ գտնվում է հարստացման ֆաբրիկան: Հինգ ճոպանուղիներ ետ ու առաջ են տանում հարյուր հիսուն վագոնիկ: Բարձր մեքենայացման շնորհիվ այժմ Ջանգեզուրի կոմբինատում աշխատում են գրեթե երկու անգամ քիչ մարդ, քան տասը տարի առաջ:

Հարստացման ֆաբրիկայում հանքանյութը երեք անգամ ենթարկվում է մանրացման: Հատուկ բունկերների մեջ մանրացված հանքանյութը թափվում է կոնվեյերի վրա, որն այն տանում է դեպի գնդաղացը: Այստեղ հանքանյութը վեր է անցնում այնուհետ: Հետո խառնվում է ջրի հետ, հսկայական պոմպերի օգնությամբ քարերի մնացորդները անջատվում են այնուհետ եւ նորից ուղղվում դեպի գնդաղացը: Դրանից հետո հանքանյութը մուտք է գործում հարստացման բաժանմունք, որտեղ հարստանում է անհրաժեշտ ռեագենտներով: Վերջին փուլերից մեկի ժամանակ պղինձն անջատվում է մոլիբդենից, եւ այստեղ նրանց ճանապարհները բաժանվում են, քանի որ հետագա հարստացումը եւ փոխադրումը անջատ-անջատ է տեղի ունենում: Եվ ստացվում է քսան տոկոս պղնձի պարունակությամբ պղնձի կոնցենտրատ եւ մոլիբդենի կոնցենտրատ հիսուն տոկոս մոլիբդենի պարունակությամբ:

Այսպիսի հարստություն է տալիս Ղափանը մեր հայրենիքին: Ռուբլիներով արտահայտված համախառն արտադրանքը կազմում է վաթսուհի միլիոն ռուբլի: Այսօր արդեն անհնար է պատկերացնել մեր հայրենիքի պողպատն առանց Ղափանի մոլիբդենի: Նրա մասնիկները, նրա տոկոսները կան տրակտորների եւ տանկերի մեջ, տիեզերանավերում եւ նույն այն «Բեյլազներում», որոնք, ի դեպ, վերանորոգվում են հենց Ղափանում:

* * *

«Բեյլազ» մեքենաները աշխատում են միայն լեռնահանքային արդյունաբերության մեջ: Դրանք հատուկ ստեղծված են բաց հանքամշակման համար: Մեր հայրենիքի բոլոր ծայրերից այդ մեքենաները վերանորոգման են գալիս Ղափանի ավտովերանորոգման գործարանը՝ մեր երկրի խոշորագույն գործարաններից մեկը: Ես տեսնում եմ ջարդված, այլանդակված, խեղճված մեքենաներ, որոնց վրա գրված են այսպես կոչված գրանցման վայրի անունները: Այստեղ կա եւ մեր երկրի էլտրոպական մասը, եւ Միքիլը, եւ Ծայր հարավը, եւ Հեռավոր արեւելքը: Ինչպիսի տեսքով էլ որ «Բեյլազը» ժամանի Ղափան, ամենաուշը մեկ ամսվա ընթացքում դառնում է գրեթե նոր, կոկիկ մեքենա, որը հենց գործարանի բակում ենթարկվում է երեսուն կիլոմետրանոց փորձարկման:

Գործարանի հետ ինձ ծանոթացնում է արտադրության պետ Յուրի Հարությունյանը: Երեսուն-երեսունհինգ տարեկան է, բայց նրան գործարանում անվանում են ծերուկ, որովհետեւ այստեղ ծառայողների եւ բանվորների միջին տարիքը հագիվ է հասնում քսաներեքի: Եվ սրա մեջ էլ խոր իմաստ կա: Տասնամյակներ շարունակ, եթե չասենք դարեր շարունակ, Ղափանը միակողմանի էր զարգանում: Լեռնահանքային արդյունաբերություն եւ վերջ: Տնտեսության վարման մնալով մեզ հանգեցնում էր շրջանի սոցիալական կառուցվածքի զգալի խախտումներին: Եթե ընտանիքի անդամներից մեկն աշխատում էր հանքախորում, ապա մյուսները չէին կարողանում աշխատանք գտնել իրենց համար: Եվ ամենից շատ տուժում էր երիտասարդությունը: Ահա թե ինչու է խոշոր գործարանում երեսնամյա մասնագետը ծերուկ համարվում: Այսօր ոչ ոք չի զարմանում, որ բազմաթիվ արտադրամասերում երիտասարդների հետ միասին աշխատում են աղջիկներ



բրիգադներ: Եվ այնպես են աշխատում, որ շրջանի ղեկավարությունը ՄԱԿ-ի գումարների մետադրման միջոցով հասնում են միասին պահպանված է գործարանի բազայի վրա ստեղծել մեքենաշինական ձեռնարկություն: Ղափանի ավտոմեքենաների գործարանը այսօր արդեն ի վիճակի է արտադրելու «Բելազ» մեքենայի բոլոր դետալները:

Չորի Բալայանի բարին բարի է ծնունդ: Բազմաճյուղ տնտեսությունը պարտավորեցնում է ստեղծել իրար հետ փոխադարձորեն կապված նորամուտ մասնաճյուղեր: Օրինակ՝ ավտոմեքենաների գործարանի ընդլայնումն ու խոշորացումը, ինչպես նաև լեռնահանքային ձեռնարկությունների մեքենայացումն ու ավտոմատացումը ստիպեցին Ղափանում ստեղծել մի շարք գիտական լաբորատորիաներ, որոնք արդեն այսօր կատարում են ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքներ: Օրինակ՝ հանրապետության գիտությունների ակադեմիայի հաշվիչ կենտրոնի Ջանգեզուրի ադապտիվ սիստեմների լաբորատորիան, որը ղեկավարում է երիտասարդ գիտնական Յուրի Բուրնախյանը, ունի իր հաշվիչ մեքենաների պատկանելի պարկը: Լաբորատորիան մշակում է նոր սարքեր, ելնելով լեռնային երկրի պայմանների կոնկրետ պահանջներից: Եվ նրանց սարքերը օգտագործում են ոչ միայն ղափանցիները: Լաբորատորիան զբաղվում է արտադրական պրոցեսների մաթեմատիկական մոդելավորումով: Ներկայումս արդեն հնարավոր չէ պատկերացնել ղեկավարման ավտոմատ սիստեմի հարցերի լուծումը առանց սեփական գիտական լաբորատորիայի:

Բազմաճյուղ տնտեսության զարգացման շնորհիվ այսօր Ղափանը դարձել է ժամանակակից ինդուստրիալ քաղաք, որը բարեբար է ազդում ամբողջ շրջանի զարգացման վրա:

Խստորեն պահպանելով երթուղին գործնականում լինում ենք յուրաքանչյուր բնակավայրում: Հաշվիչ մեքենան միայն մի բան չէր կարողացել հաշվի առնել երթուղին կազմելիս: Ճանապարհի որակը: Բարեբախտաբար, Ղափանի շրջանում այսօր, կարելի է ասել, չկան հին ճանապարհներ: Կան ճանապարհ

նոր է, կան էլ կառուցվում է: Կառուցվող ճանապարհով մենք գնում էինք Ներքին Հանդ գյուղ: Արշավախմբին ուղեկցում էին ղափանցիներ Վիտա Ղազարյանը, Արծրուն Ալեքսանյանը: Ընդհատելով իրար, նրանք պատմում են մեր ճանապարհին ընկած գյուղերի պատմության փառավոր էջերի մասին: Ես հազիվ էի հասցնում ցատկոտ գագիկի մեջ գրի առնել նրանց ասածները: Գրեթե ամեն մի գյուղ տվել է նշանավոր գիտնականներ, գինվորական ու պետական գործիչներ: Ներքին Հանդ գյուղը շրջկենտրոնից ամենահեռու գտնվող գյուղերից մեկն է: Դեռևս մի քանի տարի առաջ գյուղացիները գրեթե մի օր էին կորցնում, որ հասնեն Ղափան: Ճանապարհի չկար: Գյուղը տեղավորված էր թեք սարավանդին: Ներքեում, խոր ծորի միջով հոսում է աղբյուրներից սկիզբ առնող Բասուտ գետը: Նրա երկու ափերին տարածվել է սոսիների չքնաղ պուրակը:

Ճանապարհների բացակայությունը, գյուղի անհարմար դիրքը, խմելու ջրի պակասը հետզհետե ամայացնում էին գյուղը: Բնակչության թիվը զգալիորեն կրճատվեց: Երեսնական թվականներին Ակսել Բակունցը գովերգում էր ոչ միայն այստեղի բնության գեղեցկությունը, այլև մարդկանց, որոնք իրենց աշխատանքով բազմապատկում էին այդ գեղեցկությունը: Եվ հանկարծ գյուղն ասես թռչնեց: Բարեբախտաբար, շուտով ամեն ինչ կփոխվի. շրջանի ղեկավարությունը որոշել է Ներքին Հանդը տեղափոխել անմիջապես գետի ափ: Այստեղ էլ ճանապարհ կա, եւ ջուր:

Ես ճանապարհորդել եմ Ջանգեզուրում: Սյունաց աշխարհում: Եվ իմ երթուղում այդ աշխարհը տարածվում է մինչև Եղեգնաձորի շրջան: Տարածվում է նաև դեպի հարավ, մինչև այժմյան Ղարաբաղ, պատմական Արցախ: Եվ նախքան Սովետական Հայաստանում ճանապարհորդելը, ես երկար ուղեորություն կատարեցի իմ սիրտսում ու հարազատ Ղարաբաղի ճամփաներով: Եղա բոլոր գյուղերում: Եվ այսօր, գտնվելով Ջանգեզուրի ճամփաներին, չեմ կարող չիշել այս երկրի պատմությունը:

Մեր թվարկությունից առաջ երկրորդ դարից սկսած Արցախը նտնում էր Մեծ

Հայքի կազմի մեջ: Ըստ Ստրաբոնի վկայությամբ՝ հարուստ տնտեսություն ուներ է «չափ ալյուրի»: Մ. թ. IV դարի սկզբում քրիստոնեություն է ընդունում: Ամարաս քաղաքում Գրիգոր Լուսավորիչը հիմնում է առաջին եկեղեցին, որի կառուցումն ավարտում է նրա թոռ Գրիգորիսը՝ քրիստոնեության առաջին քարոզիչը Հայաստանի արևելյան զավառներում:

XVII և XVIII դարերում հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի կենտրոնը դարձավ Գանձասարի վանքը՝ կաթողիկոս և պատմիչ Եսայի Հասան Ջալալյանի գլխավորությամբ: Այսօր պահպանվել են ռուս թագավորներին Եսայիի և Ղարաբաղի մելիքների գրած բազմաթիվ նամակներ ու խնդրագրերը, որոնցով նրանք օգնություն էին խնդրում և իրենց պատրաստակամությունն էին հայտնում թուրք նվաճողների դեմ պայքարելու: Հենց Գանձասարի վանքից դեպի Պետերբուրգ ճանապարհ ընկավ հայ ժողովրդի ազատագրական պայքարի նշանավոր գործիչներից մեկը՝ Իսրայել Օրին: Նա առաջինը խիզախորեն վերանայեց հայ ազատագրական շարժման քաղաքական կողմնորոշումը և իր հույսերը կապեց ռուս ժողովրդի հետ: Օրին փաստորեն առաջին հայ պետական գործիչն ու դիվանագետն էր, որ բանակցություններ վարեց Պետրոս Առաջինի հետ և հիմք դրեց հայ-ռուսական քաղաքական հարաբերություններին, որոնք պահպանեցին 1828 թվականին Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորվելով: Իսրայել Օրին կյանքին ու գործունեությանն է նվիրված անվանի գրող Ս. Այվազյանի «Ճակատագիրն հայոց» վեպը:

Սակայն զուտ դիվանագիտական բանակցություններով դժվար էր լուծել ժողովրդի կենցաղ ու մահու հարցը: Ուժի դեմ ուժ է հարկավոր, սրի դեմ սուր: Եվ հենց Ջանգեզուրում, Սյունաց աշխարհում, նշանավոր գործարար Դավիթ Բեկը և Մխիթար սպարապետը զենքը ձեռքներին պաշտպանեցին հայրենի հողը և իրենց ողջ գործունեությամբ կանխավետեցին այն պատմական իրադարձությունները, որոնք հանգեցրին Արևելյան Հայաստանի միացմանը Ռուսաստանին: Այս մասին է պատմում ականավոր արձակագիր Սե-

րո Խանգաղյանի «Մխիթար Սպարապետ» հրաշալի վեպը:

Ծանոթանալով հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի որոշ էջերին, անկարող ես զայել գայրույթ, թե թշնամին ինչպիսի վայրագությամբ է օգտագործել այն անխափան գործող խայծը, որի անունն է երկպառակություն: Տեղական մելիքների անընդհատ գժտություններից օգտվելով, XVIII դարի երկրորդ կեսին քոչվոր ցեղի ներկայացուցիչ Սարիջալի Փանահը ներխուժեց Ղարաբաղ և Շուշի բերդը դարձրեց իր նստավայրը: Հետագայում պարսիկների հովանավորությամբ այդ ինքնակոչ իրեն խան հայտարարելով, հայ մելիքներին հրահրում էր իրար դեմ: Սակայն որքան էլ որ անհաշտ և անմիաբան լինեին հայ մելիքները, հարկ եղած դեպքում կարող էին համախմբվել և հայրենի երկրից դուրս վազել ռազմատենչ քոչվորին: Շուտով պարզվեց, որ Փանահը և նրա կամակատարները պարսից արքունիքի անմիջական դրածոներն են: Այս պարագայում Ղարաբաղցիներն իրենց միակ փրկությունը համարեցին Ռուսաստանի կազմի մեջ մտնելը: Պատմական ակտը կատարվեց 1805 թվականին: Իսկ 1813 թվականին այդ ակտը ամրապնդվեց Գյուլիստանի դաշնագրով: Ղարաբաղցիները ռուսական բանակի կազմում հերոսաբար մարտնչում էին թուրք հրոսակների դեմ: Եվ չնայած ցարիզմի գաղութային քաղաքականությանը, Ռուսաստանին միանալը պատմական հաջեցին ազատեց արտաքին ավերիչ ներխուժումներից, ներքին երկպառակություններից և ֆեոդալական մասնատվածությունից: 1822 թվականին Շուշիի խանությունը վերացվեց և ստեղծվեց ռուսական կառավարությանը ենթարկվող մահանգ: Այստեղ ստեղծվեցին զավառներ, այդ թվում և Ջանգեզուրի գավառը: Այնպես որ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու հարյուրիսունամյա հոբելյանի տարին ես, ճանապարհորդելով Ջանգեզուրում, այլ տարեթիվ եմ նշում՝ Ղարաբաղ և Ջանգեզուրը Ռուսաստանին միանալու հարյուրվաթսունհինգամյակը: Տարակուսանք է հարուցում միայն այն փաստը, որ որոշ «գիտնականներ» փորձում են ՇՄՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ էՑ 10

Չորի Բալայան. ճանփորդություն Այունիքում

Օջախ

Հատված Չորի Բալայանի համանուն գրքից

ՍԿԻՋՐԸ ԷՅ 9

«Ապացուցել», թե հենց Փանահ խանն ու նրա ժառանգներն են եղել Ղարաբաղը եւ Չանգեզուրը Ռուսաստանին միանալու նախաձեռնողները: Կցանկանալից քարտեզը «նույն» էին նրանք անջատվում եւ ո՛ւն միանում: Դեհ, դարաբաղցիները եւ զանգեզուրցիները, հասկանալի է, ազատվում էին թուրքական լծից: Իսկ այսպես կոչված խաները ո՞ր լծից էին ուզում ազատվել: Չէ՛ որ խաները չէին էլ թաքցնում, որ ունեն մի ատելի թշնամի՝ ռուսները: Ու հանկարծ նրանք հոծարակամ որոշեցին մտնել Ռուսաստանի կազմի մեջ: Նման կեղծիքը մի՞թե վիրավորական չէ առաջին հերթին ռուս ժողովրդի համար, որի հազարավոր զավակները գոհվում էին խաների ու փաշաների հրահրած կռիվներում:

Չէ՛ որ կան նաեւ այլ փաստեր, որոնք չի կարելի անտեսել: Անցյալ դարի սկզբում Ղարաբաղում հայերը կազմում էին ինչ-ուրևուր տոկոս: Այդ ինչպե՞ս մի բուռ քոչվորները հանկարծ որոշեցին ուրիշ երկիրը, իր բնիկներով, կամավոր միացնել Ռուսաստանին: Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը բնական եւ օրգանական երեւոյթ է: Այն բխում է ժողովրդի էությունից եւ ոգուց: Ու այս պատմական հարցի ամեն մի նեղզամիտումը վիրավորում է պապերի սխրանքը, որոնք կանգնած են եղել ռուս եւ հայ ժողովուրդների բարեկամության ակունքներում:

Արդեն մարտ ամիսն է, բայց ձմեռը ոչ մի կերպ չի ուզում անձնատուր լինել: Սառը, քթաշունչ քամին լեռներից ծյունափառն անձրեւ է բերում: Տրտում մայում են մեքենայի ապակուն եւ չեն կարողանում լուծել ինձ համար անսպասելիորեն ծագած հարցը՝ ինչպես ճշգրիտ որակեն մթնոլորտային այս տեղումները: Չլուծախառն անձրեւ՝, թե՛ անձրեւախառն ձյուն: Ի՞նչն է շատ, ձյունը, թե՛ անձրեւը: Պարզվում է, որ դա շատ հեշտ լուծվող հարց է: Ղափանից Գորիս տանող ճանապարհը չունի եւ ոչ մի մետր հարթ, հորիզոնական հատված: Վերելքներ են ու փայտեղծներ: Այստեղ ուղիղ րաններն ավելի շատ են ու ավելի թեք, քան նշանավոր Դիլիջանի ուղիղները: Այնպես որ զարմանալի չէ, երբ մեքենայի ապակուն մեկ անձրեւն է խփում, մեկ՝ ձյունը: Մի քիչ բարձրանում ես լեռն մ վեր՝ ձմեռ է: Ցած ես իջնում՝ զարմանալու ես: Այդպիսին է այս երկրի կլիման: Այդպիսին են բնապայմանները: Եվ, նայելով մշուշապատ հեռուն, որտեղ սարալանջերին հազիվ ուրվագծվում են կարմիր ու սպիտակ կոզակներ, ինքը թեզ մտածում ես. լեռնալանջին ծվարած սպիտակ պատերով եւ կարմիր տանիքներով այդ գյուղը մեկ ամիս հետո միայն կսկսի վարուցանքը, իսկ մյուսը, որ նույնպես սպիտակ պատերով է եւ կարմիր տանիքներով, բայց գտնվում է ձորի մեջ, երեւի արդեն ցանց է որոշ կուլտուրաներ: Փոքրիկ երկիր: Ասես ափիղ մեջ լինի: Եվ այսքան տարբեր աշխարհներ, ասես այդ գյուղերը գտնվում են իրարից հեռու լայնություններում:

Իջնելով ձորը, որտեղ շառաչում է զարմանալիս Ռոտանը, ընկնում ես բուլդոզի այլ աշխարհ: Մեքենայի վարորդը՝ շիկահեր, սպիտակամաշկ Արթուր Սարգսյանը, անջատել էր իր «մաքրիչները»: Այստեղ, ներքելում, ոչ անձրեւ կա, ոչ ձյուն: Արեւ է: Մեր գլխավերելում, ասես ուղեկցելով մեզ, շողում է պայծառ արեւը, սահելով սեւ ամպերի պատառոտված ծվեների արանքով:

Գորիսը երիզող լեռները արտասովոր լեռներ են: Աշխարհում ուրիշ ոչ մի տեղ չկան այդպիսի լեռներ: Եվ սրանք իմ բառերը չեն, սա միայն իմ կարծիքը չէ: Տասնյակ աղբյուրներում կարդացել են, որ

Գորիսի ժայռոտ լեռներն ու բլուրները մեր մոլորակի եզակի վայրերից են: Տեսարանը աննկարագրելի է. հենց թեկուզ այն պատճառով, որ ամեն մի ժայռ ունի տարօրինակ կենդանու տեսք, եւ եթե երեսակայությունը լարես, կարող ես տարբեր զազանների տեսնել այստեղ: Արվեստի այս հազվագյուտ գործերը ստեղծել են հրաբուխները, քամին, ժամանակը եւ ջուրը: Եվ այս հեքիաթային շրջապատման մեջ է գտնվում առասպելական Գորիսը, որտեղ, ինչպես ընդունված է ասել, ոչ թե ժամանում են, այլ իջնում են երկնքից: Եվ մենք իջանք Գորիս:

Գորիսում առաջին օրը այցելեցինք երիտասարդ բանաստեղծ եւ արձակագիր Ալբերտ Իսախանյանին: Հյուր գնացինք կոմերտիոթյան շրջանի առաջին քարտուղար Ռադիկ Հայրապետյանին հետ: Ես վաղուց գիտեի գրող Իսախանյանին: Շատ էի կարդացել նրա մասին: Հիշում եմ, նույնիսկ ուշադրություն եմ դարձրել, որ տարբեր բաներ էին գրում նրա մասին, չնայած այդ բոլորի մեջ կար մեկ ընդհանուր բան՝ ավելորդ պաթոս: Պարզվեց, որ Ալբերտը շատ համեստ մարդ է, եւ ինքն էլ է դժգոհ իր մասին գրված ակնարկների ճոռնություններից: Ծակատագիրը դաժան է եղել նրա նկատմամբ: Դա պատահել է լեռնային գյուղում, որը կրում է Հայաստանում շատ տարածված անուն՝ Քարահունջ: Տասնութամյա պատանին ամպրոպից հետո պատշգամբով ուզում է բարձրանալ էլեկտրասյան վրա: Էլեկտրավարը կտրված էր, եւ պատանին ուզում էր լույս տալ գյուղին: Սակայն վայր է ընկնում: Ընկնում է եւ վնասում ողնաշարը: Եվ այդ ժամանակից ի վեր, ասիա արդեն տասնութ տարի, Ալբերտը գամված է անկողնում անդամալույծ ոտքերով:

Ամբողջ հանրապետությունը գիտե նրա ճակատագրի մասին, գիտեն մեր երկրում եւ արտասահմանում: Գիտեն եւ այն մասին, որ Իսախանյանն իր մեջ ուժ գտավ զբաղվելու այն գործով, որին այսօր ծանայում է հավատով եւ ճշմարտությանը: Նա սկսեց գրել: Արդեն լույս են տեսել Ալբերտի երեք գրքերը՝ արձակ եւ չափածո: Այժմ հրատարակության է պատրաստվում վեպը: Ինձ թվում էր, թե Ալբերտը երեւի իրար տեսից «թխում» է դրանք: Չէի պատկերացնում, թե ինչ կարելի է գրել տանը նստած: Ու հանկարծ՝ վեպ: Այն էլ երկհատորանի: Եվ հիմա էլ հեղինակը ավարտում է երկրորդ վեպը: Պարզվեց, որ Ալբերտը ձեռքով ղեկավարվող ավտոմեքենայով շատ է ճանապարհորդում հայրենի երկրում: Հանգիստ է իր ապագա հերոսների հետ: Նա շատ է կարդում, ինչպես ասում են՝ համառորեն աշխատում է իր վրա: Եվ որ ամենազխաժողովրդ է՝ դավանում է մի սկզբունքի, որի մասին ժամանակին խոսել է Մայակովսկին: Երբ մեծ բանաստեղծին հարցրին, թե առաջին հերթին նա ուն կիրառարարներ Չուկոտկայից եկած բանաստեղծի՞ն, թե՛ մոսկվացի բանաստեղծին, Մայակովսկին պատասխանել է. «Իհարկե, առաջին հերթին Չուկոտկայից եկածին, բայց միայն մի պայմանով՝ հավասար տաղանդների դեպքում»:

Այս սկզբունքին հավատարիմ՝ Ալբերտ Իսախանյանը ոչ մի զիջում չի ընդունում: Չի իջնում վիրավորում է նրան: Քանգի նա բանաստեղծ է:

* * *

Ճանապարհորդելով Գորիսի շրջանում, այցելելով նրա ամեն մի անկյունը, ակամա հիշում եմ իմ Ղարաբաղը: Հոդերը նման են իրար, անտառները նման են իրար եւ բարբառներն էլ ոչնչով չեն տարբերվում: Չանգեզուրի անտառներից վայրի մրգերի անհամար բերք կարելի է հավաքել: Զարմանալի միայն այն է, որ բնության այս ողջ հարստությունը, կարելի է ասել, իզուր կորչում է: Ահա մի քանի տասնամյակ է, ինչ, օրինակ՝ Մեղրիի շրջանում, ոչ մի ընկույզ չի կորչում, եւ տեղական ընկույզի մուրաբայի համբավը տարածվել է գրեթե համայն աշխարհով մեկ: Իսկ Չանգեզուրում ընկույզի տնկարաններն ասես անտեր լինեն: Ինչո՞ւ՞ Գորիսում չլինի պահածոների գործարան, որտեղ մշակեին բնության շքավոր պարգևները՝

հոնն ու մոշը, վայրի խնձորն ու տանձը: Որքա՞ն առասպելներ կարելի է լսել հոնի եւ հոնի մուրաբայի մասին, որը, մասնագետ դիետոլոգների կարծիքով, չափազանց բուժիչ է:

Ես, հասկանալի է, միայն իմ անձնական կարծիքը չեմ հայտնում: Ում հետ էլ որ գրուցում էի Գորիսում, բոլորն էլ խոսում էին այդ մասին: Ի դեպ, այդ հարցը հուզում է նաեւ դափնացիներին:

Չանգեզուրցին ինքնամոռաց սիրում է անտառը: Սիրում է եւ հպարտանում անտառով: Գորիսի դարպասների մոտ, Երեւան տանող ճանապարհին կա մի դարավոր անտառ, որը վերջերս բավականին նոսրացել է, գոյացել են մերկ բացատներ: Գորիսցիները որոշեցին այդ բացատներում նոր ծառեր տնկել: Այժմ Չանգեզուրի ծեր անտառում խշշում են ստեղծող մատուցող պուրակները: Այսցիկ, մշտադալար ծառերը ապրեցին, արմատավորվեցին քարաշատ հողում, որը ամրասցնում են իրենց արմատներով:

Սակայն անտառը հիմնականում փռված է սարալանջերին: Սարահարթերը, ինչպես ամենուրեք Հայաստանում, քարքարոտ են: Քարեր: Միայն քարեր: Այժմ, մարտի սկզբին, այդ քարերը ծածկված են ձյունով: Բայց արդեն այս ու այնտեղ երեւում են կանաչ կոզակներ, որտեղ արածում են ոչխարները: Այս քարքարոտ սարահարթերում ծառ չի աճում: Այստեղ չափազանց բարձր է ու ցուրտն էլ շատ երկար է տևում: Ու եւ, ճանապարհորդելով ու լեռնոտ, քարքարոտ, ժայռոտ հայրենիքում, նորից ու նորից մտածում եմ, որ երբեւիցե, երբ կյուրացնենք մեռյալ հողերը, երբ նրանց ծառավը կհազցենք հեռվից բերած ջրով, պետք է ձեռնամուխ լինենք... հողի ջերմացումը: Մենք շատ հազվադեպ ենք մտածում այն մասին, որ արեւավառ Հայաստանում, բացառությամբ թերեւս Արարատյան դաշտավայրի, չափազանց քիչ է արեւը, ավելի շուտ նրա ջերմությունը: Ուրեմն երբեւիցե, երբ կարպերից հողը, պետք է արարե՞ք նաեւ ջերմություն նրա համար:

Արշավախումբը մեկնում է Տաթև: Արշավախումբի անդամ Սարկ Գրիգորյանը սուրաջող մեքենայի մեջ շուռնուռ է տալիս իր սարքած բարձրաչափ գործիքը: Մենք երկար մտածում էինք, թե պաշտոնապես ինչպես անվանենք նրա գյուղը, երկու սրածայր փայտ, որոնք բուս ծայրերով անրացված են իրար սովորական փայտե եռանկյունիներով: Այս գործիքով շատ հեշտ է չափել ցանկացած առարկայի շառճությունը, երկարությունը եւ լայնությունը: Երբք չափում: Եվ Սարկի այդ պարզունակ գործիքն անվանեցինք եռաչափ: Սարկը դրանով պիտի չափի հին հուշարձանների պարամետրերը: Թվում է, այստեղ Ամերիկայ չի բացելու, չէ՛ որ ամեն ինչ վաղուց չափված է: Սակայն պարզվեց, որ բնավ էլ այդպես չէ: Մենք ավելի շատ գիտենք կառույցների բոլոր պարամետրերը իրենց այսպես ասած նախաստեղծ վիճակում, եւ ոչ թե այն, ինչ պահպանվել է մեր օրերում: Օրինակ՝ թուրք բարբարոսներից հետո 1931թ. երկրաշարժը, դժբախտաբար, իր սրբագրումները մտցրեց հին կառույցների պարամետրերի մեջ: Բարձրությունն արդեն այն չէ, որովհետեւ զմբեքը ընկել է, լայնությունը այն չէ, որովհետեւ բարբարոսները քանդել են շինության անկյունը: Իսկ մենք ցանկանում էինք ունենալ այսօրվա լրիվ պատկերը:

Դեպի Տաթև տանող ճանապարհը հիշողությանս մեջ մնաց հատկապես այն պատճառով, որ այնտեղից պարզ երեւում էին շրջանի գյուղերն ու հիշարժան վայրերը: Բավական հաճախ է հանդիպում մի տեսարան, որն այլ կերպ չես անվանի, եթե ոչ՝ ժամանակի նշանակ: Խոսքը վերաբերում է այն երեւույթին, երբ մի շարք, կարելի է ասել, տազանապալի պատճառներով պետությունը այս կամ այն գյուղը իր տեղից փոխադրում է նոր տեղ: Հնուց ի վեր Հալիձոր գյուղը փռված է եղել կիրճի հատակից քիչ վեր: Այսօր այնտեղ մնացել են տների քառակուսի հիմքերը եւ մեկ էլ կհաքանո պատերը: Մեռած գյուղ: Չորս կողմը մեռած քարեր են: Ամեն ինչ այստեղ մեռած է: Չնայած բնավ զարմանալի

չէ, թե մեր նախնիներն ինչու են հենց այս մեռյալ վայրն ընտրել: Միայն այդտեղ, ճանապարհից հեռու, քարերի մեջ կարելի է պատասարվել թշնամու ասպատակություններից:

Այսօր մայրուղու եզրին կառուցվել է նոր Հալիձորը: Ամեն մի ընտանիք ունի իր գեղեցիկ առանձնատունը: Ամեն տան առաջ՝ հողամաս, մրգատու այգի:

Ճանապարհի հենց եզրին կանգնած է մի յուրօրինակ կոթող-հուշարձան: Կողքին փակցված ցուցանակի վրա գրված է. «Հուշապույունը կանգնեցվել է ի պատիվ ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի՝ 1903 թվականին Տաթևի վանք այցելելու առթիվ»:

Տեղի բնակիչներն ասում են, որ այդ ժամանակից ի վեր ոչ մի կաթողիկոս չի այցելել Տաթև: Այդ ժամանակից ի վեր Տաթև եկել են ու գալիս են գիտնականներ, վերակառուցողներ եւ բազմաթիվ զբոսաշրջիկներ:

* * *

Ես կարողանում եմ գրառումներ անել հենց ցատկոտող մեքենայի մեջ: Այլ կերպ հնարավոր չէ: Հո ամեն թույլ չես կանգնեցնի «զազիկը»: Եվ հիմա, աչքի անցկացնելով խզբազանքներս, որոշում եմ, թե որը, երբ, որ ոլորանի վրա եմ գրել: Բլոկնոտիս մեջ հազիվհազ կարում եմ մի անուն-ազգանուն՝ «Անատոլի Համանսկի»: Թիկնեղ, արեախանձ դեմքով երիտասարդը, ուսապարկ մեջքին, դանդաղ քայլում էր ճանապարհով: Չէր հասցրել «բվետարել», երբ մեր մեքենան ճունչալով ու հռնդալով կանգ առավ: Միայնակ ճամփորդին նստեցրինք մեր կողքը: Անատոլի Համանսկին գնում էր Սվարանց գյուղը: Այնտեղ, գյուղից ոչ հեռու, երկրաբանները հետախուզական աշխատանքներ են կատարում: Անատոլին Սվարանցի երկրաբանական-հետախուզական խմբի բովանդակի համբախատ է: Աշխատում է այստեղ արդեն կես տարի: Նրան շատ է դուր գալիս, ինչպես ինքն է ասում, այս զարմանալի երկիրը եւ բարի ժողովուրդը: Բայց մի բան չի կարողանում հասկանալ: Ինքը եկել է Բրատսկից: Այնտեղ մարդիկ աշխատում են նույնիսկ տոսկալի սառնամանիքի պայմաններում: Եվ դրսում աշխատանքը դադարում է միայն այն ժամանակ, երբ սնդիկի սյունը, իջնելով, հասնում է քառասունհինգի: Իսկ այստեղ, Հայաստանում, զարմանում է Անատոլին, հենց որ մի քիչ ցրտում է կամ էլ քամի է փչում, իսկույն դադարեցնում են բոլոր աշխատանքները: Ամեն ինչ կանգ է առնում: Եվ դրանից առաջին հերթին տուժում են նրանք, ովքեր ուզում են փող վաստակել:

Ես առաջին անգամ չէ, որ լսում եմ նման թեմայով խոսակցություններ: Եվ խոստովանում եմ, ամեն անգամ էլ պակաս չեմ զարմանում, քան մեր նոր ծանոթ Անատոլի Համանսկին:

Զարմանում եմ ամենից շատ այն պատճառով, որ այչքուս են տեսել, թե իմ հայրենակիցներն ինչ ենադրով են աշխատում ծայր հյուսիսի խստաշունչ պայմաններում: Չէ՛ որ այն, ինչ պատմեց Անատոլի Համանսկին, դժբախտաբար, նկատվում է ոչ միայն երկրաբանական բովանդեցումներում, այլև նույնիսկ երեւանի շինարարականներում, որտեղ աշխատանքային պայմանները, երկրաբանների պայմանների հետ համեմատած, ուղղակի ջերմոցային են:

Որոտանի երկայնքով ձգվող ճանապարհը գետը հատում է հենց այն տեղում, որտեղ զարմանահրաշ ստալակտիտային ափերը գոյացրել են բնական կամուրջ: Ստալակտիտային ժայռերի պարմից բխում է բուժիչ տաք ջուր: Եվ այժմ այնտեղ առողջարան է կառուցվում:

Տաթև: Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկը: Գյուղում ի՞նչ հուշարձանները ներկայացված են մ.թ.ա. I հազարամյակով թվագրվող դամբարանների հետքերով: Հենց այստեղ էլ գտնվում է սուրբ Սիմասի եկեղեցին, որը կառուցվել է 1646 թվականին՝ Ներսես Տաթևացի վարդապետի նախագծով: Սակայն Տաթևի, ինչպես եւ ամբողջ հայ



Ճարտարապետության հպարտությունը վաճառել է, որ գտնվում է գյուղից մեկ կիլոմետր հեռու:

Բայց այժմ ես ուզում եմ գրել այն մասին, ինչ այսօր շատ է հուզում տաթեցիներին եւ սովխոզի դիրեկտոր Աշոտ Ստեփանյանին: Ապրիլ ամսից սկսած Տաթեւը դառնում է զբոսաշրջիկների ուխտագնացության վայր: Ամեն օր՝ երկու-երեք հարյուր մարդ: Պետք է միայն ողջունել հայրենի երկրի, համաշխարհային մշակույթի հուշարձանների հետ ծանոթանալու այդ ցանկությունը: Սակայն սոսկ ողջունելը թերեւս քիչ է: Պետք է նաեւ կերակրել այդ մարդկանց: Հասա մի պատկերացրեք, երեք հարյուր քաղցած մարդ շրջում են գյուղում եւ խնդրում են, որ ուտելիք վաճառեն իրենց: Տաթեւցիներն ուտելիք չեն վաճառում: Նրանք հենց այնպես տալիս են: Մեկը՝ հաց, մյուսը՝ ձու, մեկն էլ ուղղակի տուն է հրավիրում տուրիստին: Եվ այս ամենը այն պատճառով, որ գյուղում չկա ճաշարան: Չկա բուֆետ:

Եվս մի հարց. գրեթե առանց բացառության բոլոր գյուղերում, որտեղ եղել է «Վերածնունդը», անտանելի ցեխ է: Հասկանալի է, որ միամտություն կլինեի հարցն այնպես դնել, թե հարկավոր է իսկույններս ասֆալտապատել բոլոր գյուղերը: Բոլորն էլ գիտեն, որ բիտումի պրոբլեմը բավական ծանր է: Բայց եւ պետք է բացառություններ անենք: Վաղ թե ուշ հարկ կլինի ասֆալտապատել բոլոր գյուղերը, եթե չենք ուզում կորցնել դրանք: Եվ կյանքն ինքն է թելադրում, որ, ասենք, Գորիսի շրջանում այդ գործը պետք է սկսել Տաթեւից, ուր տուրիստներ են գալիս ոչ միայն Հայաստանից, այլեւ ամբողջ աշխարհից:

* * *

Արշավախումբը Տաթեւից ճանապարհվում է լեռնային Սվախուց գյուղը: Կուսակցության շրջկոմի քարտուղար Ռոբերտ Մալախյանի եւ Ռոտանի ոռոգման սիստեմի վարչության պետ Գուրգեն Բաղիրյանի հետ ճանապարհվեցի՝ ծանոթանալու ոռոգման սիստեմին, որը կոչված է վերափոխելու շրջանը: Այս ունիկալ կառույցի մասին շատ է գրվել եւ դեռ շատ կգրվի: Բայց ես ուզում եմ ուրիշ բան ասել: «Շրջել գետի հունը» արտահայտությանը մինչեւ այժմ կարելի էր համոզվել միայն առասպելներում: Սովետական իշխանությունը ճանապարհորդում ոչ միայն շրջեց գետի հունը, այլեւ ստիպեց նրան հարթահարել երկրի ձգողականությունը եւ բարձրանալ լեռը:

Ես երջանիկ եմ, որ ծանոթացա հիրավի առասպելական այս շրջանի հետ: Գորիցների եւ մաճկալների, ժողովրդական հերոսների ու աշուղների, հմուտ վարպետների եւ երագողների հետ:

* * *

Արշավի աշխատանքներն սկսվելուց մի քանի օր առաջ այցելեցի Սերո Խանգաղյանին: Իմաստուն գրող: Իմաստուն մարդ: Չանգեզուրցի: Այն, ինչ ես մտածել եմ իրականացնել այսպես ասած մեկ անգամ տեսնելով, մեկ արշավով, միասնական, Սերո Խանգաղյանի արել է... հիսուն տարում: Մոտ հիսուն տարի անվանի գրողը, ինչպես ասում են, անշտապ, բայց հետևողականորեն ճանապարհորդում է Սովետական Հայաստանում եւ այժմ իրատարակության է պատրաստում իր գիրքը: Այնտեղ նկարագրված կլինի մեր յուրաքանչյուր բնակավայրի պատմությունը: Իմ նպատակը, իհարկե, բոլորովին ուրիշ է: Եվ այնուամենայնիվ եմ նախանձում եմ իմաստուն գրողին: Այդ երեկո մենք խոսում էինք Չանգեզուրի մասին: Նա ասաց. «Երբ կգրես Չանգեզուրի եւ ընդհանրապես որեւէ շրջանի մասին, մի կողմից աշխատիր չթակել բաց դռները, մյուս կողմից էլ՝ մի վախեցիր, որ այսինչի ու այնինչի մասին թեզանից առաջ գրել են այսինչի ու այնինչի: Գրիր քո ձեռով: Գրիր աչքով տեսածի մասին: Եվ, այնուամենայնիվ, երբ լինես Չանգեզուրում, գրիր էկզոտիկայի մասին: Երբեմնի մեծ Հայաստանի մեր այս փոքրիկ մասում շատ քիչ են մնացել այնպիսի անկյուններ, որտեղ բառիս բուն իմաստով կա հանապազօրյա թվածիկ: Եվ այդ անկյունները, դրանց թվում Չանգեզուրը,



պետք է հայտարարվեն արգելավայր: Եթե այսօր դա չանենք, վաղն ուշ կլինի: Մենք շատ ենք խոսում ապագայի մասին, բայց հազվադեպ ենք խոսում կոնկրետ մանրամասների մասին, որոնք կհուզեն հենց այդ ապագային: Իսկ մաքուր օդը, ավելի ճիշտ՝ նրա բացակայությունը շատ-շատ է հուզելու ապագային: Այնպես որ գրիր այդ մասին: Գրիր հենց Չանգեզուրում, բայց գրիր այդ պրոբլեմի մասին ընդհանրապես»:

Ու ես գրում եմ Չանգեզուրում: Իրավացի էր Սերո Խանգաղյանը: Չանգեզուրը պետք է դառնա արգելավայր: Եվ հենց Չանգեզուրում, որտեղ առայժմ թեթեւ են շնչում ու թեթեւ քայլում, պետք է գրել շրջապատող միջավայրի աղտոտման պրոբլեմի մասին:

Սեր արշավում ամենից շատ կրկնվող բառը «ճանապարհին» է: Իսկապես, ոչ նավակով, ոչ եղջերասահակով, ոչ էլ շնասահակով ճանապարհորդելիս չեն մտածել «ճանապարհ» հասկացողության մասին որպես այդպիսին: Ավելի շուտ, խոսքն այնտեղ վերաբերել է ընդհանրապես ուղեւորությանը, երթուղուն: Այ հիմա էլ, երբ մոտենում էինք Սիսիանին, մեզանից մեկը նայեց քարտեզին ու բարձրաձայն ասաց. «Իսկ ինչու՞ն է այս գլխավոր ավտոխճուղին չի անցնում շրջենտրոնի միջով, չէ՞ որ այդպես ավելի ձեռնտու կլինի ամբողջ շրջանին»: Ես համոզված չեմ, որ հարցի կարծեցյալ տրամաբանությունն իրոք տրամաբանական է: Այժմ ամենուրեք կարելի է տեսնել, թե ինչպես են վերակառուցում իրենց ճանապարհները, դարձնելով լայն եւ, ամենագլխավորը՝ ուղիղ: Ուղիղ-լուրջ հաճախ էլ հեռացնում են այս կամ այն բնակավայրից, որի կողքով դարձել էին նախկինում: Եվ հաճախ են տրտման տեղի բնակիչները, որ «անխիղճ» ճանապարհաշինարարների երեսից հեռացել են գլխավոր մայրուղուց: Իսկ դա, նրանց կարծիքով, ավելացնում է իրենց հոգսերն ու չարչարանքները:

Չենց այդ մասին էի խոսում Սիսիանի կուսըղկոմի առաջին քարտուղար Կիմ Հովհաննիսյանի հետ: Սիսիանը, ինչպես նշեցի, նույնպես հեռու է գլխավոր մայրուղուց: Սակայն Կ.Հովհաննիսյանը զարմացած էր հարցի նման դրվածքից, որը բխում էր տեղային ուսիլիտար մտածողությունից, եւ ոչ թե սթափ ռացիոնալ մտածողությունից: Բոլոր այն բնակավայրերը, որ ավտոխճուղու վերակառուցումից հետո մի կողմ են մնում, գործնականում չեն տու-

ժում: Ավելի շուտ՝ շահում են: Որպես կանոն, բնակավայրը ամենշան չափով է հեռու մնում ավտոխճուղուց, եւ այդ տարածությունը հեշտությամբ կարելի է հաղթահարել հին ճանապարհով: Սակայն գլխավորն այն է, որ մայրուղին հեռացնելով բնակավայրից, դրանով իսկ հեռացնում են բազում չարիքներ՝ աղմուկը, փոշին, ավտովթարները:

Եթե շարունակենք խոսել ճանապարհների մասին, ապա Սիսիանի շրջանին այս տեսակետից բոլորովին այլ բան է հուզում: Հուզում են սեփական ճանապարհները, որ անսարք վիճակում են, եւ հուզում է այսպես ասած արտաքին աշխարհի հետ հարկ եղած կապի բացակայությունը: Սիսիանը երկարուրուց ամենահեռու գտնվող շրջաններից մեկն է եւ օդային կապ չունի մայրաքաղաքի հետ: Հաճախ են ինձ հարցնում, թե արդյո՞ք չեն վախենում այն բանից, որ Հայաստանում ճանապարհորդելիս դժվար կլինի պրոբլեմների, սուր հարցերի մասին խոսել: Չէ՞ որ մեծ տոնակատարությանը նվիրված արշավը, որ կրում է «Վերածնունդ» պարտավորեցնող անունը, ինքնին բացառում է պրոբլեմների մասին խոսելու հնարավորությունը: Նման, թույլ տվեք ասել, վախը ինձ բնավ չի սպառնում:

Ի դեպ, չլուրջված հարցերի վերաբերյալ խոսակցությունն այսօր ամենից առաջ վկայում է մեր հզորության, մեր առաջադիմության, վերածննդի մասին: Եթե այսօր Սիսիանում դեկավարությունը համառոտ էր դնում է անհապաղ օդանավակայան, երկաթուղի կառուցելու հարցը, ապա հենց այդ փաստը արժանի է հիշատակության ամեն հետաքրքիր հնարավորություններում: Եվ հարցերն էլ կենսականորեն անհրաժեշտ հարցեր են: Թե չէ՞ ինչ է դուրս գալիս. մեզ բոլորիս իսկապես անհանգստացնում է, որ մարդիկ գյուղը լքում են եւ գալիս քաղաք: Նույնիսկ ոչ թե քաղաք, այլ մի քաղաք՝ Երեւան: Անհանգստացնում է: Բայց երբ կարողինք տեղում պահելու համար շրջանի դեկավարությունը խնդրում է բացել մի որեւէ ձեռնարկության մասնաճյուղ, նրանց պատասխանում են բացել կարող ենք, բայց ով պիտի ձեզ մոտ աշխատի, ախր, դուք մարդ չունեք: Եվ հաճախ չեն բացում: Ու մենք շատ հազվադեպ ենք խորհում այն մասին, որ մենք դեպքերում գործ ունենք տիրահաջակ շրջանագծի դասական օրինակի հետ՝ ձեռնարկությունը չեն բացում այն պատճառով, որ չկան աշխատող ձեռքեր: Իսկ աշխատող ձեռքեր չկան, որովհետեւ չկա ձեռնարկություն:

Հանրապետության գործերին եւ յուրօրինակությանը անհրաժեշտ մարդիկ հաճախ զարմանք են արտահայտում այն առթիվ, որ փոքրիկ Հայաստանը մոտ քառասուն վարչական շրջան ունի: Բայց չէ՞ որ դա արել են, ինչպես ասում են, ոչ լավ կյանքից ելնելով: Սիսիանի շրջանը չորրորդն է արշավախմբի ճանապարհին: Եվ ինձ թվում է, թե դա չորրորդ մոլորակն է ի՞ր, սոսկ իրեն հատուկ կենսապայմաններով, կլիմայով եւ նույնիսկ երկնքով: Եվ բնավ պատահական չէ, որ կառավարությունը ժամանակին այդպիսի վարչական բաժանում է կատարել: Կառավարությունը, պարզ է, մեծ քայլի դիմելուց առաջ կշռադատել, ծանրութեթեւ է արել բոլոր «թեր» ու «դեմ» կողմերը եւ ուսումնասիրել է բոլոր պրոբլեմները: Իսկ այ քաղաքացիական ավիացիայի վարչությունը, հաշվի չառնելով «թերն» ու «դեմը», չուսումնասիրելով պրոբլեմները, հանկարծ որոշեց, որ Գորիսի շրջանն ու Սիսիանի շրջանը մուսն են: Եվ որ նրանց լրիվ կբավարարի մեկ ընդհանուր օդանավակայանը, որը կլինի Գորիսում: Չենք վիճում, Գորիսին անհրաժեշտ է օդանավակայանը, եւ փառք ասած, շուտով այն կգործի, ինչպես հույս են տալիս մասնագետները: Բայց դա ի՞նչ կապ ունի Սիսիանի հետ: Լեռնաշենի բնակիչները, օրինակ, Երեւան քոչելու համար երկու-երեք ժամ պիտի կորցնեն միայն, որպեսզի հասնեն Գորիս: Այդ մասին մեզ ասում էին ոչ միայն լեռնաշենցիները, այլեւ Լոր, Դարպաս, Բարձրավան գյուղերի բնակիչները: Ի միջի այլոց պետք է ասել, որ միֆթարական չէ այս գյուղերի հեռանկարը այն պատճառով, որ բնակիչներն իրենց համարում են կենտրոնացրած: Սիսիանում օդանավակայանի կառուցումը պլանից հանելը հուսախաբ արեց մարդկանց: Դարպասում եւ գրուցեցի գառանյալ, սակայն իմաստուն ծերունիներ Մովսես Անդրեասյանի, Արամ Արզումանյանի, Երվանդ Սարգսյանի հետ: Այդ նրանք ինձ ասացին հույսի մասին: Նրանք ասում էին, որ անձամբ իրենց ինքնաթիռ պետք չէ: ՌՎ պիտի ութսունից հետո երազի ճանապարհի մասին: Բայց իրենց զավակներին եւ թոռներին պետք է: Ութսունամյա Երվանդ Սարգսյանը, օրինակ, հպարտությամբ նշելով, որ ինքը միայն տասնվեց «հատ» տղա թոռ ունի, ասաց. «Թե թոռներս իմանան, որ կես ժամվա ընթացքում կհասնեն Երեւան ու թե այստեղ աշխատանք կգտնեն իրենց համար, ոչ մեկը չի լքի հայրական տունը, հարազատ օջախը: Թե չէ՞ դժվար բան է, երբ տեսնում ենք ընդհանուրը»: ԵՋ 12

Չորի Բալայան. ճանկորոշումը Սյունիքում

Օջախ

Հատված Չորի Բալայանի համանուն գրքից

ՍԿԻՉՔԸ ԷՏ 11
ես, որ մի տխուր օր էլ ծուխ չի ելնում հայի օջախից»:

* * *

Հինավուրց Սիսիանը սովետական իշխանության զավակն է: Քաղաքը գտնվում է Որոտանի երկու ավերիկ: Բնակչությունը շատ չէ, երեկ, մեծ քաղաքի մի թաղամասի, կամ էլ ժամանակակից մի բազմահարկ շենքի բնակչությունն է: Բայց Սիսիանը ոչ թաղամաս է, ոչ էլ շենք: Սիսիանը մի մեծ աշխարհ է: Հոյակապ կուլտուրայի պալատ, պիոներների պալատ: Մի շարք ձեռնարկություններ, որոնք բավական հազվադեպ են գյուղական շրջանի համար: Բուժտեխնիկական սարքավորումներ արտադրող ձեռնարկություն, որը արտադրում է նաև գունավոր ակնոցներ: Նախատեսված է ստեղծել հզոր գորգագործական կոմբինատ, որը, հնարավոր է, կդառնա շրջանի պարծանքը: Սիսիանն իսկական մի ամբողջ աշխարհ է: Եվ այդ աշխարհը, կարծես, ստեղծված է միայն երեխաների համար: Սիսիանում կա երաժշտական դպրոց, որտեղ սովորում են շրջկենտրոնի ու գյուղերի երեխաները են որտեղ դասավանդում են դարձողի նախկին սաները: Յոթամասունից ավելի պատանի նկարիչներ սովորում են Սիսիանի գեղարվեստական դպրոցում, որը ղեկավարում է պրոֆեսիոնալ նկարիչ Վալերի Ստեփանյանը: Սիսիանի դպրոցականների նկարները ցուցադրվել են ոչ միայն շրջանային եւ հանրապետական ցուցահանդեսներում, այլև Չեխոսլովակիայում: ԳՂՀ-ում, ճապոնիայում:

Գեղարվեստական դպրոցի սաները ընդունվում են Երեւանի գեղարվեստական ուսումնարանը եւ, ստանալով դիպլոմ, վերադառնում են հայրենի տուն: Սակայն նրանցից ոչ բոլորն են կարողանում աշխատանք ստանալ:

Մեզանում բոլոր ձեռավորման աշխատանքները՝ լինեն դրանք կենտրոնից հեռու փոքրիկ գյուղում, թե հենց Երեւանում, կատարվում են այսպես ասած կենտրոնացված եղանակով: Օրինակ, ոչ ոք չի կարող ձեռավորել նորակառույց կուլտուրայի տունը առանց հանրապետական գեղֆոնդի գիտության: Թվում է, թե ամեն ինչ ճիշտ է: Քանզի չի կարելի թույլ տալ, որ գեղարվեստական ճաշակից եւ չափի զգացումից զուրկ մարդիկ խեղաթյուրեն արվեստը: Ստույգ իրականում գործը բոլորովին այլ բնույթ է ստանում: Ինչ-որ տեղ ավարտվում է կուլտուրայի տան կամ պիոներների պալատի կառուցումը եւ իսկույն գեղֆոնդ է ուղարկվում համապատասխան պատվերը սրահների ինտերյերը ձեռավորելու համար: Գեղֆոնդը, ինչպես ինձ պատմել են, չափում է պատերը, որոնց վրա նկարներ պիտի կախվեն, եւ իր ֆոնդից անհապաղ ուղարկում է ինչ-որ գործեր: Հաճախ դրանք լինում են շատ վաղուց այնտեղ մնացած աշխատանքներ, որոնք բնավ չեն համապատասխանում տվյալ շրջանի ոգուն: Ինչո՞ւ չի կարելի պատվերները ձեռավորել հենց տեղերում՝ գեղֆոնդի թույլտվությամբ եւ գիտությամբ, օգտագործելով իրենց հարազատ շրջանը լավ իմացող տեղական պրոֆեսիոնալ նկարիչների հնարավորությունները:

Կարգերը գյուղում ամրապնդելու համար, մանավանդ գյուղատնտեսության մեքենայացման շրջանում, երբ կամա թե ակամա առաջանում են ազատ բանվորական ձեռքեր, պետությունը գյուղերում բացում է զանազան ձեռնարկությունների եւ միավորումների մասնաճյուղեր: Կյանքը ցույց է տալիս, որ կարեւորագույն պրոբլեմի նման լուծումը փրկում է վիճակը: Սակայն ստացվում է տարօրինակ պատկեր: Մենք անում ենք ամեն ինչ, որպեսզի գյուղատնտեսության եւ արդյունաբերու-

թյան աշխատողներին պահենք տեղերում, միաժամանակ շատ քիչ ենք մտածում գրականության եւ արվեստի գործիչների ճակատագրի մասին, գյուղի մտավորականության վիճակի մասին, առանց որի գյուղը չի կարող լիարժեք կյանք ունենալ:

Այս առիթով կուզեմայնք հատկապես խոսել բժշկական եւ մանկավարժական կարգերի պրոբլեմի մասին: Հայտնի է, որ գյուղում հնուց ի վեր մտավորականության ավանդական ներկայացուցիչները համարվել են բժիշկն ու ուսուցիչը: Սակայն Սիսիանի գյուղական դպրոցներում պակասում են ուսուցիչները, իսկ շրջանային հիվանդանոցի գլխավոր բժիշկ Վիթխար Վարդանյանը այնքան է, որ այսօր իսկ ինքը կարող է աշխատանքի ընդունել տասնհինգ բժշկի: Մինչդեռ հարյուրավոր բժիշկներ են ուսուցիչներ երեսնուն տարիներով սպասում են հերթի, որ աշխատեն քաղաքում:

* * *

Ես երջանիկ եմ, որ ճանապարհորդության ընթացքում ինձ հաջողվում է ոչ միայն ջուր խմել Հայաստանի գրեթե ամեն մի աղբյուրից, այլև աչքով տեսնել մեր մշակույթի իսկական գույնգործները, ձեռքով շոշափել քարե մատյանները, գրքերը, որոնք բազմաչափ ժողովրդիս պատմության համր վկաներն են:

Այս անգամ մեր ուղեկցորդն էր տեղի մատենագիր, համեստ, լռակյաց Բաբկեն Խուրազմերդյանը: Թվում է, այստեղ չկա, ինչպես Գեւորգ Դեմիրճեանը, «անգրագետ մի քար», որի մասին չիմանար Բաբկեն Խուրազմերդյանը: Մենք կանգնած ենք Որոտանի բարձրադիր ու ժայռոտ ծախ սափին, հիմնավորը Որոտանյանի պատերի տակ: Ամեն անգամ կանգ առնելով հրաշքով պահպանված հազարամյա վանքի մոտ, ասես կախարդական մեքենայով տեղափոխվում են դարերի խորքը: Եվ մեռյալ գուլխագործող կենդանանում է, նրա շուրջը տեսնում են բազում մարդկանց՝ մեր նախնիներից, բազում մատյաններ, բազում դասասեյակներ, որտեղ երկուդակից աշակերտները ուշադիր ունկնդրում են իմաստուն այրերի հնչել խոսքը: Եվ եղել է այսպես: Քանզի մենք գիտենք, որ ամեն մի վանք եղել է կենդանի օրգանիզմ՝ բազում ֆունկցիաներով, որոնցից ամենակարեւորը եղել է կրթականը, լուսավորչականը: Լուրեմ, վանքը լույս է սփռել: Լույս՝ ժողովրդի համար: 21° որ լուսավորություն բառը ծագում է լույս բառից: Որոտանյանը կառուցվել է 1000 թվականին: Վանքի կառուցման նախաձեռնությունը կապում են Սյունյաց իշխան Սմբատի անվան հետ: Հետագայում վանքի համալիրի մեջ են մտել սուրբ Կարապետի եւ Գրիգոր Լուսավորչի եկեղեցիները: Որոտանյանցի համալիրի մեջ, եկեղեցիներից բացի, մտել են նաև իջեւանատներ, բնակելի ու տնտեսական կառույցներ: Սակայն ամենագեղեցիկ եւ պատվավոր տեղը հատկացվել է մատենադարանին:

Ներկայումս վանքի շինությունների մեծ մասը ավերվել է: Հուշարձանների պահպանման օրերը մեզ պարտավորեցնում է իսկապես հոգ տանել այդ հուշարձանների մասին եւ գործնական միջոցներ ձեռնարկել, որպեսզի դրանք պահպանվեն գալիք սերունդների համար:

* * *

Եղանք եւ Ուղտասարում, որը գտնվում է Սիսիանից երեսուն կիլոմետր հեռու, ծովի մակերեսույթից երեք հազար երեք հարյուր մետր բարձրության վրա: Ուղտասարը համարյա մինչեւ մայիս ծածկված է ծյունով: Իսկ հիմա մարտ ամիսն է: Չորս կողմը ծյուն է, ուրիշ բան չի երևում: Եվ այնուամենայնիվ իմ պարտքը ամենաբացի այստեղ գալը: Ուղտասար անունը հռչակվել է աշխարհով մեկ: 1970 թվականին հանրապետության գիտությունների ակադեմիան «Հայաստանի հին հուշարձանները» մատենաշարով լույս ընծայեց Գ.Օ. Կարախանյանի եւ Պ.Գ.Սաֆյանի «Սյունիքի ժայռապատկերները» կապիտալ մենագրությունը: Ժայռապատկերները հազվագյուտ աղբյուր են նախնադարյան կուլտուրան ուսումնասիրելու համար: Դրանք ժողովրդի մեջ

հայտնի են «իծագիր» անունով: Գրքի լույս ընծայման նախօրյակին հեղինակները ժայռապատկերային արվեստի բացահիլ հարուստ օջախներ հայտնաբերեցին պատմական Սյունիքում, Սիսիանի, Եղեզնավի շրջաններում եւ Արփա գետի հովտում:

Գ.Կարախանյանը եւ Պ.Սաֆյանը գրքի առաջաբանում գրում են. «Սյունյ գիրքը պարունակում է Սյունիքում հավաքած նյութերի սուկ մի մասը, մյուս մասը կիրապարակվի այս մատենաշարի հաջորդ գրքերում»: Նախապես ասենք, որ «այդ մատենաշարով» այլևս գրքեր չհրատարակվեցին: Դժվար է պատասխանել այն հարցին, թե հայ կուլտուրայի պատմության համար խիստ կարեւոր այդ մատենաշարը ինչո՞ւ այլևս չչարունակվեց: Կարող են ավելացնել միայն, որ մեր նախնիների ձեռքով նկարված ժայռապատկերներից շատերը, ժայռերի հետ միասին, ցավոք, դուրս են տարվել մեր հանրապետությունից: Այդ կապակցությամբ ուղղակի հերոսություն պիտի համարել Գ.Կարախանյանի եւ Պ.Սաֆյանի աշխատանքը: Նրանք գոնե հասցրին հրատարակել Սյունիքում հավաքած նյութերի մի մասը: Իսկ Սյունիքի ժայռապատկերների ամենամեծ օջախը համարվում է Ուղտասարը, ուր եւ բերեցին ինձ արշավի արահետները: Սա աշխարհիս հազվագյուտ թանգարաններից մեկն է եւ գոյություն է ունեցել մ.թ. առաջ V-II հազարամյակներում: Մասնագետները այստեղ հաշվել են երկու հազարից ավելի նկարապատկեր քարաքերներ: Ինձ հաջողվեց տեսնել դրանցից մի քանիսը միայն: Չյունը խանգարեց: Ուղտասարի ժեռ լանջերին ես տեսա հարուստ թեմատիկ բովանդակությամբ սքանչելի ժայռապատկերներ:

Վերոհիշյալ մենագրության հեղինակներից մեկի՝ Պ.Սաֆյանի հետ վաղուց են ծանոթ: Կրթությամբ պատմաբան է, գիտնական, պատմական գիտությունների թեկնածու: Սաֆյանը եղել է Սիսիանի կուլշրջկոմի առաջին քարտուղար: Աշխատել է նաև հանրապետության ԿԿ Կենտկոմի ապարատում: Եվ այժմ անհ մոտ տասը տարի ղեկավարում է Երեւանի Կուլտեսական շրջանի կուսակցական կազմակերպությունը: Ես էլ են ապրում այդ շրջանում: Նորքի զանգվածում: Եվ համարձակորեն կարող եմ ասել, որ աչքիս առաջ տարեցտարի աճում են նորանոր թաղամասեր, կերպարանափոխելով լքյալ քարքարուտները: Մի օր գրուցում էի Նորքի զանգվածում նորատունի ծառերը եւ քարձ կանաչը ջրող մի ծերուկի հետ: Նա ասաց. «Որ ինձ թողնեին, ամեն մի ծառի, ամեն մի խոտի վրա կգրեի Սաֆյան բառը»: Ես հուզվեցի մինչեւ հոգուս խորքը: Գգիտեմ, արդյոք ծերունին գիտեր, որ Նորքի զանգվածի նորատունի պուրակներում եւ այգիներում խնամքով ու ճաշակով դրված քարերը եւ ժայռաքերները նույնպես առնչվում են Սաֆյանի հետ: Նա է դրանք այստեղ բերել Հայաստանի զանազան անկյուններից եւ նախկին ամայի վայրում ստեղծել այսպես ասած բացօթյա թանգարան:

Սիսիանում եւ հանդիպեցի Պ.Սաֆյանին, եւ, բնականաբար, խոսեցիք նաև Ուղտասարի ժայռապատկերների մասին:

- Այդ քարե կտավները, - ասաց պատմաբանը, - ասես գրքեր լինեն: Դրանք կարելի է կարդալ: Դրանք պատկերում են մեր հեռավոր նախնիների կյանքն ու կենցաղը եւ օգնում են հասկանալու նախնադարյան մարդու դիզայնակամ-հմայական, տիեզերածնական մտածողությունը: Ի դեպ, դրանք շնորհիվ կարելի է լավ պատկերացում կազմել հայկական լեռնաշխարհի ֆաունայի մասին: Քարայծ, եղնիկ, վիթ, վայրի ցուլ, ձի, վարագ, շուն, գայլ, արջ, բորենի, հովազ, ընձառյուծ եւ, իհարկե, բազմազան թռչուններ: Գլխավոր թեման որս է, որը պատկերված է որսորդների շարժումների եւ դիրքերի բնորոշ մանրամասներով, արտահայտիչ կոմպոզիցիոն կառուցվածքով: Նկարները հնարավորություն են տալիս վերստեղծելու տարբեր դարաշրջանների պատկերները: Սակայն մարդու ձեռքով ստեղծված այս առաջին գործերը հաճախ հիմնովին վնասվում են: Մինչեւ հիմա էլ մենք չենք հասել այն բանին, որ այդ հազվագյուտ բացօթյա թանգարանները դառնան արգելակայրեր:

Դժվար է գտնել այնպիսի մարդու, որը չկրի Պ.Սաֆյանի անհանգստությունը: Սակայն գործը առաջ չի գնում: Եթե ժայռապատկերները չպահպանվեն օրեցօր, ապա մարդիկ կշարունակեն դրանք համարել սուկ քար, ժայռաքեր: Եվ կմանրացնեն այդ քարերը, որ հողը դարձնեն վարելահող: Իսկ հնագույն նկարներով զարդարված մի ժայռի վրա ես տեսա հատիչի հետք: Ոմն նորաթուխ բարբարոս կիսալուսին էր փորագրել:

Խորապես համոզված եմ, որ Ուղտասարը, ինչպես նաև Հայաստանի ժայռապատկերներով հարուստ մյուս վայրերը անպայման կպահպանվեն օրեցօր:

* * *

«Վերածնունդ» արշավախումբը եղավ Սիսիանի շրջանի բոլոր բնակելի կետերում: Քարտեզի վրա դրանք տասնութն են, իսկ մայր հողի վրա՝ կրկնակի շատ: Ի դեպ, հասկանալի չէ, թե ինչ սկզբունքով բավական մեծ բնակավայրերը չեն նշված հանրապետության քարտեզի վրա: Եթե գյուղատնտեսի առկայության սկզբունքով, ապա սկզբունքը պետք է անշեղորեն պահպանվի:

Շրջանի ավելի քան երեսուն բնակավայրերում մենք տեսանք գոկածների հիշատակին նվիրված սրտառուչ հուշարձաններ: Բոլորն էլ կառուցված ժողովրդի միջոցներով: Զոհվածների բացարձակ մեծամասնությունը կոմերիտականներ են: Եթե պատերազմի սկզբում նազանճակատ մեկնեցին մոտ հազար երիտասարդ սիսիանցի, ապա պատերազմի վերջում նրանց թիվը հասավ հինգ հազարի: 2163 ռազմիկ չվերադարձան տուն: Նրանց բոլորի անունները փորագրված են գրանիտ սալերի վրա:

Շրջանի կոմերիտական կազմակերպության արխիվից իմացանք, որ կոմերիտականներ Լիպարիտ Իսրայելյանը եւ Արկադի Առտանյանն արժանացել են Սովետական Միության հերոսի կոչման: Իսկ Գրիգոր Մալյանը, Գաբրիել Բալասանյանը, Հովսեփ Գլխվերդյանը, Սամվել Խոսրոկյանը սոցիալիստական աշխատանքի հետոսներ են:

Արշավախումբը նյութեր է հավաքում շրջանների կոմերիտական կազմակերպությունների պատմության վերաբերյալ: Շատ նյութ հավաքվեց եւ Սիսիանի շրջանի վեցհազարանոց կոմերիտական բանակի մասին: Թե՛ Լեռնաշենում եւ Հացավանում, թե՛ Դարպասում եւ Սիսիանում երիտասարդ բանվորներն ու կոլտնտեսականները հաճախ էին մեզ բողոքում, որ մինիստրությունների եւ գերատեսչությունների ղեկավարները գրեթե երբեք չեն այցելում իրենց տնտեսությունները: Ես կարծում եմ, որ նրանց բողոքի մեջ կա ինքնին ուրախացնող եւ առաջադեմ ինչ-որ բան, երիտասարդությունը հրաշալի գիտակցում է, որ կուսակցության ծրագրերը գործնականում իրականացնում են մինիստրությունները եւ գերատեսչությունները, գործադիր կոմիտեները: «Մենք հասկանում ենք, - ասում են երիտասարդ լեռնցիները, - որ մինիստրը կամ գլխավոր վարչության ղեկավարը պարտավոր չեն այցելել բոլոր գյուղերը: Բայց նրանք պարտավոր են իմանալ յուրաքանչյուր շրջանի առանձնահատկության մասին: Չի կարելի ամեն ինչ (ներառյալ եւ բյուջեն) բաժանել «ըստ բնակչության շջի»: Հարկավոր է հաշվի առնել պայմանները: Կլիմայական եւ աշխարհագրական պայմանները: Իսկ այդ բոլորը հաշվի առնելու համար պետք է իրենց աչքով տեսնեն»: Ես կրկնում եմ, ուրախալի է, որ երիտասարդներն են խոսում այս մասին:

Կուսաշրջկոմի քարտուղար Շյորս Դավթյանին ես ասացի այդ մասին: Պարզվեց, որ վերջին հինգ տարվա ընթացքում Սիսիանի շրջանում եղել են տասից ավելի մինիստր, պետական կոմիտեների եւ գլխավոր վարչությունների ղեկավարներ: Տխուր, եթե չասենք՝ տագնապալի վիճակագրություն, մանականը թեք հաշվի առնենք, որ Երեւանից մինչեւ Սիսիան ընկած տարածությունը կարելի է հարթափառել երեքից չորս ժամում՝ ասֆալտապատ, ժամանակակից ճանապարհով:



Միջազգային շուկայում մեծանում է Շամբի ձեռնարկությունների արտադրանքի պահանջարկը

ՍԿԻՉԲԸ ԷՋ 2

առաջացրեց:

Վերջերս ՀՀ գյուղնախարարին ՌԴ գյուղնախարարի ուղարկած պաշտոնական նամակում մասնավորապես նշվում էր, որ հայկական արտադրանքը պահանջարկ է վայելում Ռուսաստանի Դաշնությունում, եւ նրանք պատրաստ են աջակցել Հայաստանին գյուղմթերքի իրացման գործընթացում: Հետաքրքիր է, արդյո՞ք այդ իրավիճակում իրենք նոր առաջարկ ստացել են: Այդ հարցին ահա թե ինչ պատասխանեց Ներսես Ստեփանյանը. «Ռուսաստանը տնտեսական կապերը, կարելի է ասել, խզել է եվրոպական երկրների հետ եւ հայացքն ուղղել դեպի մեր տարածաշրջան: Դեռես մեզ այդ հարցով առաջարկ չեն ներկայացրել: Առավել նպաստաբար էր, եթե նրանք մեզ աջակցում էին»:



Ներսես Ստեփանյան, «Ներսես եւ Արսեն» ՍՊԸ փոխօրինակ

տավոր պայմաններ կստեղծվեն մեզ համար, եթե Մաքսային միության անդամ դառնանք: Պետք է նշեմ, որ պետությունը մեզ աջակցում է հատկապես ցածր տոկոսադրույքներով վարկեր տրամադրելով: Ամեն օր գյուղնախարարությունից հարցում են անում մեր կատարած աշխատանքների մասին»:

Շամբի պահածոների գործարանը նույնպես ընդլայնում է սպառման շուկան՝ իր արտադրանքն արտահանելով Ռուսաստան, Բելգիա, պատվեր ունեն մեծ ՍՄԵ-ից, Պարսկաստանից: Պահածոների, մուրաբաների մեծ մասը մարտ ամսին արդեն սպառվել էր: Նշենք, որ պահածոների, մուրաբաների, մրգափուլերի մոտ 70 տեսակ են արտադրում եւ իրացնում խնդիր չունեն: «Եթե անկեղծ լինեմ, անցյալ տարի որակական որոշ խնդիրներ ունեինք, բայց մայրաքաղաքից հրավիրված տեխնոլոգի հմտության շնորհիվ որակն արդեն համապատասխանեցրել ենք պահանջվող չափանիշներին», – նշեց Ներսես Ստեփանյանը:

Ներսես Ստեփանյանը նշեց նաեւ, որ համապատասխան տարածք ու նախագիծ ունեն մեկ այլ գործարան հիմնելու համար: Հավանաբար շինարարական աշխատանքները կսկսեն հաջորդ տարի, եւ այն կլինի կոնյակի գործարան:

Գյուղացիներից այս տարի մթերել են որոշ մրգատեսակներ, բացի դրանից՝ գործարանն ունի 3-4 հա հողատարածք՝ պտղատու այգիներով եւ բանջարաբուստանային մշակաբույսերով: Նշենք, որ պահածոների գործարանն ամեն պատահական մթերք չի ընդունում, այստեղ պետք է բերել միանգամայն բարձրորակ միջոց ու բանջարեղեն: Մթերումը հիմնականում կատարում են Արարատյան դաշտից, Վայոց ձորից, Սյունիքից, ինչպես նաեւ ազատագրված տարածքներից:

Սկզբնական շրջանում հարկային դաշտում որոշ խնդիրներ են ծագել, որոնց անդրադարձել ենք մեր նախորդ հրապարակման մեջ («Սյունյաց երկիր», 17 հոկտեմբերի, 2013թ.): Ներկայումս բոլոր նմանատիպ հարցերը կարելի է լուծված համարել:

Անցյալ տարվա համեմատ 5-10 հոգով ավելացել է նաեւ աշխատողների թիվը: Ուրախակի է, որ հիմնականում գերակշռում են երիտասարդ կադրերը, ովքեր նաեւ ժամանակի

ընթացքում ավելի են մասնագիտանում: Այս պահին գործարաններում աշխատում են բացառապես տեղացի կադրեր, ինչպես ասում են, «դրսից» եկող կադրերի կարիք չունեն: Երկու հերթափոխով աշխատելու կարիք կա, քանի որ երբեմն պատվերները չհասցնելու պատճառով ստիպված են արտաժամյա աշխատել (հիարկե հավելյալ վարձատրությամբ), որ այնքան էլ նպատակահարմար չէ: «Բարձրացրել ենք նաեւ աշխատավարձը, եւ եթե ես այս պահին ասեմ, որ մենք աշխատողների ընդունելություն ունենք, շատ մարդիկ կդիմեն մեզ: Իհարկե, պետք է խոստովանեմ նաեւ, որ շատ դժվար է գյուղացուց բանվոր դասակարգ ձեւավորելը: Երբեմն նրանք նախընտրում են իրենց հողը մշակել, որ հայտնի չէ՝ բերք կտա՞, թե՞ չէ: Կարծես թե այդ կարծրատիպը փոխվում է: Մեր քաղաքականությունը միտված է նրան, որ աշխատավարձը հարաբերականորեն բարձր լինի, որ ժողովուրդը ստիպված չարտագաղթի եւ հավատա մեր գործունեությանը»:

Խոսելով գործարանների խնդիրներից՝ նկատեցինք, որ դրանի արժեզրկումը, էլեկտրաէներգիայի, դիզելաշարժիչի բանկացումն իրենց բացասական ազդեցությունն են թողել, բայց տնօրենությունը չի պատրաստվում բանկացնել իր ապրանքը: Ժամանակ առ ժամանակ տեխնիկան թարմացնելու կարիք էլ է լինում, բայց դա դեռես առաջնային խնդիր չէ: Հիմնական խնդիրներից են նաեւ տարաներն ու պիտակները: Բանն այն է, որ ՀՀ-ում տարաների արտադրությամբ զբաղվում է ընդամենը մեկ ձեռնարկություն, իսկ պիտակների՝ մեկ ուրիշ, եւ երբեմն պատվերները չեն հասցնում կատարել: Պիտակների մի տեսակ նույնիսկ Մոսկվայում են պատվիրում:

Սոցիալական ոլորտում նոր ներդրումներ չեն արել, նախորդ տարիներից կատարված աշխատանքների մասին արդեն տեղեկացրել ենք («Սյունյաց երկիր», 17 հոկտեմբերի, 2013թ.): Շարունակում են սնունդ տրամադրել Սյունիքի մարզի գյուղական մանկապարտեզներին, հիմնովին նորոգել են Դարբասի մանկապարտեզը:

«Կարելի է ասել, հասունացել է այն պահը, որ սկսենք շահույթով աշխատել», – անկեղծանում է տնօրենը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վերականգնվում, թե՛ վերանորոգվում է Որոտնավանքի տաճարը

Եկեղեցաշինություն

Որոտնավանքում սեպտեմբերի սկզբից սկսվել են ռեստավրացիոն աշխատանքներ, որ ավելի ճիշտ կլինե՞ր անվանել «ռեմոնտ»: Միանգամից պարզաբանեց, թե ինչու «ռեմոնտ», այլ ոչ թե ռեստավրացիա: Նախ՝ ռեստավրացիայի համար պետք է գտնել այն քարը, որով ի սկզբանե կառուցվել է եկեղեցին, իսկ Որոտնավանքի տաճարը վերականգնելու համար այս պահի դրությամբ հիմնականում օգտագործվում է Շաքեի բազալտը: «Քարերը կանայական ենք ընտրում. երբ հին քարը չենք գտնում, նորն ենք դնում», – անկեղծանում է վերա-

կանգնող վարպետ Արարատ Գրիգորյանը: Մշակույթի նախարարի խորհրդակցական Ստեփան Ղազարյանն այս հարցի վերաբերյալ ասաց. «Նոր քար օգտագործելը միանգամայն օրինաչափ էրեւույթ է, քանի որ շատ հաճախ հին քարը չենք գտնում: Եթե հաջողվում է հողից դուրս բերել վանքից թափված քարերը, ապա վերաշարում ենք, եթե ոչ՝ ստիպված օգտագործում ենք փոխարինող քարեր: Որոտնավանքը մաս-մաս ենք վերականգնում, հնարավոր է, որ քարերի գույնի, ձեւի տարբերություն լինի»:

Որոտնավանքում աշխատող շինարարները, ցավոք, անորակ աշխատանքներ կատարելու հա-

րուստ փորձ ունեն: Նրանք ժամանակին մասնակցել են Վահանավանքի, Հալիծորի բերդի ռեստավրացիոն աշխատանքներին: Վարպետը, բարեբախտաբար, այլ կերպ է մտածում. «Ծանր եւ պատասխանատու աշխատանք է, որ պիտի զգուշությամբ կատարենք: Ռեստավրացիան ավանդական շինարարությունից տարբերվում է իր բարդությամբ, առանձնակի նրբություններով. բացի դրանից՝ այս ամենը կատարվում է հայ ազգի ու նրա պատմության համար, ուստի պիտի անուր լինի, որ դիմանա դարերին»:

Հաշվի առնելով Հալիծորի բերդում, Վահանավանքում կատարված՝ ակնհայտ թերություններով աշխատանքները՝ նախարարի խորհրդակցանից փորձեցինք ճշտել, թե որքանով է երաշխավորվում աշխատանքի որակը. «Բնական է, որ թերություններ աշխատանքում կլինեն, որ ասեմ՝ ամեն ինչ կատարյալ է արվում, ճիշտ չի լինի, իսկ շինարարների հարցում հաճախակի են խնդիրներ առաջանում, քանի որ մասնագիտացված վարպետներ չկան»:

Ամեն տարի Որոտնավանքում որոշակի վերականգնողական աշխատանքներ են կատարում. կոնկրետ 2014թ. համար նախատես-



վել է տանիքի վերականգնում, որի համար տրամադրվել է 9.5 մլն դրամ: Նախկինում նման աշխատանք մարզում կատարում էր «Չանգեզուր արվեստանոց» ՓԲԸ-ն: Ներկայումս հանրապետությունում նմանատիպ աշխատանքները կենտրոնացված են եւ իրականացնում է ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության «Հուշարձանների վերականգնման կենտրոն» ՓԲԸ-ն (տնօրեն՝ Գագիկ Եգանյան):

...Փորձեցինք կապ հաստա-

տել պատասխանատու շինարար Սպարտակ Հարությունյանի հետ, բայց նա չպատասխանեց մեր հեռախոսազանգերին: Ի դեպ, եւ Հալիծորի բերդի, եւ Վահանավանքի վերականգնման ընթացքում նույն Սպարտակ Հարությունյանին դժվարությամբ հանդիպեցինք, բայց դա չի խանգարում, որ նման մրցույթներում մշտապես նա հաղթող ճանաչվի:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ. «Վերականգնենք համապեղ աշխատանքի նախկին տեմպը»

Վ Տարածքային կառավարում

Հոկտեմբերի 7-ին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը մարզպետարանի նիստերի դահլիճում անցկացրեց իր վերանշանակումից հետո առաջին մարզխորհրդի նիստը:

Առաջին ելույթ ունեցողը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Սյունիքի մարզային գործակալության պետ Վոլոդյա Գրիգորյանն էր, ով խոսեց մարզում գյուղատնտեսական համատարած հաշվառման ելույթի ու դրա անցկացման նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին: Այն անց է կացվում ողջ հանրապետությունում տասը տարին մեկ անգամ եւ այս տարի կիրականացվի հոկտեմբերի 11-31-ը: Դրա համար ստեղծվել են համապետական եւ մարզային հանձնաժողովներ: Սյունիքի մարզում կազմավորվել են 6 հաշվառման եւ 243 հաշվային տեղամաս: Դրանք նաեւ մարզկանց ապահովել են ժամանակավոր աշխատանքով. ձգտել են ընդգրկել հիմնականում գյուղական համայնքի բնակիչների, ովքեր այժմ համապատասխան ուսուցում են անցնում:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ Արթուր Հարությունյանն անդրադարձավ Սյունիքում քաղաքացիական պաշտպանության համակարգի կատարելագործմանն ուղղված միջոցառումներին ու խնդիրներին: Արթուր Հարությունյանը նշեց, որ սեպտեմբերին Սյունիքում պիտի բացվեր ՀՀ-ում 2-րդ մարզային ճգնաժամային կենտրոնը: Արդեն վերանորոգվել եւ պատրաստ է համապատասխան տարածքը, սակայն ֆինանսների բացակայության պատճառով ուշանում է ապրքավորումների ձեռքբերումը: Դրա բացումից հետո Սյունիքում կգործի նաեւ 911 ծառայությունը, որին կարող են զանգահարել մարզի բոլոր տարածքներից. հիմա այդ զանգերն ընդունում եւ մարզային

փրկարարական ծառայությանն են փոխանցում մայրաքաղաքից, որի պատճառով արձագանքը հաճախ ուշանում է:

Նշելով, որ երաշտի պատճառով այս տարի հրդեհների դեպքերը բավականին շատ էին, Ա.Հարությունյանը հայտնեց, որ հրդեհաշիջման աշխատանքների արդյունավետության բարձրացման համար նախատեսվում է 2015-ից ստեղծել հրշեջ կամավորական-փրկարարական շարժում եւ մինչ մասնագետների տեղ հասնելը հրդեհներին արագ արձագանքելու համար համայնքներում ունենալ հրդեհաշիջման հենակետեր: Դրանք ներկայումս փորձում են ներդրել Գորայք, Շինուհայր, Շիկահող համայնքներում: Ոլորտի խնդիրներից վարչության պետը նշեց համայնքներում հակահրդեհային հիդրանտների բացակայությունը (որոնցից հրշեջ մեքենաները պետք է ջուր լիցքավորեն), պատերազմական վիճակների համար կարելու ազդարարման համակարգի՝ լարայինից բջջայինի անցման անհրաժեշտությունը, բնակավայրերում ապաստարանների խիստ սակավ քանակը:

Մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքման ընթացքի մասին զեկուցեց մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Թադեոս Ղազարյանը: Իսկ գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանը ներկայացրեց 2014-ի բերքահավաքի արդյունքները, գյուղատնտեսական աշխատանքների, համայնքներին բաշխված պարարտանյութի, սերմացուի եւ դիզելային վառելիքի գումարների հավաքման ընթացքն ու խնդիրները:

Ի դեպ, մարզպետ Սուրեն Խաչատրյանը զարմանքով էր նկատում, որ յուրաքանչյուր ելույթից հետո հավաքվածներից ոչ ոք հարցեր չունեի զեկուցողներին. «Մի՞թե բոլորիդ մոտ ամեն ինչ կարգին է...»:

Անդրադառնալով Ս.Թանգյանի հնչեցրած թվերին, թե ստացած սերմացուի դիմաց գյուղացիներից

դեռեւս չի հաջողվել հավաքել 22 մլն դրամ գումար՝ մարզպետը հետաքրքրվեց գյուղացիներից՝ ինչու չեն հողագործները վճարում, եթե արդեն հավաքել ու իրացրել են հացահատիկը, եկամուտ ստացել, այդ ժամանակ միայն բողոք լսվեց, թե ալրադացներն այժմ ցորեն չեն մթերում: Սուրեն Խաչատրյանը հանձնարարեց գյուղվարչության պետին ուսումնասիրել հարցը, հորդորել մթերողներին ցորեն ընդունել մարզի գյուղացիներից ու իրեն ներկայացնել չընդունողների ցանկը:

Մարզպետարանի ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչության պետ Սեյրան Ավետիսյանն իր ելույթում պատմեց մարզի համայնքներում 2014թ. առաջին կիսամյակում իրականացված վարչական հսկողության, հայտնաբերված խախտումների եւ խնդիրների մասին:

Սյունիքի եւ Շաքեի գյուղապետերն էլ անդրադարձան այդ համայնքներում գյուղատնտեսական համատարած հաշվառման աշխատանքներին, համայնքային բյուջեների կատարմանը, ընթացիկ տարում կատարած աշխատանքներին ու առաջնահերթ լուծման կարիք ունեցող խնդիրներին:

Եզրափակելով մարզխորհրդի նիստը՝ մարզպետ Սուրեն Խաչատրյանը նշեց, որ ինքը համայնքների եւ մարզային ենթակայության կազմակերպությունների հետ ունի բավականին երկար տարիների աշխատանքային փորձ, բոլորը ծանոթ են իր աշխատանքի շրջանին եւ կոչ արեց շարունակել աշխատել նախկին տեմպերով: Նա վրդովմունք հայտնեց վարչական ստուգումների արդյունքում համայնքներում հայտնաբերված խախտումների, համայնքների բյուջեների չկատարման, որոշ հարկատեսակների գծով համայնքներում գրոյական մակարդակի համար եւ կոչ արեց մինչեւ հոկտեմբերի 20-ը հավաքել սեփական եկամուտների՝ հնարավորինս հասցնելով 100 տոկոսի: Մարզպետը պատրաստակամությամբ հայտնեց բոլոր համայնքապետերից լսելու համայնքների խնդիրների մասին:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ



Ազգարակի քաղաքի դպրոցի հիմնադրող-գրադարանը, որ նաեւ քաղաքային գրադարան է: Լուսանկարում՝ գրադարանավարուհի Վերգինե Մուրադյանը

Նշվեց գրադարանավարի օրը

Վ Տոնացույց

2004թ. ապրիլին ՀՀ կառավարության որոշմամբ հոկտեմբերի 7-ը հայտարարվեց Գրադարանավարի օր: Տոնի խորհուրդը գրքի արժեքներում է, նրա դերակատարության կարևորումն առողջ հասարակություն ձեռավորելու, մարդը սերնդին դաստիարակելու գործում:

Հինգ տարի է՝ կառավարության որոշմամբ հոկտեմբերի 7-ին նախորդող շաբաթ օրը պարտադիր կազմակերպվում է գրադարանային երեկո: Այս տարի՝ հոկտեմբերի 4-ին, Կապանի մարզային եւ քաղաքային գրադարաններում մեկնարկվել է բազմաբովանդակ միջոցառումների շարք, որտեղ ընդգրկվել էին թե՛ աշակերտներ, թե՛ ընթերցասեր այլ կապանցիներ: Մինչեւ ուշ երեկո Կապանի ակունքագրադարանային միավորման տարբեր մասնաճյուղերում տեղի ունեցան տարբեր խորագրերով գրական երեկոներ, գրույցներ, մեծարման երեկո (հանդիպում Հայրենական մեծ պատերազմի վետերան Աշոտ Դավիթյանի հետ): Երեխաներն արտասանեցին Եղիշե Չարենցի, Պարույր Սեակի եւ այլ նշանավոր գրողների բանաստեղծությունները, պատմեցին իրենց ընթերցած գրքերի մասին:

Ներկաները շնորհավորեցին գրադարանավարներին տոնի կապակցությամբ եւ կարեւորեցին կատարած աշխատանքը՝ հատկապես շեշտելով այն միտքը, որ նրանք յուրատեսակ օղակ են ընթերցողի եւ գրքի միջեւ:

«Սյունիքի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ի «Հանդիպման վայրը՝ գրադարան» խորագրով գրադարանային երեկոյի միջոցառումների շարքը մեկնարկեց մանկական բաժնից: Կապանի N 3 միջնակարգ դպրոցի 4-րդ դասարանի աշակերտները (դասվար՝ Նաիրա Դավթյան) եւ Կապանի N 7 հիմնական դպրոցի աշակերտները կազմակերպել էին գրական-երաժշտական համադրույթ, որի ընթացքում մեծարեցին գրադարանավարին, բանաստեղ-

ծություններ եւ ասույթներ հնչեցրին գրքի մասին, երաժշտական հաճելի համարներ պարզեցրին հանդիսատեսին: Այնուհետեւ գրադարանի տարբեր բաժիններում անցկացվեցին գրքային ցուցահանդեսներ, գրական-երաժշտական երեկոներ, ներկայացվեցին փոքրիկ մանրապատումներ, բեմականացումներ:

Սյունիքի մարզային գրադարանի մասնագիտական աշխատանքների գծով կոորդինատոր Ավարդ Մովսեսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին՝ գրադարանավարի գործն արժեւորելու համար եւ գիրքը սիրելու ու աչքի լույսի պես պահպանելու կոչ արեց երեխաներին: Նա նշեց, որ գրքի հանդեպ հետաքրքրությունը չպետք է մարի, քանի որ համացանցից միշտ չէ, որ կարելի է հուզող հարցերի լիարժեք պատասխան ստանալ:

Սյունիքի մարզի բոլոր գրադարաններում այս օրերին կազմակերպվել են նմանատիպ միջոցառումներ, որոնց առանցքը նույնպես գիրքն էր ու գրադարանավարը: Մասնավորապես՝ Գորիսի գրադարանների վարիչ Ջոյա Գալստյանը նշեց, որ, գրքային ցուցահանդեսից եւ գրական երեկոներից բացի, Թարգմանչաց տոնին նվիրված միջոցառում են անցկացրել, որին մասնակցել են Գորիս քաղաքի ուսանողներ եւ աշակերտներ: Սիսիանի գրադարանների սպասարկման բաժնի վարիչ Ալմաստ Պետրոսյանի տեղեկացմամբ՝ անցկացվել է գրական երեկո, նախատեսվում է Սիսիանի երաժշտական դպրոցի հետ համատեղ Կոմիտասի 145-ամյակին նվիրված գրական-երաժշտական ցերեկույթ անցկացնել: Մեղրու եւ Ազարակի գրադարաններում նույնպես անցկացվեցին նմանատիպ միջոցառումներ ու հանդիպումներ:

Նշենք, որ Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի կողմից տոնի առթիվ պատվոգրերի արժանացան Կապանի ակունքագրադարանային միավորման գրադարանավարներ Լուսինե Վարդապարյանը, Մարինե Կարապետյանը, Ռուզաննա Գալստյանը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Անհայտ հնավայրեր են գտնվել

Վ Պեղումներ

Հայ-եհական արշավախումբը Մեծամորում ու Ջորաց քարտեղում (Քարահունջ) պեղումներ է իրականացրել ու մ.թ.ա. 1-ին հազարամյակին վերաբերող մինչ այժմ անհայտ հնավայրեր է բացահայտել: Այդ մասին հայտնել է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գիտական գծով տնօրենի տեղակալ, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Փիլիպոսյանը: Վերջինիս խոսքով՝ այդ պեղումները թույլ են տալիս ասել, որ գործ ունենք սոցիալական ոչ ցածր խավի բնակավայրի հետ, ինչը ենթադրում է, որ այն քաղաք է եղել: «Հուշարձանն իսկապես հետաքրքիր է, մենք մի մասն ենք պեղել», – ասել է Փիլիպոսյանը:

13 նոյեմբեր
www.armtimes.com



Կենսաբանության պրոֆեսորը Եղվարդից

Սյունցիները մայրաքաղաքում

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո երկրում որոշ ժամանակ դեռևս ակնառու էր գրկանքներով լի կյանքը:

Թերսնման հետևանքները մեղմելու համար գյուղական խանութներում վաճառում էին քուսակ կոչված խտացրած կերը, որն իր տեսքով նման էր փայտի թեփից պատրաստված տախտակի:

Քուսակ ոչ բոլորին էր հաջողվում մարսել: Այդ տարիներին սովն արագ վերացնելու համար ժողովուրդն անմնացորդ աշխատում էր կոլտնտեսության տարբեր ճյուղերում: Ամսան չէին նաեւ երեխաները, անգամ անչափահասները: Նրանք պետք է հավաքեին արտերում ու ճանապարհներին թափված հասկերը եւ հանձնեին կալտոններին, պահեին սեփական ու կոլտնտեսության գառները, կատարեին տարբեր հանձնարարություններ, իսկ սեպտեմբերին նոր տրեխներ հագած, չանթայում մի կտոր հաց դրած հաճախեին դպրոց: Փաստորեն գյուղի երեխաներին խորք էր մանկական անհոգությունը:


Գյուղի երեխաներին հատուկ էր լինել գյուղի տարածքի բոլոր մասերում, օգտվել բնության բարիքներից, խնել աղբյուրների գուլալ ջրերից եւ երազել, երազել անհոգ եւ կուշտ օրերի համար: Իր հասակակիցների մեջ էր նաեւ գանգրահեր, շարժունակ, միաբարձու Սլավիլը: Գյուղում ոչ ոքի մտքով չէր անցնում, որ նա կրառնա անվանի գիտնական, դոկտոր, պրոֆեսոր եւ գիտության թեկնածուի ատենախոսությունը կապալտապանի Թիֆլիսիում, այն էլ օտար լեզվով: Նրա թեկնածուական եւ հետազայում դոկտորական թեզը եւ աշխատանքը նվիրված էին շրջակա միջավայրի պահպանմանը, նոր սորտերի ստեղծմանը, հողի՝ որպես կենսապայմանի՝ պահպանմանը, ճիշտ օգտագործմանը...

1963թ. հարթահարեղով մեծ մրցույթը՝ ընդունվել է Երեւանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը: Մասնագիտությանը համընթաց պետք է տիրապետեր ռուսերենին, անգլերենին եւ լատիներեն տերմինաբանությանը:

Ցուցաբերելով աներեւակայելի աշխատասիրություն, կամք, համառություն, իրեն գրկելով ուսանողին հատուկ հաճույքներից, հաղթահարեց բոլոր խոչընդոտները: Ուսումնառության տարիներին հաճախ հունդրով կրկնում էր Գոռ Մարզպետունու խոսքը. «Սուրս պատյան չեն դնի մինչեւ վերջին հազարացուն դուրս չընեն մեր երկրից»: Ասել կուզի՝ գյուղ չեն գալու մինչեւ վերջնակետին չհասնեն:

Շատ ակտիվ էր քաղաքական իրադարձությունների հանդեպ, Եղվարդի պաշտպանության օրերին ներկայացել եւ հեթոթապահել է դիտակետերում, դիրքերում:

Վերջերս նրան հանդիպեցի Մեղրի գնալիս: Պարզվեց, որ հետաքրքրվում է շրջակա միջավայրի հիմնախնդիրներով եւ որպես կոնսուլտանտ-գիտնական տեղում ուսումնասիրում է իրավիճակը՝ համապատասխան առաջարկներ ներկայացնելու համար: Տեղյակ է «Սյունյաց երկրի» հետեւողական թողարկումներին եւ հնարավորինս կհամագործակցի թերթի հետ:



Սլավիկ Հարությունյանը ծնվել է 1944թ. օգոստոսի 9-ին Գյումրիի մարզի Կապանի շրջանի Եղվարդ գյուղում: Յոթնամյա կրթությունը ստացել է գյուղում: 1961թ. ավարտել է Քաջարանի Խ.Ա. Բովսևի անվան միջնակարգ դպրոցը: 1963թ. ընդունվել է 1968թ. ավարտել է Երեւանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը «Բիոքիմիա» մասնագիտությամբ: Համալսարանն ավարտելուց հետո 1968-1970թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1972-1974թթ. սովորել է ավարտել է Հայաստանի կոմկուսի Երեւանի քաղկոմի առընթեր մարքսիզմ-լենինիզմի համալսարանի փիլիսոփայության բաժինը: 1970-1993թթ. աշխատել է խաղողագործության, զինգործության եւ պտղաբուծության գ/ի ինստիտուտում որպես կրտսեր, ապա ավագ գիտաշխատող: Համատեղությամբ երկու տարի (1973-74թթ.) դասավանդել է նաեւ քիմիա՝ միջնակարգ դպրոցում: 1984թ. վերապատրաստվել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանում: Կամավորական ջոկատների կազմում մասնակցել է Ջանգեզուրի եւ Ղարաբաղի պաշտպանությանը: 1993թ. աշխատել է ԳՀ ԳԼ հողագիտության, ագրոքիմիայի եւ մելիորացիայի գիտական կենտրոնում որպես ավագ, այնուհետեւ առաջատար գիտաշխատող: 2003 թվականից մինչեւ օրս աշխատում է Հայաստանի պետական ագրարային համալսարանի ագրոէկոլոգիայի ամբիոնում որպես: Կրեդիտային համակարգի ուսումնական ծրագրերին ծանոթանալու եւ փորձի փոխանակման նպատակով 2004թ. եղել է Գերմանիայի, Ավստրիայի եւ Ֆրանսիայի ագրարային համալսարաններում:

1979թ. Թիֆլիսիում պաշտպանել է թեկնածուական թեզ «Կոմպլեքս պարարտանյութերի արդյունավետությունը Արարատյան գոգահովտի նախալեռնային գոտու խաղողի տնկարկներում» թեմայով: 2002թ. Երեւանում պաշտպանել է դոկտորական թեզ «Հանքային պարարտանյութերի հիմնական սննդատարրերի փոխակերպումը Հայաստանի բազմամյա տնկարկներում» թեմայով: Ունի 75 գիտական աշխատություն, 4 մեթոդական ցուցումների ուղեցույց, 1 լաբորատոր-գործնական պարապմունքների ուսումնական ձեռնարկ (երաշխավորված ԳՀ կրթության եւ գիտության նախարարության կողմից որպես բուհական ձեռնարկ) եւ ավելի քան 100 վերլուծական, լրագրային հոդված: Հեղինակ է դասագրքի՝ «Շրջակա միջավայրի մոնիտորինգ», 450 էջ, որը երաշխավորված ԳՀ ԿԳԼ կողմից որպես բուհական դասագիրք, համահեղինակ է «Շրջակա միջավայրի պահպանություն» դասագրքի եւ ուսումնական ձեռնարկի:

Սլավիկ Հարությունյանը 2006-2008թթ. որպես ավագ գիտաշխատող մասնակցել է ագրոէկոլոգիայի ամբիոնի կողմից կատարվող ՏՇ 38397-06-02 միջազգային գիտական ծրագրին: 2005 թվականից մինչ այժմ ԳՊԱՀ-ում գործող ատենախոսությունների պաշտպանության 011 (Ագրոնոմիա) մասնագիտական խորհրդի անդամ է եւ 2005-2010թթ. եղել է այդ խորհրդի գիտական քարտուղարը: Սլավիկ Հարությունյանը Հայաստանի պետական ագրարային համալսարանի գիտական խորհրդի անդամ է: Նրա ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել Իրանի Իսլամական Հանրապետության 3 հեռակա ասպիրանտ: Ներկայումս ղեկավարում է 3 ասպիրանտի: 2012թ. մարտի 2-ին Սլավիկ Հարությունյանին շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:

Նրա հետազոտությունները հիմնականում նվիրված են տարբեր մշակաբույսերի հանքային սննդառության գործընթացների ուսումնասիրությանը, հիմնական սննդատարրերի շրջապտույտին, բույսերի կողմից նրանց յուրացման եւ կենսաքիմիական փոխակերպման մեխանիզմներին, էկոլոգիական բնույթի խնդիրներին:

Ամուսնացած է, ունի 2 երեխա:

Մեկ անգամ եւս համոզված եմ, որ իսկական գիտնականը հառնում է հողից, այն ուժ ու եռանդ է ներարկում մարդուն, եւ իր նկատմամբ տածած հարգալից վերաբերմունքը հողը կհատուցի բազմապատիկ անգամ: Անտարակույս, Սլավիկ Հարությունյանը հայրենի հողի անաղարտության նվիրյալներից է: Ցանկանանք նրան գիտական նոր նվաճումներ: ԼՐԿԱԴԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Ուսուցիչները պարզեւարվեցին շնորհակալագրերով

Հոկտեմբերի 5-ը՝ որպես Ուսուցչի օր, հռչակվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 1994թ.: 1966թ. այդ օրն էր, որ Փարիզում ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ Աշխարհի միջազգային կազմակերպության կողմից հրավիրված համադեղ կոնֆերանսում ընդունվել է «Ուսուցչի կարգավիճակի հետ կապված ուղեցույց» վերաբերյալ փաստաթուղթը, որն էլ դարձել է ուսուցիչների աշխատանքը կարգավորող առաջին միջազգային փաստաթուղթը: Հայաստանում Ուսուցչի օրը մինչեւ վերջերս նշվում էր հոկտեմբերի առաջին կիրակի օրը, սակայն «ՀՀ տոների ու հիշատակի օրերի մասին» օրենքում ԱԾ-ի կողմից լրացում կարարելով պաշտոնական տոնացույցում ամրագրվեց հոկտեմբերի 5-ը: Տոն, որ հերթական առիթ է արժեւորելու այն մարդկանց, ովքեր իրենց անմասնորոշ նվիրումն աշխատանքում:

Ուսուցչի օրվա առթիվ մատաղ սերնդին ազգային գաղափարախոսության ոգով դաստիարակելու գործին անմասնորոշ նվիրումն համար ԳՀ վարչապետի հուշանվագով արժանացավ Մեղրու N2 միջնակարգ դպրոցի տնօրեն Սերի Հակոբյանը, ԳՀ վարչապետի շնորհակալագրի արժանացավ Եվելինա Թադևոսյանը (Սիսիանի N2 հիմնական դպրոց), ԱԾ նախագահի պատվոգրերի արժանացան Վարսենիկ Վարդանյանը (Լեհվազի միջնակարգ դպրոցի տնօրեն), Գայանե Ավագյանը (Գորիսի N 3 հիմնական դպրոցի դասվար), ԿԳ նախարարի պատվոգրերի՝ Լերա Վարդանյանը (Գորիսի N 6 հիմնական դպրոց), ԿԳ նախարարի շնորհակալագրերի՝ Վալենտինա Բալայանը (հնձորեսկի միջնակարգ դպրոցի տնօրեն), Արուս Դազարյանը (Կապանի N 10 միջնակարգ դպրոցի տնօրեն, ով որպես ուսուցչուհի արժանացավ շնորհակալագրի), Եմիլյա Քոչարյանը (Կապանի N 6 մանկապարտեզի դաստիարակ, ով «Բնության փոքրիկ բարեկամ դաստիարակելու» անվանակարգից բացի՝ ստացավ հեռուստացույց):

Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճի ճեմասրահում ԱԾ փոխնախագահ Հերմինե Նաղդյանը, Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը շնորհավորեցին ուսուցիչներին:

Հերմինե Նաղդյանը շեշտեց այն հանգամանքը, որ ուսուցչի աշխատանքը, ի տարբերություն այլ բնագավառների, ամենուրեք է եւ ընդմիջ: Նա ուսուցչի աշխատանքը համարեց անմնացորդ նվիրում, եւ քանի դեռ հայ ազգն ունի այսպիսի ուսուցիչներ, ոգու սով երբեք չի գգա: Մարզպետն իր շնորհավորական ուղերձում մասնավորապես նշեց. «Եկեք տարվա բոլոր օրերից տարբերակեք այս գեղեցիկ օրը՝ Ուսուցչի տոնը, տարբերակեք միմյանց սիրելու, գնահատելու, մեծարելու եւ ոգեպնդելու պարզ ցանկությունը: Ձեր տաք ձեռքերում են եւ մեր անցյալը, եւ այս օրը, եւ մեր ապագան: Բոլորիդ տոկունության, կամքի, հավատի բազմապատկում են մաղթում՝ ձեր ազգանվեր, շատ կարևոր եւ անգնահատելի աշխատանքում»:

Տոնի առթիվ հարյուրավոր ուսուցիչներ կրթության բնագավառում ներդրած ավանդի, մատաղ սերնդի դաստիարակության գործում ունեցած վաստակի, մանկավարժական երկարամյա աշխատանքի եւ Ուսուցչի օրվա կապակցությամբ Սյունիքի մարզպետի կողմից արժանացան շնորհակալագրերի:

Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը նույնպես Ուսուցչի օրվա կապակցությամբ պատվոգրեր հանձնեց ուսուցիչներին: Նա իր շնորհավորական ուղերձում մասնավորապես նշեց. «Բոլոր ժամանակներում մեր ազգի անասան հիմքը եղել են դպրոցն ու ուսուցիչը: Ձեր շնորհիվ է գոյատևում ազգը: Դուք եք սերմանում հայրենասիրություն եւ նվիրվածություն, մեծ համբերությամբ, անձնվեր աշխատանքով, ինքնաճանաչ նվիրումով կրթում ու դաստիարակում սերունդներին, նրանց փոխանցում ձեր գիտելիքներն ու հմտությունները՝ յուրաքանչյուր աշակերտի մեջ թողնելով ձեր մի մասնիկը եւ դրանով իսկ դառնում նրա կյանքի անբաժանելի ուղեկիցը: Մի շտ եղեք բարի ու համբերատար, եղեք այնպիսին, որ ձեր սաները միշտ հիշեն ու հպարտանան ձեզանով»:

Այնուհետեւ՝ Սյունիքի մարզպետարանի եւ ԳՀ Սյունիքի տարածքային կազմակերպության կողմից կազմակերպվել էր միջոցառում՝ Արամ Մերանգուլյանի անվան ժողգործիչների անսամբլի երգչուհի Գոհար Խաչատրյանի հաճելի կատարումներով:

ԼՐԱՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մրցագորգին ագարակցի պատանի ըմբիշներն են

Սարգական

Աշխատանքային այցով լինելով Ագարակում՝ քաղաքային Մխիթար Ջաքարյանից հետաքրքրվեցինք, թե վերջին ժամանակներս ինչ նոր բան է կատարվել համայնքում: Մեր գրուցակիցը որոշ գործեր թվարկեց, բայց հատկապես ընդգծեց, որ տասը ամիս է, ինչ Ագարակում ազատ ոճի ըմբշամարտի սեկցիա է գործում: Ոչ միայն այդ, նաեւ նշեց, որ պատանի ըմբշամարտիկները երկու անգամ մասնակցել են միջազգային մրցուման՝ Բաթումում եւ Գառնիում, ընդ որում՝ վերջին մրցումը կայացել է այս տարվա սեպտեմբերի 15-18-ը, եւ վերադարձել են մեդալով: Ճիշտ է, այդ մեդալը բրոնզի փայլ ունի, բայց քաղաքապետը շատ կարեւորեց այն՝ ասելով, որ դա ապագա հաջողությունների հիմքն է: Գառնիի միջազգային մրցաշարում Տիգրան

Բունիթյանը 2001-2003թթ. ծնվածների պայքարում (թեւեւ ինքը 2006թ. ծնունդ է) կանգնեց պատվո պատվանդանի երրորդ աստիճանին: Դպրոցական ըմբշամարտիկներին մարզում է հանրապետության վաստակավոր մարզիչ, սպորտի վարպետ Յուրա Ավետիսյանը, ում մայրաքաղաքից են հրավիրել: Մոտ 60 ըմբշամարտիկ է պարապում սեկցիայում, որ գործում է Քաջարանի մանկապատանեկան մարզադպրոցի ենթակայության ներքո: Ընդ որում՝ 6 երեխա հաճախում է Մեղրուց, չորսը՝ Կարճեւանից: Փոխադրամիջոցի ծախսերը հոգում է Ագարակի կոմբինատի արհեստակցական կազմակերպությունը (նախագահ՝ Սամվել Միքայելյան): Մրցավործ ձեռք բերելու նպատակով նախատեսվում է իրանցի պատանի ըմբշամարտիկների հետ համատեղ ուսումնամարզական հավաք անցկացնել Ագարակում, սպասում են



իրանցիների այցին: Եվ ոչ միայն: Ինչպես տեղեկացրեց մարզիչ Յուրա Ավետիսյանը, իրենց հյուրն է լինելու վերջերս Տաշքենթում աշխարհի չեմպիոն հռչակված ազատ ոճի ըմբիշ Արթուր Ալեքսանյանը: Պատանի ըմբշամարտիկները պարապում են Ագարակի մշակույթի պալատում, առաջին մարզումային պայմանները բավարարում են: Բայց, համայնքապետ Մխիթար Ջաքարյանի վկայությամբ, օրակարգում համայնքում մարզադահլիճ ունենալու խնդիրն է, քանզի մշակույթի պալատում հնարավոր չէ մրցումներ կազմակերպել: Քաղաքի չգործող

կաթսայատունը վերակառուցումից հետո կարող է որպես մարզադահլիճ ծառայել: Առաջին այսպիսի նպատակ ունեն: Իսկ թե ինչու են ընտրել մեծապայքարային մարզաձեւը, քաղաքապետը բացատրում է, որ սահմանում ապրող պատանիները առավել են պիտի առողջ ու ուժեղ մեծանան: «Իսկ հեռանկարային մարզիկներ կան պարապողների մեջ» հարցին, մարզիչը, թեւեւ թվարկեց մի քանի անուն, նաեւ ասաց, որ պետք չէ իրադարձություններից առաջ ընկել, ժամանակն ամեն ինչ իր տեղը կդնի: **ՎԱՅՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

Հուլիանություն առինքնող սոփեր

Գրախոսություն

Անյալը, անշուշտ, անբես փարրալուծվում է ներկայի մեջ եւ ժամանակի անծիր առանցքը դարձնում մշտաբեր ու շարունակական, նրա սլացքն ուղղում ապագային: Տարեցները հուշագրում են՝ չափ ու ձեւի մեջ իմաստավորում երիտասարդ փրկների՝ երբեմնակի անիրական թվացող ընկալումները: Անշուշտ քչերին է հաջողվում քննություն բռնել պարունակյալ ժամանակի փրամբանության մեջ, եւ ըստ այդմ մեր ժամանակների ընթերցողների շրջանում անարբերությունն աչք ծակող է...



Հուլիանությունը սոփեր է հեղինակել բարեհիշատակ գյուտարույնցի Հովհաննես Դուկասյանը (1920-2009): Մեկ դարից տասնամյակով քերատված նրա կյանքի վերլու-

ծականը գտա Դավան-Կապանի գրադարանում (Ջանգակ-97, 2007, 300 օր.): Մեր ժամանակներում առաջնային համարվող, սակայն չբարձրաձայնվող հատկանիշը, իհարկե, առկա է՝ գունաշապիկ ընտիր կազմ, մտորում բորբոքող լուսանկարների հավելվածներ, գրպանում զետեղելի 175 էջ: Ընթերցողի ակամա արթնանում ավետում են երկու անուն. հեղինակի ֆիզիկական տկարության պատճառով սոփերի պատումները գրառել է Գրիշա Սմբատյանը, խմբագրել է երջանակահիշատակ ղոկտոր Վաչիկ Եփրեմյանը: Գրքային ուժ զուլիճը մեղրաշնակում է հեղինակի՝ հայրենի եզերաց սիրահարվածությունը, լայնախոհ աշխարհաճանաչողությունը, մարդուն սիրելու-մեծարելու բարոյապետական կերտվածքը, ընթերցողին գրելու առանձնաշնորհը: «Իմ սերնդի կյանքը դյուրուկ չէր: Զաղաքացիական պատերազմից հանգած օջախներ, թշվառություն,

կոլեկտիվացման դառը պտուղներ, 37 թվական, Մեծ հայրենական ռազմաճակատներ, երկրի փլուզում եւ նոր պատերազմ... Իմ սերունդը, սակայն, չուսահատվեց, չկորցրեց մարդկային նկարագիրը: Եւ է ձեւավորել Կապանի դեմքը»: Այս մեջբերումը, սիրովես, լավագույնս է բնորոշում «Կարծի չորջանս յուր» առինքնող սոփերի բովանդակությունը եւ հուշում, որ այն հավակնում է լինելու կապանցի հայրենագետի ծանրալիճ քրեստոմատիկ նպաստը: Շարադրանքում, ըստ պատեհ ու տրամաբանված տեղի, Հ.Դուկասյանը զետեղել է խորհրդի, պատգամի, ընդհանրացումի, գնահատումի՝ ընդգծման ու մտապահումի արժանի լակոնիկներ, որոնք մեր առաջատար գրադարաններից մեկը, հավատում են, առանձին ցուցադրմամբ կդարձնեն ընթերցողների մշտական սեփականությունը: **ՈՐԲԵՐՏ ԵՋԱՆԱՆՅԻ**

Ք. Մեղրի, Մելիք-Օհանջանյան 9 Ավետական Գրիգորյանին

Սիրելի բարեկամ Ձեզ պատահած դժբախտությունը մեծ վիշտ է պատճառել «Այունյաց երկիր» խմբագրության աշխատակիցներին եւս: Անշուշտ, անկարելի է որեն կերպ սիրով Ձեզ՝ որդեկորույս մորդ: Բայց եւ չենք կարող մեր անկեղծ ցավակցությունը չհայտնել ու Ձեզ չկոչել տոկունության, ճակատագրի ծանր հարվածին դիմակայելու համառության: Միայն այդպես հնարավոր կլինի վառ պահել մեզանից անժամանակ հեռացած Ավետիսի հիշատակը: Համբերություն եւ հույս Ձեր վիստված սրտին:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ 4 հոկտեմբերի 2014թ.

Գարուն Գաբրիելյան

ԽՈՍԷ ՎԻՇԱՍԿԻ

Ճակատագրի կամոք ինչից ուսուցչի օրը իր մահկանացուն կնքեց երկարամյա մանկավարժ, լավագույն բարեկամ եւ ընկեր Գարուն Հայկի Գաբրիելյանը: Ծնվել է 1944թ. Դավիթբեկ գյուղում, յոթամյա կրթություն ստանալուց հետո ուսումը շարունակել է միջնակարգ ավարտել է Կապանի N 2 դպրոցում: Բանակում երեք տարի ծառայելուց հետո սովորել է ավարտել է Քաջարանի շինարարական տեխնիկումը, ապա՝ Կիրովականի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետը: 1973-ից ընկալվել է մանկավարժությանը: Նախ աշխատել է Տանձավերի, Սեւաբարի, ապա՝ Կապանի N 27 գիշերօթիկ դպրոցում: Մինչեւ կենսաթոշակ անցնելը աշխատել է Կապանի N 5 դպրոցում ուսնասվար:

Գարուն Գաբրիելյանը ցուցաբերում էր հմուտ մանկավարժի եւ կազմակերպչի բարձր կարողություններ: Եղել է լավ մանկավարժ եւ ուսուցիչ, սիրվել եւ հարգվել է գործընկերների ու աշակերտների կողմից: Ունի մեկ դուստր, երկու ուսուր եւ թոռնիկներ:

Գարուն Գաբրիելյանի հիշատակը միշտ վառ կնճհ մեր ճանաչողների սրտերում:

Երեսանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի Կապանի մասնաճյուղի կողմից

Այունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀԻՄՆԱԳՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՍ ԱՆԱՆՈՐ» ՍՊԸ

Հասցե՝ Գեորգիտս՝ Կապան, Շահումյան 20/32: (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02: Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում:

Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Ելուբերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԳ» - ԾԱՆՈՒՏՈՒՄ բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

© Ելանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 4 տպագրական մամուլ: Տպարանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 09.10.2014թ.:

ՀԵՆՁԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ Սիսիան, պատմաբան

Որպեղ է ծնվել Տեր-Ավետիսը

ՆՏՍԱԿԵՏ

Դավիթ-Քելի հռչակավոր գորավար Տեր-Ավետիսի ծննդյան վայրի մասին մեր պարմագրության մեջ կա երկու հիմնական տեսակետ: Միայն Հրաչյա Աճառյանն է կարծում, որ նա հալիճորքի է: Մեր ձեռքի փակ եղած մնացած սկզբնաղբյուրները վկայում են, որ նա ծնվել է Բռնակոթում, որ նա Բռնակոթի Ասպուր քահանայի որդին է, բռնակոթյան Ադունց կամ Տեր-Ավետիսյան փոհմի նախահայրն է:

Այդ տեսակետն ամենից առաջ հայտնում է հենց նույն տոհմից սերած աշխարհահռչակ գիտնական Նիկողայոս Ադունցը, ով կրել է նաեւ Տեր-Ավետիսյան ազգանունը: Դուկաս Սեբաստացու «Դավիթ-Քել կամ պատմություն ղափանցոց» աշխատության աշխարհաբարի թարգմանիչ Արշակ Մադոյանը գրքի առաջաբանում ուղղակիորեն նշում է, որ Նիկողայոս Ադունցը հենց Տեր-Ավետիսի թոռնորդին է (տես՝ Դուկաս Սեբաստացու «Դավիթ-Քել կամ պատմություն ղափանցոց», Երեւան 1992թ., էջ 10): Համարյա այդ կարծիքն է հայտնել մեր հայրենակից ակադեմիկոս Մորուս Հասարայանը: Նա գրել է. «Դավիթ-Քելի զինակից Տեր-Ավետիսը, ինչպես ենթադրել է Ն.Ադունցը, կարող է Բռնակոթից լինել» (Մ.Հասարայան, «Պատմահնագիտական ուսումնասիրություններ», Երեւան 1985թ., էջ 150): Բացի դա Տեր-Ավետիսի որդի՝ Աստատուրի գերեզմանը գտնվում է հենց Բռնակոթում: Այդ կապակցությամբ ահա թե ինչ է գրում Սերո խանգադյանը. «Կիր ավերակ եկեղեցու բակում (Կիրոս Բռնակոթի մի թաղամասն է, Հ.Ա.) Ե. Լալայանը տեսել է Աստատուր վարդապետի գերեզմանաքարը՝ ԹՄ. Ռ.Ծ.Ղ./1705): Սա Տեր-Ավետիսի գորավարի հայրն է»: Սերո խանգադյանը, «Հայրենասպասում» Երեւան 1984թ., էջ 296: Նրա թոռների եւ ժոռների մի մասը հետագայում գրվել է Տեր-Ավետիսյան: Նույն տոհմից սերած Արամայիս Սահակյանը կազմել է Տեր-Ավետիսի ստեղծագործը: Ըստ այդ տոհմածառի Տեր-Ավետիսն ունեցել է մեկ տղա՝ Աղաբեկը: Նրանից ծնվել է Կաջատուրը, որն ունեցել է 3 որդի՝ Ադին, Սահակը եւ Աղաբեկը: Նրանցից էլ սերել են Ադունց, Սահակյան եւ Աղաբեկյան տոհմերը: Ադունցների 19-րդ դարից պահպանված միակ տան դարպասի կամարի սալաքարի վրա գրված է. «Այս է տունն բարոն Հովհաննես Առաքելյան Տեր-Ավետիսյանի. 1861»: Չի հիմնավորված Հրաչյա Աճառյանի Տեր-Ավետիսի հալիճորքի լինելու հանգամանքը: Հայտնի է, որ նա եղել է ոչ թե հալիճորքի, այլ՝ Հալիճորի մելիք Փարսադանի փեսան: Իր աշխատության մեջ Դուկաս Սեբաստացին մեկ անգամ թվարկել է Դավիթ-Քելի գորավարներին իրենց թվաքանակով: Առանձին նշվում է Հալիճոր երկրի մելիք Փարսադանի գորավարները՝ բաղկացած 250 մարդուց եւ Տեր-Ավետիսի գորավարները՝ բաղկացած 468 մարդուց: Եթե նա լիներ հալիճորքի, ապա նրա մարտական խումբը կգումարվեր Հալիճորի մարտական խմբին: Չիմնավորված է նաեւ նրա գերեզմանը Այունիցում լինելու կարծիքը, քանի որ ըստ Սեբաստացու, «...Նա հեռանալով երկրից պանդխտեց Գաղտնայան», Դուկաս Սեբաստացի «Դավիթ-Քել կամ պատմություն ղափանցոց», Երեւան 1992թ., էջ 85):